Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Nr. ԴՈՐ ՄԵՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1—2

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԳՐԵՑ

ՍԻՄԷՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1922

891.99.092
Դ-992

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

—

ԱՐԵՒՄՏԱՀԱՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

———

.99.092
-99Z

Nr. ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ 1—2

PD
21717

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՆՐԱ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԵՐԿԵՐԸ

ԳՐԱԳԱՆ-ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ՍԻՄԷՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1922

31.05.2013
67.053

1176-98

Իմ անմոռանալի եղբայր

ԳՐԻԳՈՐ ՑԱԿՈԲԵԱՆԻՆ

Համեստ, հարքաշ, ազնիւ մտաւորական էր նա: Հայրս երբ մեռաւ, նա հազիւ 8 տարեկան էր: Մի փոքրիկ, անշուք սենեակ ունէինք մենք, որի մէջ հօրս դագաղի շուրջը հաւաքուել էին մեր ազգականներն ու դրացիները: Գրիգորը մեր տան կրտսերն էր: Վշտահար մայրս նրան սենեակից հեռացրել էր, որ չտեսնի մեռած հօրս: Եւ մեր փոքրիկ Գրիգորը դուրսը ծիւնի մէջ լաց էր լինում իր մանկական աղիողորմ արցունքներով:

Մայրս նրան "եթիմ" անուանեց: Եւ այդպէս էլ մեծացաւ իմ անմոռանալի Գրիգորը, միշտ զրկանքների, հարքաշութեան, աղքատութեան մէջ:

Աւարտեց Պետերբուրգի համալսարանը, ուսուցիչ եղաւ Գանձակի Գիմնազիայում — բայց միշտ եթիմ մնաց:

Գաւառի չքաւորութեան մտաւորական արտայայտիչն էր նա, իր ծննդով եւ իր ողջ կեանքով:

Եւ 1920 թուին, 32 տարեկան հասակում՝, բախտի մի զարհուրելի թիւրիմացութեամբ, զոհ գնաց նա, այդ անմեղ, պատուական երիտասարդը:

Ոչ ոքի չեմ՝ մեղադրում այս սարսափելի իրողութեան համար:

Պատմական արիւնահեղ ընդհարումների մէջ շատ յաճախ անմեղներն են զոհւում՝ մի անընմբռնելի ճակատագրականութեամբ:

Գրիգորն էլ եղաւ մէկը բազմաթիւ անմեղների շարքում՝:

Չգիտեմ՝, կը դադարի՞ երբ եւ է այս կսկիծը իմ՝ լքուած հոգում՝, կը մեղմանա՞յ մի օր նրա թողած մորմոքը իմ՝ սրտում՝, թէ ոչ:

Բայց այս աշխատութիւնը սկզբից մինչեւ վերջ ես գրել եմ՝ իմ՝ անմոռանալի Գրիգորի կսկիծով, եւ նուիրում՝ եմ՝ այն նրա թանգագին յիշատակին:

ՏԱՐԱԲԱԽՏ ԵՂԲԱՑԻՐ

Վիեննա, Փետրուար 1922:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

I.

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Մեղանից յիսուն տարի առաջ, 1872 թուականի Յունուար 21ին, Կ. Պոլսի Իսկիւտար թաղում, մեռաւ Պետրոս Դուրեան։

Ընդ ամէնը քսան տարեկան երիտասարդ էր նա, գրեթէ պատանի, որին ճանաչում եւ գնահատում էր մասամբ իր թաղի եւ իր հասակակից երիտասարդութիւնը։ Դրսի աշխարհին, հայութեան միւս շրջաններին, անգամ Արեւմտահայ գրականութեան յայտնի չէր Պետրոս Դուրեանի անունը։

Նրա սրտայոյզ բանաստեղծութիւնները, Նրա թատերագրութիւնները լոյս են տեսնում բանաստեղծի մահից յետոյ, նոյն 1872 թուականին, Իսկիւտարի ընթերցասէրների ընկերութեան հրատարակութեամբ։

Եւ այդ թուականից սկսած Պետրոս Դուրեանի հոչակը հետզհետէ տարածւում է աւելի ու աւելի հեռու։ Ճանաչում է նրան ողջ Կ. Պոլիսը, ճանաչում է Կովկասի հայութիւնը,

ճանաչում են գաւառները եւ հեռաւոր գաղութները։ Կարելի է ասել, այս կէս դարեան տեւողութեան ընթացքում, չի անցնում մի հինգամեակ կամ մի տասնամեակ, որ Պետրոս Դուրեանի գրական համբաւը եւ բանաստեղծական փառքը աւելի եւս չտարածուի ու չխորանայ։

Հայութեան շրջաններից զատ՝ նրան սկսում են ճանաչել նաեւ Եւրոպական մեծ ժողովուրդները եւ գրականութիւնները։ Նրա բանաստեղծութիւնները թարգմանւում եւ գնահատւում են Ռուսաստանում՝ Իւրի Վեսելովսկու[1] եւ Վալերի Բրիւսովի[2] ձեռքով, Գերմանիայում՝ Ռորբախի[3] եւ Լայստի[4] աշխատութեամբ, Ֆրանսիայում՝ Մինաս Չերազի[5] եւ Արշակ Չօպանեանի[6] ջանքերով, Հիւսիսային Ամերիկայում՝ Ալիս Բլէքուէլի[7] շնորհիւ, Ռուսիայում՝ Հ. Նազարեանի, Լուչինիի եւ Նիտտիի[8] աշխատակցութեամբ։ Եւ ամէն տեղ, որտեղ հրատարակւում են Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները, հիացմունք եւ ոգեւորութիւն են առաջ բերում։

1 Ю. Веселовскій, „Армянская Поэзія въ XIX вѣкѣ“.
2 В. Брюсовъ, „Поэзія Арменіи“. Москва 1918.
3 P. Rohrbach, „Armenien“, Beiträge zur armenischen Landes- und Volkskunde. Stuttgart 1919.
4 A. Leist, „Armenische Dichter“. Leipzig 1898.
5 M. Tcheraz, „Vie et poésies“ („L'Arménie“ թերթի մէջ). 1894—1896.
6 A. Tchobanian, „La Pléiade“ ամփոփիր եւ „Poèmes arméniens“. Paris 1902.
7 A. Blackwell, „Armenian Poems“. Boston 1917.
8 Nazarian-Nitti, „Petros Durian“. Bari 1915.

Արտասահմանեան գրագէտները Դուրեանի բանաստեղծական անձնաւորութեան մէջ տեսնում են մարդկութեան մի ազնիւ ու խորունկ զգացող, որ իր զգացումները արտայայտում է հայերէն լեզուով։ Պետրոս Դուրեան օտար չէ նրանց համար։ Նա նրանց եղբայրն է եւ նրանց հարազատը։ Նա արտայայտում է սիրող եւ տանջուող մարդու յաւիտենական ողբերգութիւնը։ Իսկ այս ողբերգութիւնը յատուկ է ոչ միայն հայ ժողովրդին, այլ եւ բոլոր ժողովուրդներին հաւասարապէս։ Ահաւասիկ Դուրեանի գոյութեան եւ բանաստեղծական տեւողութեան գլխաւոր հիմունքներից մէկը, եւ թերեւս ամենագլխաւորը։

Իտալացի Լուչինի, Հրանտ Նազարեանին գրած իր մի նամակի մէջ ասում է ի միջի այլոց հետեւեալը — "Դուրեանը ինձ համար Ալֆրէդ դը Միւսէ չէ, այլ Լէօպարդին է, մեր մեծ Լէօպարդին... Այդ դժբախտ հայ բանաստեղծը նման է իր հեռաւոր եղբօրը, Իտալացի Ջիակոմո Լէօպարդիին, զգացումներով, բնաւորութեամբ, ճակատագրով[1]"։

Բայց մէկ ուրիշը նրան կարող է նմանեցնել Լամարտինին, Ալֆրէդ դը Միւսէին, մէկ ուրիշը Շելլիին, երրորդը Հայնէին, Նովալիսին եւ այդպէս շարունակ։ Մարդկային հոգին իր հիմնական գծերով միեւնոյն է ընդհանրապէս — եւ այդ հոգու տաղանդաւոր ստեղծագոր-

1 Petros Durian, Poeta Armena, Nazarian-Nitti. Bari 1915.

ծողները առաւել կամ նուազ նման կը լինին միմեանց։ Անկախ այս համեմատութիւններից՝ կարեւորն այն է, որ իտալացին, ֆրանսացին, անգլիացին, գերմանացին, ռուսը կարդում են հայ տաղանդաւոր քնարերգակի բանաստեղծութիւնը եւ հաղորդակից են լինում նրա զգացումներին ու նրա խոհերին։

Հաղուագիւտ ուշադրութեան է արժանացել այդ ողբերգական պատանին։ Սիրել են նրան մեծերը եւ փոքրերը, սիրել են քաղաքացիները եւ գաւառացիները, սիրել են սերունդներ սերունդների յետեւից։

Յիսուն տարուայ ընթացքում այնքան փոփոխութիւններ է տեսել մեր կեանքը, հինգ սերունդ է անցել, տարբեր խոհերով ու տարբեր ըմբռնումներով, եւ սակայն Դուրեանը մնացել է միշտ Դուրեան, "Տրտունջք"ի վեմ ստեղծագործողը այսքան յեղաշրջումների մէջ մնացել է միշտ թարմ ու կենդանի։ Աւելի թարմ, քան մեր հայրենասիրական շրջանի առնուանի բանաստեղծները, Գամառ-Քաթիպա, Սմբատ Շահազիզեան, Միքայէլ Նալբանդեան իբրեւ բանաստեղծ։ Աւելի թարմ, քան նրա ժամանակակից Մկրտիչ Պէշիկթաշլեան, անհամեմատելի կերպով բարձր, քան Թոմաս Թերզեան, Սրապիոն Հեքիմեան, Մկրտիչ Ազէմեան, քան նրանից յետոյ եկող շատ բանաստեղծներ։

Ինքը մի գեղեցիկ բանաստեղծութեան մէջ երգել է իր մահը եւ ծանր երկիւղ է ունեցել,

թէ կարող է անհետ, անհետեւանք կորչել այս բիրտ, եսական աշխարհից.

"... Իսկ աննշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ..."

Տարաբախտ պատանին "մի քանի պատառ թղթերի վրայ արցունքոտ տողեր" ունէր գրած — ինչպէս ինքն է բնորոշել իր մի յուզիչ նամակի մէջ — եւ շատ էր ցանկանում, որ այդ տողերը "արեւի լոյս տեսնեն"։

Բայց կեանքի ծանր պայմանները, իր նիւթական չքաւոր վիճակը, մեր գրական միջավայրի յետամնացութիւնը պատճառ եղան, որ Պետրոս Դուրեանի այդ անմեղ փափագը չիրագործուի նրա կենդանութեան օրով։ Եւ նա մեռաւ առանց համոզում ունենալու, թէ յետնորդները գէթ պիտի կատարեն արդեօք նրա վերջին ցանկութիւնը։

Կենսագրութեան մի քանի թռուցիկ միջադէպերից երեւում է, որ Պետրոս Դուրեանը ունեցել է իր տաղանդի գիտակցութիւնը։ Այդ տեղերը տարաբախտաբար շատ անորոշ են, եւ մենք դժուարանում ենք այդ հաղորդագրութիւնը իբրեւ նիւթական փաստ ընդունել։ Ինչ էլ որ լինի սակայն, Դուրեանի բանաստեղծութիւններից — եթէ ոչ նրա կեանքից — կարելի է մակաբերել, որ քերթողը իր կոչման աղնիւ գիտակցութիւնը ունեցել է եւ այդ գիտակցու-

թեամբ էլ ստեղծագործել է։ Անկարելի է երեւակայել, որ նա ինքը չհասկանար կամ չգիտակցէր իր ներշնչուած եւ անսովոր տողերի արժէքը։ Իր նշանաւոր բանաստեղծութիւնը — "Տրտունջքը" — մի օր յետոյ նա բնորոշում է "սեւ հեղեղ" զարմանալի ճիշտ որակումով։ Այդ որակումը, ինչպէս եւ "արցունքոտ տողեր" կամ նոյնանման արտայայտութիւնները պարզում են այն, որ հեղինակը գիտէ թէ ինքը ի՞նչ է։

Բայց այս գիտակցութիւնը ունենալով հանդերձ՝ Պետրոս Դուրեան չգիտէ, թէ ի՞նչ մտածում ունի շրջապատը։ Ապրելով մի այնպիսի ժամանակ, երբ մեր գրականութեան մէջ գրեթէ բացակայում էր քննադատական ճիւղը, չունենալով գնահատող, քննադատող ընկերներ կամ մտերիմներ՝ Պետրոս Դուրեան չի իմացել, թէ իր բանաստեղծութիւնը ինչպէս կ՚ընդունուի իր ժողովրդից։

Արեւելահայոց գրականութեան մեծանուն հիմնադիրը, խաչատուր Աբովեան, իր անմահական "Վէրք"ի տողերը կերտելիս՝ չգիտէր թէ ի՞նչ կը լինի այն՝ հասարակութեան համար։ Իր մտերիմ բարեկամ Դոկտոր Աղաթոնից անգամ թագցնում էր նա "Վէրք"ի կիսատ ձեռագիրը, մինչեւ որ բարեկամը թախանձանքով վերցրեց այն, կարդաց եւ հիացաւ։ Այս հիացումը նոր թեւեր տուեց Աբովեանին — եւ նա մեծ ներշնչումով մի քանի օրուայ ընթացքում վերջացրեց արեւելահայ գրականութեան կոթողը։

Պետրոս Դուրեանի ճակատագիրը Արեւմտահայ գրականութեան մէջ նման է այն ճակատագրին, որ ունեցաւ Աբովեանը արեւելահայոց մէջ, անհրաժեշտ ու հասկանալի տարբերութիւնները ի նկատ առնելով անշուշտ։

Աբովեանի պէս նա էլ եղաւ որոշ ժամանակաշրջանի յայտարար, նոր գրականութեան, նոր խօսքի ու նոր ձեւերի ստեղծագործող։

Աբովեանի գործն էլ նրա կենդանութեան օրով չհրատարակուեց։ Եւ նրա ողբերգական մահից 10 տարի յետոյ միայն, 1858 թուականին, հայ ժողովուրդը հնարաւորութիւն ունեցաւ տպագրուած կարդալու մեր նոր կեանքի վէպը։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնը նոյն վիճակն ունեցաւ։

Իմացաւ արդեօք վաղամեռիկ բանաստեղծը, թէ հասարակութիւնից եւս պիտի գնահատուի նրա գործը, թէ նրա բանաստեղծութիւնը պէտք է դառնայ նոր շրջանի ազդարար։ Մեռաւ նա չափազանց ծանր պայմանների մէջ եւ շատ մատաղ հասակում։ Եթէ նա ունէր իր բանաստեղծական տաղանդի գիտակցութիւնը, ապահովաբար չունէր իր պատմական դերի մտածումը։

Եւ չնայելով դրան այդ պատմական դերը գոյութիւն ունի։

Պետրոս Դուրեան երգել է իր ժամանակի նոր երիտասարդութեան մտորումներն ու զգացումները։ Նա արտայայտութիւն է տուել ժողովրդի ներսը հաւաքուած բանաստեղծական եւ

գրական իդէալներին։ Նա պատռել է Արեւմտա-
հայ գրականութեան վրայ ծանրացած կապանքը։
Նա բաց է արել միլիոնաւոր մարդկանց համբ
լեզուն։ Նա կենդանի բողոք է եղել կեղծ դա-
սական գրականութեան կեղծ գործերի դէմ։
Նա կերտել է նոր լեզու, նոր բանաստեղծու-
թիւն, նոր տրամադրութիւն։ Ներս առնելով եւ
ներքին ստեղծագործական աշխատանքի ենթար-
կելով անցեալ կեանքի ու անցեալ գրականու-
թեան լաւագոյն տարրերը, նա օգտակար կեր-
պով ազդուել է այդ տարրերից, յարմարեց-
նելով այն իր էութեան եւ ժամանակի պա-
հանջներին։

Պետրոս Դուրեան իր անձնաւորութեան
մէջ երգել է իր ժամանակի ներքին կեանքը,
հոգին, զգացումներն ու գոյութեան պրոբլեմը։
Երգել է նա ուժով, զարմանալի անկեղծու-
թեամբ, սիրով ու խանդով...

Եւ այդ երգով էլ ապրում է նա մինչեւ այժմ։

Ցիսուն երկար տարիներ են անցել այն
տխուր օրից, երբ Իւսկիւտարի բանաստեղծը
հեռացաւ աշխարհից։ Եւ չնայած այդքան եր-
կար ժամանակամիջոցին — նրա գործը լուսա-
ւոր աստղի պէս ներկայ է տակաւին։

Մեր ժողովուրդը եւ գրականութիւնը նրա
մահուան յիսնամեակին կը յիշեն անշուշտ բա-
նաստեղծին եւ կ'ապրեն նրա բարոյական ժա-
ռանգութիւնով։ Մենք եւս կ'ուզէինք յետադարձ
ակնարկ նետել այդ գործի վրայ, ցոյց տալ նրա

պատմական դերը, ներկայացնել նրա գեղա-
րուեստական մնայուն մասը, մատնանշել այդ
գործի հիմնական պակասները եւ գծել այն
խնդիրները, որ Դուրեանից յետոյ վիճակ է ընկել
յետնորդ գրականութեան։

Որովհետեւ եթէ Դուրեանը մեծ էր նրա-
նով, որ իր ժամանակի արտայայտիչը եղաւ, մեր
ժողովուրդն էլ մեծ է նրանով, որ կարող է նոր
ժամանակի Դուրեաններ ստեղծել։

Պետրոս Դուրեանի մեծութիւնը այնտեղ
է մանաւանդ, որ մինչեւ հիմայ էլ սպասում է
իր յաջորդին...

II.

ԿԵԱՆՔԸ

Պետրոս Դուրեանի բանաստեղծական գործը եւ հասարակական արժէքը լաւ ըմբռնելու համար՝ անհրաժեշտ է գէթ համառօտակի ծանօթ լինել նրա կեանքին։ Պէտք է իմանալ թէ ի՞նչ պայմանների մէջ է ծնուել եւ մեծացել մեր նոր բանաստեղծութեան հիմնադիրը, ի՞նչ միջավայրի մէջ է կերպարանուել նրա գրական դէմքը։ Եւ շատ թէ քիչ սիստեմաւորելու համար այս կարեւոր խնդիրները՝ պէտք է նրա կեանքի փաստերին տեղեակ լինել։

Այս նպատակով ահա կարեւոր ենք համարում Պետրոս Դուրեանի կեանքի ամփոփ նկարագիրը տալ մեր ընթերցողներին, աշխատելով որչափ հնարաւոր է սեղմել այն։

Պետրոս Դուրեանի մասին առաջին անգամ կենսագրական տեղեկութիւններ երեւացին նրա երկերի առաջին հրատարակութեան յառաջաբանի մէջ։ Այս հատորը տպագրուեց Կ. Պոլիս, 1872 թուին, Իւսկիւտարի ընթերցասէրների ընկերութեան ջանքերով, "Տաղք եւ թատրերգութիւնք" վերնագրով։ Նա պարունակում է Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւններն ու

բեմական գործերը եւ բաղկացած է մօտ 500 էջից։

Ընդարձակ կենսագրութիւն գրել է Բարսեղ Էքսէրճեանը, որ հրատարակուած է Կ. Պոլիս 1893 թուականին։ Սկսելով Դուրեանի պապից եւ ծնողներից՝ Էքսէրճեանը բաւական մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում բանաստեղծի մասին, յաճախ զանազան պատմուածքներ ու միջադէպեր է հաղորդում նրա կեանքից, որ երբեմն կրում են վիպական գրոշմ։ Թէեւ գիտական լուրջ արժէք եւ մեթոդ չունի այդ կենսագրութիւնը, այնուամենայնիւ իբրեւ սոսկ փաստերի ու դէպքերի ժողովածու՝ գնահատելի է այդ աշխատանքը։

Արշակ Չօպանեանի կազմած կենսագրութիւնը, որ լոյս տեսաւ Թիֆլիսում 1894 թուին, փաստական տեսակէտից գրեթէ նոյն նիւթն է պարունակում բանաստեղծի մասին, ինչ որ հաղորդել էր Բարսեղ Էքսէրճեանը։ Չենք խօսում այստեղ Չօպանեանի աշխատութեան գրական մասի նկատմամբ, որ բովանդակում է հետաքրքրական դիտողութիւններ Դուրեանի գրականութեան վերաբերեալ, մանաւանդ եթէ ի նկատ ունենանք, որ մեր քննադատ-բանաստեղծը այդ գործը հրատարակել է բաւական երիտասարդ հասակում։

Մենք օգտուում մենք Բարսեղ Էքսէրճեանի հաղորդած կենսագրական փաստերից — խուսափելով որքան կարելի է վիպական մասերից, որոնք դրական եւ առարկայական քիչ արժէք

ունին — գծելու համար Պետրոս Դուրեանի համառօտ կեանքը։ Մենք այդ կեանքի մասին կը խօսենք այնքան, որքան էականապէս անհրաժեշտ է եւ որքան ներում են մեր աշխատութեան սահմանները, որ պիտի լինի գրական-քննադատական եւ պիտի՛ զբաղուի նրա երկերի վերլուծութեամբ։

---

1. Մանկութիւնը։

Պետրոս Դուրեան ծնուել է 1851 թուի Մայիս 20ին, Կ. Պոլսի Իւսկիւտար թաղում։ Ծնուել է նա չքաւոր ընտանիքում։ Հայրը եղել է երկաթագործ, որ հազիւ էր կարողանում իր զաւակների եւ իր ընտանիքի ապրուստը հայթայթել։ Այս հանգամանքը խորին ազդեցութիւն է թողել Պետրոս Դուրեանի հոգեկան կեանքի վրայ եւ գրեթէ շատ մեծ չափով պայմանաւորել է նրա ճակատագիրը։ Մայրը եղել է աշխատասէր եւ վշտոտ կին։ Աղջիկ ժամանակը, ծնողների ընտանիքում, շատ դժբախտութիւններ էր տեսել այդ կինը։ Ամուսնացած ժամանակն էլ, երկաթագործի ընտանիքում, նրա դժբախտութիւնները շարունակւում են։ Կենսագրական տեղեկութիւններից երեւում է, որ Դուրեանի մայրը աւելի գրաճանաչ եւ այսպէս ասած՝ աւելի մտային է եղել, քան նրա հայրը։ Տանջուած, տառապած, խելացի, աշխատաւոր,

զաւակների դաստիարակութեան նուիրուած մի կին է եղել նա, նման հայ լաւ մայրերին, որոնց խոհերն ու կեանքը դրսի աշխարհին մնում է միշտ անհաղորդ ու գաղտնի։ Իր դժուարութիւնների եւ դժբախտութիւնների մէջ այդ կինը չէ երեւացել իր արցունքներով։ Հետաքրքրական մանրամասնութիւն կայ կենսագրութեան մէջ նրա մօր մասին, որ մենք կարեւոր ենք համարում մէջ բերել, քանի որ նա յիշեցնում է իր տաղանդաւոր զաւակին։ Պատմւում է որ Պետրոսի մայրը, չնայած իր ծանր վշտին՝ չի ճանաչել արցունքը։ Վիշտը, տառապանքը նա կրել է իր սրտի խորքում, ինչպէս եւ որդին, որ "յատակն է ունեցել իր փրփուրները"։ Պետրոսը նրան չի տեսել արտասուելիս իր մանկական եւ պատանեկան տարիներում։ Սակայն որդու հիւանդութիւնը, որ այնքան դառն եղաւ, սիրած զաւակի կսկծալի տագնապները խեղդում են մօրը եւ նա լաց է լինում Պետրոսի համար։ Երեւի թէ մեր քնարական բանաստեղծութեան աննման էջը — "Տրտունջքը" — այսպիսի մի ծանր վայրկեանի մէջ է գրի առնուել։ Մի օր յետոյ ինքը Դուրեանը խօսելով իր բանաստեղծութեան սարսափելի տողերի մասին՝ ասում է.

"Ո՜հ, ներէ՛ ինձ, Աստուա՛ծ իմ,
Մօրս արտօսրը տեսի...."

Պետրոս Դուրեանի մայրը կարդացող կին է եղել։ Բայց նրա ընթերցանութեան գրքերը ընդհանրապէս սաղմոսներ եւ աղօթագրքեր են

եղել։ Իր վշտի մխիթարութիւնը գտել է նա սաղմոնների եւ աղօթքների մէջ, եւ որդուն էլ մանկական տարիներում դաստիարակել է այդ ուղղութեամբ։ Մանկական տարիների այս տպաւորութիւնը մնացել է Պետրոս Դուրեանի մէջ, որ յետոյ յաճախ յիշում է «երգի եւ աղօթքի» մասին։

Իր մանկական օրերը մեծ մասամբ անց է կացրել նա մօր հետ, գնացել է նրա հետ բարեկամների եւ ազգականների մօտ, եղել է փողոցում, եղել է ժողովրդական վայրերում, մօր թեւից բռնած եւ մօր հետ խորհրդածելիս։

Զբաւորութեան պատճառով մանուկ Պետրոսը չի ունեցել զանազան խաղալիքներ։ Այս պակասն էլ լրացրել է նա դարձեալ իր սիրելի մօր մօտ։ Երբ աշխատասէր կինը գուլպայ էր գործում եւ թելի կծիկը ընկնում էր գետին — Պետրոսը երկար ժամանակ խաղում էր նրա հետ եւ այդպէս անցնում իր մանկութեան մելամաղձիկ ժամերը։

Տարաբախտաբար Պետրոս Դուրեանի հօր մասին մենք շատ բան չգիտենք։ Եւ ինչ որ գիտենք, նպաստաւոր չէ երկաթագործի համար։ Կենսագիրը պատմում է, թէ բանաստեղծի հայրը աւելորդ խստութիւններ ունէր իր զաւակների հետ։ Շէր թողնում, որ Պետրոսը արդէն պատանի հասակում՝ իր սիրած թատրոնը յաճախէր, կեանք տեսնէր, զարգանար։ Մայրը միջամտում էր յաճախ եւ Պետրոսի համար թոյլատրութիւն էր խնդրում, բայց

յամառ հայրը մնում էր իր քմահաճոյքների վրայ եւ չէր զիջում իր ասիական դաստիարակութեան սկզբունքները։ Նիւթական կարիքը, տնտեսական ծանր պայմանները հօրը դարձնում էին յաճախ խստասիրտ երեւոյթապէս, որ Արշակ Զօպանեանի վկայութեամբ՝ իրօք խստաբարոյ մարդ չէր։

Այսպէս էին անցնում Պետրոս Դուրեանի մանկական անգիտակից տարիները երկաթագործի ընտանիքում, Իւսկիւտարի մի խուլ թաղում, մի տան մէջ, որ նայում էր միշտ դէպի խորհրդաւոր նոճիները եւ դէպի արծաթափայլ Բոսփորը։

Այս տան մէջ մեծացող տղան, նրա կենսագիրների վկայութեան համաձայն, սիրուն, կայտառ մի երեխայ էր, սուր յիշողութեան տէր, սրամիտ, խելացի, ընդունակ եւ համեստ։

2. Դպրոցում։

Վեց տարեկան հասակում Պետրոս Դուրեանը մտնում է դպրոց, Իւսկիւտարի ճեմարանը։ Այդ դպրոցում, ինչպէս այն ժամանակուայ մեր բոլոր դպրոցներում, տիրում էր պրոլաստիկական ոգի։ Գրաբարի, քերականութեան, ճարտասանութեան շրջանն էր, մանկավարժական այնպիսի մի միջավայր, որի մէջ ուժեղ անհատականութիւնները հազիւ կարողանում էին դիմանալ, չխօսելով այլ եւ

թոյլերի մասին, որոնք մտաւորապէս այլասերւում էին։

Դպրոցական իր դասընկերների մէջ էր վաղամեռիկ Վարդան Լուսինեանը, որի հետ Պետրոսը յետոյ շատ մտերմացաւ եւ որի մահը երգեց նա մի զարմանալի գեղեցկութեամբ։

Դուրեանի կենսագիրը պատմում է, թէ Իսկիւտարի ճեմարանի հին մատեանները թերթելիս՝ նա պատահել է Պետրոսի անուան, որ աշխատելիս է եղել Նարեկի վրայ։ Ճեմարանի Վարչութիւնը հնարաւոր է համարել նրա ձեռքը տալ տասներորդ դարի մեր նշանաւոր կրօնական երգչին, որ որքան էլ բարձր բանաստեղծութիւն լինէր, այնուամենայնիւ մանուկի համար մութ էր, քաօսական եւ անմատչելի։ Տարիներ յետոյ սակայն, երբ Դուրեանը գրաբարի մէջ առաջանում է եւ իմացական կարողութիւնները զարգանում են, նորէն ձեռք է առնում վիրաւոր, միստիկ հոգու այդ մատեանը եւ ճաշակում է նրա բացառիկ գեղեցկութիւնը։ Գրիգոր Նարեկացին եղել էր մեր հին բանաստեղծութեան հոգին, Պետրոս Դուրեանը պիտի լինէր նոր բանաստեղծութեան շունչը։ Մէկը կրօնական դարաշրջանի քնարերգուն էր, միւսը պիտի լինէր աշխարհիկ ժամանակի քերթողը։ Եւ սակայն այդ տարբեր շրջանների բանաստեղծները մերձեցման ինչպիսի կէտեր ունին միմեանց հետ, իբրեւ վիրաւոր, անկեղծ, խորունկ, ուժեղ եւ ողբերգական երգիչներ։

Դասատուութեան նիւթերի մէջ Նարեկի հետ միասին կար Աւետարանը, Եղիշէն, յետոյ, գրականութեան ժամերին — որ աւանդում էր Սրապիոն Թղլեան — կար նաեւ Արսէն Բագրատունի եւ Ղեւոնդ Ալիշան։

Կենսագիրները պատմում են, որ Պետրոս Դուրեանի աշակերտութեան շրջանում ճեմարանի տեսուչ է եղել որոշ ժամանակ մեր յայտնի երգիծաբան Յակոբ Պարոնեան։ Տարաբախտաբար գրեթէ ոչինչ չեն հաղորդում նրա տեսչութեան մասին, եւ մենք չգիտենք թէ մեր աշխարհիկ արձակի այդ անուանի վարպետը ինչ դեր էր կատարում դպրոցի կարգերի մէջ եւ թէ որքան ազդեցութիւն ունէր տիրող մանկավարժական սկզբունքների վրայ։ Գիտենք այսքանը միայն, որ Յակոբ Պարոնեանը լաւ աչքով էր նայում Պետրոս Դուրեանին եւ որ նրա բանաստեղծութիւնների մասին նպաստաւոր կարծիք ունէր։

Պետրոս Դուրեանի սիրած առարկաներն էին՝ հայերէն լեզուն, գրականութիւնը, երաժշտութիւնը, քարտէզագրութիւնը, որ թերեւս մասամբ փոխարինում էր նկարչութիւնը։

Օտար լեզուներից՝ Դուրեանը ճեմարանում սովորեց նաեւ ֆրանսերէնը, որ նրան շատ հարկաւոր եղաւ ֆրանսական գրականութեան հետ անմիջապէս ծանօթանալու համար։ Արշակ Չօպանեան պատմում է, որ Դուրեանի գրականութեան ուսուցիչը Շատորբիանի "Մարտիրոսները,, կարդալ էր տալիս իր աշակերտներին

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библ. Ереван
ՀԱՅՈՍ ՍՍՀ
Мясникяна
Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՄԵՎԱՆ

եւ ֆրանսերէնից թարգմանել էր տալիս գրաբար։ Իսկ Բարսեղ Էքսերճեան պատմում է, որ դպրոցական պարգեւաբաշխութեան հանդէսին՝ Պետրոս Դուրեան մի ցանակ է ստանում Լամարտինի մէկ գիրքը։ Ահաւասիկ այսքանը, որ կարելի է ասել ֆրանսական լեզուի եւ գրականութեան հետ կապուած խնդիրների մասին։

Գրականութեան դասերից եւ պարապմունքներից զատ՝ ճեմարանում յաճախ տեղի ունէին ատենաբանութեան փորձեր, որոնք մեծ մասամբ լինում էին անպատրաստից։

Կենսագիրները պատմում են, որ Պետրոս Դուրեանը աչքի էր ընկնում թէ ատենաբանութիւնների եւ թէ գեղեցիկ առոգանութեան մէջ։ Ըստ երեւոյթին լաւ, սահուն, ոգեւորուած խօսելու ձիրք է ունեցել Պետրոս Դուրեանը, որ մասամբ երեւում է Վարդան Լուսիկեանի գերեզմանի վրայ խօսած դամբանականից։

Դպրոցական կեանքի վերջին տարիներում, դպրոցական առարկաների հետ միասին, Պետրոս Դուրեան զբաղուել է նաեւ բանաստեղծութեամբ եւ գրականութեամբ, որ նրա համար ներքին կոչում էր։ Նա սկսել է գրել շատ մատաղ հասակից։ Առաջին բանաստեղծութիւնը, որի մասին տեղեկութիւն ունինք եւ որ բաւական յաջողուած կարելի է նկատել, տաներեք տարեկան մանուկի արտադրութիւն է։

Բանաստեղծութիւններից զատ՝ դպրոցական շրջանում սկսել է գրել նաեւ թատերագրութիւններ։ "Վարդ եւ Շուշան" եւ "Սեւ Հողեր" ողբերգութիւնները դպրոցական վերջին տարիների արդիւնք են, գրուած են ութեմն 15—16 տարեկան հասակում։

Բայց այս տաղանդաւոր եւ համակրելի պատանու կեանքը դպրոցական շրջանում եւս անցնում է ծանր, հոգեմաշ զրկանքների եւ նեղութիւնների մէջ։ Զքաւորութիւնը շարունակւում է աւելի եւս զգալի կերպարանքով։ Ծնողները, յուսահատուած, ընդմիջում են Պետրոսի ուսման ընթացքը, հանում են նրան դպրոցից եւ յանձնում են մէկ գեղագործի, որպէս զի գոնէ քիչ վաստակ տանի տուն։ Այս միջոցը չէ օգնում անկասկած եւ Պետրոս վերադառնում է դպրոց։ Եւ այն ժամանակ, երբ նրա միւս ընկերները դպրոցական դասամիջոցներին նախաճաշ անելով են լինում զբաղուած՝ Պետրոս Դուրեան մի կողմ քաշուած գրքեր էր կարդում կամ ոտանաւորներ էր գրում։

Այսպէս է անցնում մեր տաղանդաւոր բանաստեղծի կեանքը Իւսկիւտարի ճեմարանում, ուր նա անց է կացնում մօտաւորապէս տասը տարի, 1857 թուից մինչեւ 1867 թուականը։

Չնայած այդ բոլոր ծանր եւ տաժանելի պայմաններին, չնայած դպրոցի սքոլաստիկական մանկավարժութեան — այնուամենայնիւ Պետրոս Դուրեանը դպրոցից դուրս է գալիս բաւականաչափ պատրաստուած, աստուածային կայծը հոգում։ Այդ պատրաստութեամբ եւ այդ կայ-

ծով նա շուտով պիտի փոթորկէր մեր գրական անշարժութիւնը եւ մի նոր, սրտոտ, զգացումներով լեցուն բանաստեղծութիւն ստեղծէր։

3. Կեանքի յորձանքների մէջ։

Դպրոցից դուրս Պետրոս Դուրեանը ապրում է ընդամէնը չորս տարի եւ այդ ամբողջ ժամանակամիջոցը անց է կացնում Կ.Պոլսում։ Բարսեղ Էքսէրճեանը պատմում է, որ Դուրեանը միայն մէկ անգամ է դուրս գալիս Կ.Պոլսից, այն էլ մանուկ ժամանակ, երբ ծնողները նրան ուխտագնացութեան են տանում դէպի Արմաշ։ Այս ճանապարհորդութեան որ եւ է հետքը չկայ Պետրոս Դուրեանի նամակների կամ գրական աշխատանքների մէջ։

Տարաբախտ պատանին դպրոցից դուրս գալով՝ որ եւ է ծրագիր չէ կարողանում յղանալ։ Կեանքի անիծեալ պայմանները ժամանակ եւ հնարաւորութիւն չեն տալիս, որ նա երազէ արտասահման գնալու, կատարելագործուելու մասին։ Հացի խնդիրը իր բովանդակ գռեհկութեամբ նրա առջեւն է ցցւում։ Եւ այդ 16 տարեկան պատանին ոչ թէ միայն իրեն պիտի հոգայ, այլ եւ ծնողներին պիտի օգնի։

Եւ նկատեցէք կեանքի հեգնութիւնը։

Իդէալիստ, ազնիւ բանաստեղծը ծառայութեան է մտնում մի սեղանաւորի մօտ, որ նրան գրագրի պաշտօն է յանձնում։ Ինն ամիս

մնում է նա ակնցի սեղանաւորի մօտ, որի գործերից ոչինչ չէ հասկանում այդ երաշխական տղան։ Այդ ամիսներից մնում է թերեւս միայն այն, որ վարպետի մօտ լսում է Ակնի ժողովրդական նկարագիր, պարզ խօսուածքը։ Կենսագրութեան մէջ ոչինչ չէ ասուած այս մասին, բայց անհաւանական չէ, որ այս կենդանի խօսքը գէթ չնչին չափով օգնած լինի Դուրեանին՝ կենդանի եւ աշխարհիկ բանաստեղծութիւն կերտելու նրա ծանր խոհերի մէջ։ Պատմուած է միայն այն, որ Դուրեանի վրայ զուարճալի տպաւորութիւն էր թողել "դուրսեցիի" խօսելու կերպը, որ յաճախ յիշում եւ նմանեցնում էր նա զուարթ բոպէներին ընկերական շրջանում։

Ակնցու մօտ իր գրագրի պաշտօնից աւելի՝ նա զբաղուած էր բանաստեղծութեամբ, ինչ որ չէր կարող երկար շարունակուել։ Դուրեանը թողնում է այդ պաշտօնը եւ մտածում է գրական միջոցներով իր ընտանիքին որ եւ է նիւթական օժանդակութիւն հասցնել։

Բայց ինչ կարող էր տալ մեր ողորմելի գրական միջավայրը։ Աշխատում է խմբագրութիւնների մէջ — անօգուտ։ Թարգմանութիւններ է անում — ապարդիւն։ Թատերախաղեր է գրում, որոնք մեծ յաջողութիւն են ունենում, հասարակութիւնը որոտընդոստ եւ խանդավառ ծափահարում է պատանի, տաղանդաւոր գրագէտին — բայց ծափահարութիւնները անշուշտ շօշափելի բան չեն եւ Դուրեան հիւծւում է չքաւորութեան մէջ։

Տաղանդը կորչում է, խիղճը տանջում է նրան, որ չի կարողանում օգնութիւն հասցնել իր կարիքաւոր ծնողներին։ Այս ժամանակամիջոցին է գրում նա հետեւեալ տողերը, որ բերում է Էքսէրճեան, իր կազմած կենսագրութեան 64 էջի մէջ։ — "Ո՞վ գիտէ, քանի՛ քանի՛ անկիւններ զանազան տաղանդներ քաջալերութեան պակասէն անգործ ու վհատեալ կը կենան, միանգամայն եւ իրենց աղքատ ընտանիքին բեռ ըլլալու զգացումով կը տանջուին..."

Այս ծանր պայմանների մէջ նրան մասնաւոր դասեր են առաջարկում, մի հարուստ ընտանիքում, ինչ որ նա յանձն է առնում այն յուսով, որ կը կարողանայ նաեւ գրականութեամբ զբաղուել։ Այդ տան մէջ Պետրոսի պարտականութիւնը լինում է դասեր տալ հարուստի զաւակին եւ միաժամանակ նրա գործարանի մեքենայագիտութեան գրքերը ֆրանսերէնից հայերէն թարգմանել։ Այս աշխատանքի մէջ Դուրեան հարկադրուած է լինում մտածել տեքնիկական բառերի մասին եւ կերտում է մի քանի ինքնուրոյն մեքենագիտական խօսքեր։

Բայց մեծատունը նրան առաւօտից երեկոյ աշխատեցնելով՝ չէ վարձատրում նրան գէթ ամենահամեստ կերպով եւ մինչեւ իսկ նախապէս սահմանուած ամսականը կարճում է։ Դուրեան չկարողանալով տանել այս տեսակ անխիղճ վերաբերում՝ թողնում է հարստի տունը, ուր մնում է նա ընդամէնը ութ ամիս։

Այս ժամանակին է վերաբերում նրա հետեւեալ սրտառուչ նամակը, որ գրում է իր բարեկամներից մէկին 1871 թուականին եւ որ մեծ լոյս է սփռում նրա ծանր կացութեան վրայ։

— "...Առանձին ըլլալու համար շատ անգամ տունին մէկ ցուրտ խուցը մեկնած, մոյկ ու սառ մատերով գրիչ կը ճարճատեմ, կը մրոտեմ, կը վառիմ, աչերս խոշոր խոշոր կը բանամ, կը մրմռամ, ձեռքս ճակտիս կը տանիմ, անհամբերութեան հառաչ մը կ'արձակեմ, կը խոկամ, կը ծխեմ։ Ասոնցմէ արտագրեալն է թատերախաղ... Ցիրաւի բանաստեղծ մ'ըլլալ կ'ուզեմ, տենչ մը, որ աղքատիկ հիւղի մը անկիւնը, քաղցի ու ցուրտի սեւ վերմակներուն տակ, վերջապէս ակամայ կը մարի։ Հիմակուան գործատէրերը[1] կով կ'ուզեն գործածելու եւ ոչ թէ մարդ...[2]"

Իր դժուարին եւ դառն վիճակի մէջ՝ Պետրոս Դուրեան մի մտածմունք ունէր, որ նրան երբեք հանգիստ չէր տալիս։ Գրում էր այնքան բանաստեղծութիւններ եւ թատերախաղեր, որոնցից ոչ մէկը չէր կարողանում լոյս ընծայել։ Ուզում էր սրտանց, որ իր գրական աշխատանքներից որ եւ է մէկը հրատարակուած տեսնի։ Եւ այս ցանկութիւնը նրան աւելի էր տանջում իր չքաւոր կացութեան մէջ։

---

1 Ակնարկում է այն հարուստ գործարանատէրը, որի զաւակին սովորեցնում էր եւ որի մեքենական գրքերը թարգմանում էր։ Ս. Ճ.

2 Տես Բ. Էքսէրճեան, "Պետրոս Դուրեանի կենսագրութիւնը", էջ 69–70։

Մի անգամ Խորէն Նարպէյը — որ ինքն էլ բանաստեղծ էր եւ որ նախանձելի դիրք ունէր Կ. Պոլսի հասարակութեան մէջ — խոստացել էր Դուրեանին նրա գրական աշխատանքներից մէկը հրատարակութեան տալ։ Պետրոս Դուրեան իր կեանքի ծանր պայմանների մէջ մտածեց յիշեցնել Նարպէյին նրա խոստումը։ Եւ ահա ի՞նչ է գրում բանաստեղծը 1871 թուականի Յունուար 22ին Խորէն Նարպէյին. — "...Հասարակաց գերեզմանոցներուն մէջ գերեզմաններ կան, որոնք հրաբուխներ պիտի ըլլային։ Բայց կայծը, սրտի թանձր խաւարին մէջ, առանց երբեք հրահրելու՝ թաղուած է։ ...Ա՛լ բաւ հողէ կանթեղի մը հետ հսկեցի առանձին, ա՛լ բաւ սրտիս կայծերով լոյսերուն հետ ընդհարեցայ անձայն, ա՛լ բաւ քրտանցս ճակտիս վրայ սառիլն զգացի։ Կը նետեմ ոտքս ահա դուրս, եւ նախ ձեզ, սիրոյ պաշտօնէիդ կը դիմեմ։ Ձեր սրբազնութիւնը նշանաւոր առթիւ մը համակրական տեսակցութեան պատիւն ինձ տալէ զատ՝ երջանկութիւն մ'ալ ինձ ներշնչած է, որ կը նմանի խղդուկ սրտի մը արձագանգ տալու։ Ասի խոստումն է, որուն քաղցր պահանջումը պատեհ առթի մը վերապահած էի. ահա առիթը ինձ կը ներկայի[1]։"

Նկատեցէք ի՞նչպիսի սրտաճմլիկ, անկեղծ խօսքերով է նկարագրում Պետրոս Դուրեան իր

[1] Պետրոս Դուրեան, "Տպագիր, թատերգութիւնք, Նամականի", Կ. Պոլիս 1893, էջ 227–228։

հոգու դառնութիւնը։ Այս դառնութիւնը յիշեցնում է մեզ արեւելահայոց գրականութեան հիմնադիր Խաչատուր Աբովեանի ներքին տագնապները։ Նա էլ աշխարհ էր եկած մի վսեմ առաքելութիւն կատարելու։ Նա էլ պիտի թօթափէր մեր գրականութեան վրայից անցեալի պղտորութիւնը։ Նրան էլ մենակ թողեցին կեանքի տաժանելի յորձանքների մէջ իր շրջապատի մարդիկը։

Բայց Պետրոս Դուրեանի դրութիւնն աւելի ծանր է նրանով, որ սա երիտասարդ է, պատանի է, եւ չի կարող դիմադրել ահռելի փորձութիւններին։

"...Բանաստեղծ մ'ըլլալ կ'ուզեմ, տենչ մը, որ աղքատիկ հիւղի մը անկիւնը կը մարի վերջապէս։"

Կամ թէ՝

"...Կը նետեմ ոտքս ահա դուրս, եւ նախ ձեզ, սիրոյ պաշտօնէիդ կը դիմեմ..."

Որի՞ համար էր այդ տաղանդաւոր երիտասարդը տենչում բանաստեղծ լինել։ Որի՞ համար էր ոտքը դուրս նետում։

Առաքելութիւն ունէր կատարելու։ Հայ ժողովրդի ստեղծագործական ճամբաները կատարելագործելու էր գալիս այդ ներշնչուած երիտասարդը։ Բայց եօթանասնական թուականների մեր շրջապատը անապատի պէս խուլ էր այդ տաղանդաւոր բանաստեղծի աղեկտուր կոչերի հանդէպ։ Ոչ ոք չասաւ, թէ՝ բաց անենք

այս երիտասարդի սիրտը, տեսնենք ի՞նչեր կան գրուած նրա տաք սրտի մէջ։ Ոչ ոք չմոռացաց՝ յետ տանել քօղը, գտնել մարգարիտը, խնամել մարգարիտը, որ նետուած էր մի անկիւն եւ կորչում էր մեզանից։ Գրական շրջանի մարդիկ անգամ չկարողացան իրենց ժամանակից եւ իրենց սեռից դուրս երիտասարդ ուժեր տեսնել։ Մկրտիչ Պէշիկթաշլեանը, որ արտասանել էր թէ՝ "այս երիտասարդը ինձ պիտի գերազանցի", Խորէն Նարպէյ, որին դիմեց Պետրոս Դուրեան իբրեւ "սիրոյ պաշտօնէի", Թոմաս Թերզեան, Սրապիոն Հէքիմեան, որոնք բոլորն էր դիւրք ունէին հասարակութեան մէջ, չկարողացան գնահատել նրան, փրկել այդ ողբերգական պատանուն՝ մեր գրականութեան, մեր կեանքի, մեր ժողովրդի համար։

Եւ Պետրոս Դուրեան — իր գեղեցիկ եւ տրտում արտայայտութեամբ — մնում էր միայնակ...

4. Ընկերը եւ սէրը։

Պետրոս Դուրեան ունէր մի հատիկ սրտակից ընկեր, Վարդան Լուիթեան անունով, որի հետ դեռ մանուկ հասակից բաժանել էր իր զգացումները եւ իր հոգին։ Դպրոցական ընկերներ էին նրանք, ընկերներ մնացին կեանքի մէջ մինչեւ Վարդանի մահը, որից յետոյ Պետրոսը հազիւ կէս տարի ապրեց։

Նրանց ընկերութիւնը մի հետաքրքրական հոգեբանական երեւոյթ է, որ խորին ազդեցութիւն է ունեցել Պետրոսի հոգեկան կեանքի վրայ։ Դա մի տեսակ սէր էր, որ փոխարինում էր չունեցած կամ աւելի ճիշտ՝ կորցրած սէրին։ Նրանք գրեթէ միշտ միասին էին։ Կարդում էին միասին, խորհրդածում էին միասին, այրւում էին միմեանց մէջ, ինչպէս արտայայտել է Պետրոս Դուրեան իրեն յատուկ այնքան ինքնուրոյն ձեւով։ Ցաճախ չէին խօսում, որովհետեւ խօսքն իրենց հոգու "անհունութիւնը կը պղծէր"...

Գնում էին պտտելու այսպէս Իւսկիւտարի խորհրդաւոր գերեզմանոցը, Ջամլըճայի երազական բարձունքները, դիտում էին կապտագոյն Բոսփորը, սգաւոր նոճիները, որ այնքան քաղցրօրէն եւ այնքան տրտմօրէն երգել է միշտ Պետրոս Դուրեան։

Երբ Վարդանը հիւանդ էր՝ Պետրոսը լինում էր յաճախ նրա մօտ, անկողնի քով նստած, սիրտը լեցուն իր ընկերոջ խոհերով եւ վշտով։ Վարդանի սենեակից, ինչպէս եւ Դուրեանի բնակարանից, երեւում էր մշտական Բոսփորը, երեւում էին անխուսափելի նոճիները։

Վարդանը, հիւանդութիւնը դարմանելու նպատակով, մի առժամանակ գնաց Եգիպտոս։ Այդ ժամանակամիջոցում նրանք թղթակցում էին միմեանց հետ, բայց այս թղթակցութիւններից ոչ մէկը չէ մնացել, եւ մենք չգիտենք, թէ ի՞նչ են գրել միմեանց այդ երկու սիրա-

սուն ընկերները, ի՞նչ է գրել մանաւանդ Դուրեանը, որի սրտի գաղտնիքները ըստ երեւոյթին յայտնի են եղել միայն Վարդանին։ Պետրոս Դուրեանի կենսագրութեան վրայ այդ նամակները կարող էին մեծ լոյս սփռել։

Սիրելի ընկերը վերադառնում է Եգիպտոսից, բայց հիւծախտը չի բուժւում եւ նրան վաղաժամ գերեզման է տանում։ Մեռնում է նա 1871 թուականի Մայիսի 21ին։ Այս մահը լինում է մի ծանր հարուած Պետրոս Դուրեանի այրուած հոգու համար։ Մի հարուած, որ ողբում է նա աղեղորմ հեծեծանքներով, ինչպէս երբեմն ողբացել էր արեւելքի հին սաղմոսերգուն իր ընկերոջ մահը.

"...Ցաւէ ինձ ի վերայ քո,
Եղբայր իմ Յովնաթան.
Գեղեցկացար ինձ յոյժ,
Զարմանալի եղեւ սէր քո ինձ,
Քան զսէր կանանց..."

Այն կսկծալի բանաստեղծութիւնը, որ նուիրել է Պետրոս Դուրեան իր անհետացող ընկերին, իր անմիջականութեամբ, պարզութեամբ, թախիծով, խորութեամբ եւ ոյժով գերազանցում է Թերեւս հին սաղմոսերգուի ողբերը։ Եւ Թերեւս Պետրոս Դուրեանի սէրն էլ դէպի Վարդանը "զարմանալի էր աւելի, քան կանանց սէրը"...

—

Ունեցե՞լ է արդեօք Պետրոս Դուրեանը Վարդանից զատ եւ Թերեւս Նրանից առաջ ուրիշ սէր, թէ ոչ։

Մեզ համար ոչ մի կասկած չկայ, որ ունեցել է։

Այն կրակոտ բանաստեղծութիւնները, որ նա Թողել է իրենից յետոյ, այդ մասին որ եւ է երկդիմութիւն չեն Թոյլատրում։ Անկարելի է, որ այդքան տաք ու կենդանի տողերը մի անհասկանալի կեղծիքի արտայայտութիւն լինեն։ Բանաստեղծը ապրում է աշխարհի վրայ, ամէն օր պատահում է ծանօթ կամ անծանօթ էակների, այս կամ այն կերպ խօսակցութիւն, տեսակցութիւն, յարաբերութիւն է ունենում մարդկանց հետ։ Դժուար է մտածել, թէ այդ մարդկանց մէջ կիներ չեն եղել եւ թէ այս կամ այն կինը նրա հոգու մէջ սէր չէ զարթեցրել։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները այդպիսի սիրով լցուած են։ Մտածել թէ՝ մեր առջեւ կանգնած է մի մարդ, որ կեղծում է իր հոգու ամենավիրաւոր եւ տագնապալի զգացումների նկատմամբ, մտածել թէ այն հեծեծանքները, այն զարմանալի հառաչանքները, որ նա արձակում է սրտի խորքից, արհեստական են — նշանակում է անգիտանալ հոգեբանութեան եւ բանաստեղծութեան հիմնական օրէնքները։

Պետրոս Դուրեանի կենսագրութեան մէջ այս խնդիրը քիչ հարցական ձեւով է դրուած։ Եւ այն հանգամանքը, որ նրա կենսագիրները

չեն կարողացել գտնել Պետրոս Դուրեանի սիրած աղջկայ ինքնութիւնը — հիմք է տուել արեւելահայ երկու երիտասարդ քննադատների մտածել, թէ մի գուցէ այդպիսի աղջիկ գոյութիւն իսկ չէ ունեցել[1]: Մինչդեռ կենսագրութեան շատ թէ քիչ ուշադիր ընթերցումն անգամ մեղ բաւականաչափ հիմք կը տայ հակառակը մտածելու:

Ոչ մի տարօրինակ բան չկայ այն պարագայի մէջ, որ Պետրոս Դուրեան իր հոգու այդ ներքին խնդիրը ընկերների կամ բարեկամների շրջանում չէ տարաձայնել: Եւ միանգամայն հասկանալի է, որ այդ խորունկ տանջուող եւ աղնիւ երիտասարդը կամեցել է իր սրտի խորքում պահել անունը կամ յիշատակը այն էակի, որ նրան այդքան ուժգին խռովութիւն է պատճառել:

Բայց սիրե՞լ է արդեօք սիրուած աղջիկը Պետրոս Դուրեանին:

Սիրոյ երգիչների համար մասնաւորապէս եւ բանաստեղծութեան համար ընդհանրապէս՝ սա յիրաւի երկրորդական նշանակութիւն ունեցող խնդիր չէ: Նայելով թէ ի՞նչպէս է լինում սիրուած կնոջ վերաբերումը — ըստ այնմ էլ ուղղութիւն է ստանում սիրողի հոգին եւ ըստ այնմ էլ կերպարանք է ստանում սիրոյ բանաստեղծութիւնը:

---

1 Վ. Նալբանդեան, "Մշակ", 1901 թ., Օգոստոս 1–4։ — Ա.Լ. Ռուբէնի, "Մուրճ", 1903 թ., Մարտ։

Մեր գրականութեան մէջ սիրոյ քնարերգակի մի զարմանալի օրինակ ունենք Սայաթ-Նովայի ողբերգական անձնաւորութեան մէջ: Տասնութերորդ դարի այդ նշանաւոր երգիչը սիրել է ամենաանյոյս եւ ամենախորը սիրով: Եւ նրա սիրոյ անփոխադարձութիւնը ստեղծել է մի վերաւոր, մի եղերական բանաստեղծութիւն՝ սկզբից մինչեւ վերջ: Սիրել է նա — ողբան ուսումնասիրութիւնը մինչեւ օրս կարողացել է երեւան հանել — դիրքով եւ ծագումով իրենց շատ հեռու գտնուող մի իշխանազն տիկնոջ: Սիրել է նա զարմանալի թափով: Եւ Թերեւս՝ երբեմն որոշ յոյս է ունեցել, Թերեւս մտածել է, թէ որ եւ է մի անկարելի ձեւով հնարաւոր կը լինի առնել նրա համաձայնութիւնը, հնարաւոր կը լինի քանդել բոլոր կարգերը: Բայց այդ հնարաւոր չի եղել — եւ Սայաթ-Նովան փոխադարձ սէր չէ ունեցել:

Նրա բանաստեղծութիւնը սիրոյ անփոխադարձութեան բանաստեղծութիւնն է:

Մեր միւս նշանաւոր սիրոյ երգիչը, Նահապետ Քուչակը, տարբեր պայմանների մէջ է գտնուում: Նա էլ սիրոյ արցունքներ է թափում, նա էլ տրտմութեան ու թախիծի մրմունջներ է արձակում — բայց նա Սայաթ-Նովայի պէս վերաւոր չէ, նրա պէս խորունկ անբախտ չէ:

Նահապետ Քուչակի սիրոյ մէջ յաճախ զուարթութիւն կայ: Նրա "եարը" անուշադիր չէ դէպի նա, յաճախ պատահում է նրան, փորձեր է անում խօսելու, ժպիտներ է արձա-

կում։ Անփոխադարձութեան տառապանքը չկայ այստեղ։ Եթէ նրանք իրար չեն հանդիպում — պատճառը "Եարի„ մէջ չէ։ Թերեւս աչքաբաց մայրն է, որ շատ աղատութիւն չի տալիս, կամ թէ ամուսինն է, որ արգելք է հանդիսանում։ Բայց ինչ որ է — այդ արգելքը սարսափելի եւ անանցանելի չէ։

Պետրոս Դուրեանի սիրոյ մէջ մի ուրիշ տարր կայ, որ այլապէս յուսահատական է դարձնում նրա հոգեբանութիւնը եւ որ նրա տառապանքը մօտեցնում է Սայաթ-Նովայի տառապանքին։

Նրա ողբերգութիւնը բաժանուած սիրոյ ողբերգութիւնն է։ Եւ նրա բանաստեղծութիւնը կորցրած սիրոյ բանաստեղծութիւնն է։

Պետրոս Դուրեանի իւրաքանչիւր էջի, իւրաքանչիւր տողի մէջ երեւում է թաղուած, վերջացած սիրոյ տառապանքը։ Նա սիրել է, նա մինչեւ անգամ սկսել է ճաշակել կեանքի քաղցրութիւնը։ Դժուար է որոշել, թէ այս քաղցրութիւնը ինչ ձեւով եւ ինչ չափով է եղել։ Բայց ամէն բանից երեւում է, որ նրա տեւողութիւնը շատ կարճ է եղել։ Նրանից յետոյ սկսւում է սարսափելի ժամը։ —

"Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներն յիս...„

Եւ երբ որ սէրը կորցնում է՝ մի անդիմադրելի, ճակատագրական ցանկութիւն է առաջանում այլ եւս չապրելու։ —

"Խորշ մը կար, որ չէր ծաղրեր զիս,
Այն լուռ փոսն էր գերեզմանիս...„

Հետաքրքրական է գիտնալ, թէ ինչ է պատմուած Պետրոս Դուրեանի սիրոյ մասին նրա կենսագրութեան մէջ։

Արշակ Չօպանեան բերում է Դուրեանի մի հին բարեկամի նամակը, որ հետեւեալն է. — "...Պետրոս Դուրեան կը սիրէր Ս. անունով օրիորդ մը, որ յետոյ ամուսնացած եւ մեռած է։ Իր ոտանաւորներուն մէջ շատ տեղ անոր ակնարկութիւններ ունի։ Այս սէրը բանաստեղծական կամ իդէական էր միայն, եւ աղջիկը — որչափ կը կարծեմ գիտնալ — տեղեկութիւն իսկ չունէր, թէ այս մեծ բանաստեղծէն կը սիրուի[1]„։

Այս նամակը գրուած է Պետրոսի մահից մօտաւորապէս 20—22 տարի յետոյ, եւ ուրեմն կարող է մանրամասնութեան մէջ տարբերութիւն ունենալ։

Դուրեանի միւս բարեկամ, Արմէն Լուսինեան, ճշդում է Ս. սկզբնագիրը եւ ասում է, որ աղջիկը կոչւում էր Սաթենիկ, բայց աւելացնում է, որ այդ ժամանակ (1894ին) նա մեռած չէր եւ ապրում էր տակաւին։

Սակայն Դուրեանի առաջին կենսագիր Բարսեղ Էքսէրճեանը, առանց որ եւ է վերապահութեան, հաղորդում է հետեւեալը[1]։

---

[1] Արշակ Չօպանեան, "Պետրոս Դուրեան„, 1894 թ., էջ 72, Թիֆլիս։

[1] Բարսեղ Էքսէրճեան, "Ընդարձակ կենսագրութիւն Պ. Դուրեանի„, Կ. Պոլիս 1893, էջ 55։

"...Համեստ եւ անկեղծ կոյս մը կար, որ գրժած չէր Նորա (Պետրոսի) սիրոյն։ Այլ ազնուականութեան հպարտութիւնը այդ երկու սրտերը կը բաժնէ, մինչեւ որ մահն ալ կու գայ եւ յաւիտեան կը բաժնէ երկուքն ալ աշխարհէս։"

Բոլոր այս պատմութիւնները կարող են որոշ լուսաւորութիւն ստանալ, եթէ բանաստեղծութիւններից զատ՝ միտ դնենք Պետրոս Դուրեանի "Թշուառներ" թատերագրութեան եւ նրա շատ նշանակալից յառաջաբանին։

Այդ թատերախաղի մէջ Դուրեան դուրս է բերել ի միջի այլոց երկու սիրահարներ — Էդուարդ եւ Վարդուհի — որոնք նման են Լամարտինի Ռաֆայէլին եւ Յուլիային։ Էդուարդ բանաստեղծ է, զուրկ նիւթական միջոցներից, որի տաղանդը կորչում է քաջալերութեան պակասից։ Տարակոյս չկայ, որ Էդուարդը Դուրեանն ինքն է։ Վարդուհու հայրը ժամանակակից մարդ է եւ խորշում է աղքատութիւնից։ Երկու սիրահարները չեն կարողանում կեանքը վայելել եւ մեռնում են ողբերգական պայմանների մէջ։

Այս թատերախաղի յառաջաբանի մէջ Պետրոս Դուրեան հաղորդում է, որ դէպքերը առնուած են իրականից, անշուշտ հարկաւոր "աւելացութիւններով"։

Այսպէս։ Թէ բանաստեղծութիւնները, թէ "իրական" թատերագրութիւնը եւ թէ կենսագրական որոշ մանրամասներ բաւականաչափ հիմք են տալիս ընդունելու, որ Պետրոս Դուրեան ունեցել է մի այսպիսի ծանր եւ անյաջող սէր։ Այդ ծանրութիւնը, որ նրա դժբախտ եւ էքսաւոր կեանքի հետեւանք է եղել, աւելի եւս դառնացրել է նրա կեանքը եւ մռայլեցրել է նրա անկումը։

5. Հիւանդութիւնը եւ մահը։

Այսպէս. Պետրոս Դուրեան ամէն կերպ աշխատեց կեանքի դժուարին ասպարիզում իր համար մի համեստ անկիւն ստեղծել։ Եւ չնայած իր բոլոր ջանքերին, չնայած իր անդադրում աշխատանքին — նա չկարողացաւ լուծել տնտեսական ահաւոր խնդիրը։ Նրա աշխատանքը չգնահատուեց մեր բիրտ իրականութեան մէջ եւ հասարակական այժմեան կարգերում։ Արուեստագէտը, բանաստեղծը, ժողովրդի վերածնութեան սքանչելի վարպետը խեղդուեց այն միջավայրում, ուր անկիւն ունենալու համար հարկաւոր է դրամի ոյժը։

Ահա մէկ կողմը։

Միւս կողմից՝ նա չկարողացաւ իր ըմբռնած որդիական պարտականութիւնը կատարել դէպի իր ընտանիքը։ Պետրոսի մտահոգութեան մէջ այս խնդիրը հիմնական տեղ է գրաւում։ Նրա հայրը էքսաւոր մարդ էր, երկաթագործի աշխատանքը նրան շատ բան չէր տալիս։ Մայրը գուլպայ գործելով ոչինչ չէր կարողանում վաստակել։ Պետրոսն աւարտած էր արդէն ուս-

ման ընթացքը, թատերախաղեր էր գրում, բանաստեղծ էր — պէտք է ուրեմն կարողանար ընտանիքի ծանր բեռը թեթեւացնել: Եւ սակայն տաղանդաւոր Պետրոսը այդ աւելի եւս չկարողացաւ:

Ահա դժբախտութեան երկրորդ կողմը:

Պետրոս Դուրեանն աշխարհ էր եկել մի բարոյական բարձր առաքելութեան համար: Որքան էլ ճշմարտապէս համեստ լինէր նա — զգում էր խորապէս իր ներքին կոչումը: Նա ստեղծագործում էր երկեր եւ կամենում էր, որ այդ երկերը հրատարակուին, ժողովուրդը կարդայ, "քննադատութեան" բովից անցնեն — կեանքը փոփոխուի վերջապէս: Իբրեւ գաղափարի մարդ՝ նրան աւելի էր ճնշում այս խնդիրը, քան նիւթականի ծանր մտահոգութիւնը: Եւ սակայն նրա գրագէտի իղձը եւս մնաց անկատար:

Ահաւասիկ տանջանքի երրորդ աղբիւրը:

Պետրոս Դուրեանը, իբրեւ նուրբ, բանաստեղծ հոգի, սիրեց գեղեցկութիւնն ու անմեղութիւնը այնպէս, ինչպէս քչերն են կարողանում սիրել:

"Բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ,
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ..."

Կրակը վառուեց սրտի խորերում, "թոթվեց թեւերը հոգին մոլար" — բայց "խումբ մը կնճիռ, բուռ մը կայծակ, դժոխք մ'անէծք" վերջ դրաւ պատանեկան բուռն ոգեւորութեան:

"Նէ հեռացաւ..."

Ահաւասիկ զարհուրելի իրականութիւնը, որ փոթորիկ առաջ բերեց բանաստեղծի էութեան մէջ:

Եւ այս դժբախտութիւնների վրայ աւելացաւ սոսկալի հիւանդութիւնը:

Պետրոս Դուրեանի կենսագրութեան մէջ ոչինչ չէ ասուած այն մասին, թէ նա դպրոցական շրջանում կամ ուրիշ ժամանակ հիւծախտի նշաններ է ունեցել: Ընտանիքի անդամներից մէկը կամ միւսը երկարակեաց չեն եղել, այո՛, բայց նրանց մահուան պատճառը ըստ երեւոյթին ուրիշ հիւանդութիւն է եղել:

Պետրոս Դուրեանի հիւծախտը այսպիսի պայմաններում պէտք է առաւելապէս նրա տնտեսական դրութեան եւ նրա անդադրում աշխատանքի հետեւանք նկատել:

Եւ այս կրկնապէս աւելի ծանր է մեզ համար: Ծանր է այն պատճառով, որ քսան տարեկան պատանին տնտեսական անիծեալ հարցին զոհ է գնում, ոչնչանում է այն ժամանակ, երբ նա կարող էր ստեղծել անգնահատելի արժէքներ:

Նայեցէք նրա ստեղծագործութեան ժամանակին: Միայն 1871 թուականը այնպիսի երկեր է տուել, որ կէս դար յետոյ այնքան թարմ են եւ դեռ ո՛րչափ ժամանակ թարմ ու գեղեցիկ կը մնան:

1869 թուականի սկզբներում հիւանդութեան առաջին նշանները երեւում են։ Բայց Պետրոս Դուրեան, որ կենսագրութեան տուեալների համաձայն, կայտառ, աշխոյժ, առողջ տղայ էր — բնաւ ուշադրութիւն չէ դարձնում հիւանդութեան վրայ։ Աշխատում է տենդային եռանդով, աշխատում է "հողի կանթեղով", առանց հացի եւ առանց տաք անկիւնի։

Սակայն հետզհետէ հիւանդութեան նշանները աւելի որոշ են երեւում, եւ սոսկալի հաղը սկսում է պատռել Պետրոսի կուրծքը։ Ծնողները ոչինչ չեն կարողանում անել։ Մի չքաւոր ընտանիք, որ հազիւ է կարողանում իր օրական սեւ հացը խլել աշխարհի անիրաւութիւնից — ի՞նչ կարող է անել հիւծախտի ահաւոր ոյժի դէմ։

1871 թուականի յունիսից յետոյ հիւանդութիւնը սկսում է ծանրանալ։ Եւ Պետրոսը խորին դժկամակութեամբ անկողին է ընկնում։

Սկսւում է նրա հոգու փոթորկալի շրջանը։ Մինչեւ հիմայ ստացած բոլոր հարուածները — տնտեսական նեղութիւնները, ընտանեկան մտահոգութիւնները, գրագէտի անկատար մնացած ցանկութիւնները եւ վերջապէս կորցրած, թաղուած սէրը — նրա հոգում խորին դրամատիզմ են առաջացնում։

Պետրոսի հոգին ընդհարւում է այդ դաժան ոյժերին, ինչպէս հին յոյների մէջ մարդն ընդհարւում էր արտաքին, ճակատագրական ոյժերին։

Եւ Պետրոս Դուրեանն էլ հին աշխարհի զարկուածների պէս, իբրեւ մի Էդիպ, բացականչում է հոգու խորութիւններից.

"Այս ճակարագիրն ինչ սեւ է Աստուած,
Արդեօք դամբանի մրուրով է գծուած։"

Նրա բանաստեղծութիւնների լաւագոյն էջերը ստեղծագործուած են 1871 թուականին, այսպիսի զարհուրելի իրականութեան մէջ։ Այդ գործը ներշնչուած է նրա կեանքով, մի կեանք, որ մտածուած, ներկայացուած չէ երեւակայութեան թափով, այլ իրական է խորապէս։

Եւ նրա բանաստեղծութիւնը, որ սկզբում ռոմանտիկական էր, այժմ դառնում է աւելի բարձր, աւելի ճիշտ, աւելի հոգեբանական, քան էր այդ ժամանակ սովորական ռոմանտիկ բանաստեղծութիւնը։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնը նրա կեանքի բանաստեղծութիւնն է։

Ստեղծւում է "Տրտունջքը", ստեղծւում է "Զղջումը", ստեղծւում են խօսքի, զգացմունքի, անկեղծութեան եւ գեղեցկութեան անմահ երկեր նրա այրուող հոգու մշտաբորբոք վառարանից։

Եւ Պետրոս Դուրեանի բանաստեղծական մեծութիւնն այնտեղ է, որ նա կարողանում է զարմանալի կերպով վերլուծել իր ներքինը եւ աւելի եւս զարմանալի կերպով արտայայտել այն։

Այս ստեղծագործութեան ամենաբուռն շրջանում նա զգում է իր մահը եւ երգում է այդ մահը խորին դրամատիզմով։

1871 թուականի դեկտեմբեր 10ին գրում է իր բարեկամ Արմէն Լուսինեանին հետեւեալ ճակատագրական խօսքերը.

«...Կուրծքիս տակ հրաբուխ կայ, կրակներ կեռան եւ կ'այրեն զիս։ Այս կրակը երկնքի կրակի նման է, որ չի մարիր եւ չպիտի մարի, մինչեւ որ սպառէ ամէն ինչ...»

Իր մահը զգում եւ տեսնում է նա ամէն վայրկեան։ Սիրտը կտրատւում է, բայց չնայելով դրան՝ պատրաստւում է մի ցաւագին «մնաք-բարով» ուղղել աշխարհին, ապրող մարդկութեան.

«...Ազնիւ բարեկամ, կը դողդոջեմ, բերնէս արիւն կը հոսի, կը հիւծիմ, անդուլ կերպով քնարս կը թոթուեմ անհուն «մնաք-բարով»ի մը համար անոնց, որ չճանաչեցին զիս...»

Այս «մնաք-բարով»ի պատմութիւնը Պետրոս Դուրեանի ողբերգական կեանքի վերջին սրտառուչ էջն է... Եւ այն ժամանակ, երբ պատանի անմեղ բանաստեղծը ուղեւորւում է այն աշխարհը, «որտեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձել», այն ժամանակ, երբ նրա լուսաւոր հայեացքի առջեւ կախւում է զարհուրելի յաւերժական մթութիւնը — նա յիշում է դարձեալ մնացող սերունդը, յիշում է ապրող մարդկութիւնը եւ անուշ սրտով ցանկանում է նրանց ամէնին եղբայրական «մնաք-բարով»...

Եւ որպէս զի ինքն էլ գէթ բարոյապէս ապրի մնացող սերունդի հետ՝ մահից առաջ մեղմօրէն խնդրում է.

«Եղբայրս, քանի մը կտոր բան գրեր եմ։ Նայէ՛, որ հրատարակուին. չեմ ուզեր որ կորսուի յիշատակս...»

Կամ ուրիշ արտայայտութեամբ՝

«...Քանի մը պատառ թղթերու վրայ արցունքոտ տողեր գրեր եմ։ Անշուշտ բարեկամներս զանոնք պիտի պատուեն եւ արեւի լոյս տեսցնեն...»

Քերթողը մեռնում է 1872 թուի Յունուարի 21ին, եւ մեզ մնում են նրա «արցունքոտ» տողերը...։

III.

ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետրոս Դուրեանի գրական գործունէութիւնը իր ապրած կեանքի, իր ժամանակի, միջավայրի եւ սոցիալական պայմանների արտադրութիւնն է։ Թող ամենեւին զարմանալի չթուայ, որ մենք այս գերազանցապէս "անհատական" բանաստեղծի գործերը համարում ենք ոչ միայն իր կեանքի, այլ եւ սոցիալական պայմանների արդիւնք։ Որքան էլ անհատական լինին արուեստագէտները, այնուամենայնիւ ստեղծում են այն, ինչ ժամանակի սոցիալական կեանքը կարող է թելադրել։ Բանաստեղծի մեծութիւնը ոչ թէ այն տեղ է, որ դուրս լինի հաւաքականութեան սահմաններից, այլ այն տեղ է, որ կարողանայ նրա արտացոլումը լինել։ Եւ այս ասելով, մենք ոչ թէ անհատների մեծութիւնը, տաղանդը նուազեցնում ենք, այլ ցանկանում ենք արժանի տեղ տալ սոցիալական մեծ ամբողջութեան, որի մի մասնիկն է տաղանդը։ Ոչ թէ առաջինը նեղացնելու նպատակ ունենք, այլ երկրորդի ունեցած լայնութիւնը խոստովանելու պարտաւոր ենք։

Չպիտի բնազանցական նախնի մեթոդներով եւ ռոմանտիք աշխարհահայեացքով անհատի կամքը ամէն բանի կենդրոն յայտարարենք։ Պիտի իրատես լինենք եւ պիտի ընդունենք, որ նոյն իսկ ամենամեծ անհատները ենթարկւում են ժամանակի, պատմութեան, սոցիալական ոյժի օրէնքներին։

Կեանքը փոփոխւում է միշտ, հաւաքականութիւնը թաւալում է պատմական զարգացման ճանապարհի վրայ։ Բանաստեղծները եւ հերոսները երեւան են գալիս այս զարգացման մթնոլորտում, եւ մեծ են այնչափ, որչափ արտայայտում են այդ զարգացումը։

Ի՞նչ են դասական հեղինակները, եթէ ոչ աւատական-սոցիալական կարգի եւ տնտեսութեան արտայայտիչները։ Ի՞նչ են ռոմանտիք արուեստագէտները, եթէ ոչ "երրորդ դասակարգի" յեղափոխութեան ազդարարները կամ նրա ստեղծած կեանքի պատկերացնողները։ Ի՞նչ է օրինակի համար Տոլստոյը, եթէ ոչ ռուս գիւղացիական սոցիալական կարգի եւ իդէալների վիպասանը։ Ի՞նչ է Մաքսիմ Գորկի, եթէ ոչ ռուս գործաւոր դասի կեանքի եւ ձգտումների բանաստեղծը։ Ի՞նչ է մեր Խաչատուր Աբովեանը, եթէ ոչ հայ գիւղացիական քաղաքակրթութեան եւ մեր գիւղացիական տնտեսութեան վիպասանը։ Ի՞նչ են Շիրվանզադէ՝ Գրիգոր Զոհրապ, եթէ ոչ Կովկասի եւ Կ. Պոլսի դրամատիրական կարգերի ստեղծած երեւոյթների եւ հոգեբանութեան արտայայտիչները։

Եւ այսպէս. իւրաքանչիւր հեղինակ որոշ ժամանակի տնտեսութեան, սոցիալական կառուցուածքի եւ իդէալների հետ կապուած է սերտօրէն։ Հարկաւոր է միայն լաւ ուսումնասիրել հեղինակների գործերը, նրանց ժամանակը, կեանքի պայմանները — որպէս զի կարելի լինի գտնել այն խորունկ կապը, որ անշուշտ կայ արուեստագէտի եւ հաւաքականութեան միջեւ։

Կարող են լինել անշուշտ այնպիսի հեղինակներ, որոնք կարճատեւ կամ մանաւանդ երկարատեւ գործունէութեան ընթացքում արտայայտում են երկու տարբեր ժամանակների կամ տարբեր հաւաքականութեան իդէալները։ Միանգամայն հնարաւոր է այդ, որովհետեւ կեանքը գտնւում է յարակայ փոփոխութեան մէջ — եւ հեղինակները կարող են այդ զարգացման արտայայտութիւնը լինել։

Կարող է պատահել նաեւ այն, որ միեւնոյն ժամանակի եւ միեւնոյն հասարակակարգի մէջ ապրող արուեստագէտները արտայայտեն սոցիալական եւ անձնական տարբեր իդէալներ։ Միանգամայն հնարաւոր է նաեւ այդ, որովհետեւ տիրող հասարակակարգը շարունակութիւն է մէկ ուրիշ հասարակակարգի, որի համակիրները դեռ ապրում են տուեալ ժամանակում, եւ միւս կողմից՝ սկզբնաւորութիւն է գալիք նոր հասարակակարգի, որի կերտողները արդէն երեւացել են եւ գոյութիւն ունին այդ ժամանակում։

Այսպէս, օրինակի համար, այժմեան Ֆրանսիայում տիրում է դրամատիրական հասարակակարգ։ Այդ կարգի արուեստագէտները շատ են։ Բայց կան նաեւ ուշացած բանաստեղծներ, ինչպէս մի Լէօն Դոգէ, որոնք դեռ ներբողում են աղնուականութեան եւ նոյն իսկ միապետութեան ժամանակը, նոյնպէս կան եւ այնպիսի պայծառատես արուեստագէտներ, ինչպէս "Ժերմինալի" հեղինակը, ինչպէս Հանրի Բարբիւս, որոնք տեսնում են այժմեան հասարակակարգի զարգացումը, նրա անխուսափելի տեղատուութիւնը եւ նոր հասարակակարգի երեւումը։

Այս բոլորը ընդհանրապէս ճիշտ են ամէն տեսակի արուեստագէտների համար։ Բայց գրական տարբեր տեսակները կարող են տարբեր ձեւով իրենց մէջ պարունակել հաւաքականութեան ազդեցութիւնը։ Բանաստեղծութեան մէջ, մանաւանդ քնարական բանաստեղծութեան մէջ, այդ ազդեցութիւնը երեւում է բաւականաչափ պատկերաւոր կամ ծածկեալ ձեւով, այդ է պատճառը, որ մակերեւոյթական ընթերցողները կամ դիտողները յաճախ չեն կարողանում նշմարել այն։

Անշուշտ, արուեստը մնում է արուեստ։ Եւ լաւագոյն արուեստն այն չէ, որ հաւաքականութեան ազդեցութիւնը կամ իդէալները պարունակում է ուղղակի կերպով։ Հրապարակագրութիւնը, պատմութիւնը, բարոյագիտութիւնը չպիտի շփոթել բնաւ արուեստի հետ, որ պատկերների հետ գործ ունի։ Կամ ուրիշ խոս-

քով՝ հաւաքականութեան իդէալները եւ պատմական զարգացումը չպիտի շփոթել բնաւ միտումի հետ, որ շատ վէպերի եւ թատերախաղերի մէջ երեւան է գալիս եւ որ ամենեւին գեղարուեստական չէ։ Մեզանում երկար ժամանակ այնպէս էին կարծում, թէ հաւաքականութեան իդէալները ներկայացնելու կամ գեղարուեստօրէն արտայայտելու համար՝ կարեւոր է միտումը, կամ ինչպէս արեւելահայերը անուանում էին՝ տենդենցիան։ Գեղարուեստական մեծագոյն մոլորութիւն է սա, որ առաջ էր մղում երկրորդական երկերը, որովհետեւ տենդենցիա ունէին, եւ յետին գծի վրայ էր թողնում իսկական արուեստագէտներին, որոնք միտում չունէին, բայց որոնք հազարապատիկ աւելի լաւ էին ներկայացնում կեանքը, հաւաքականութիւնը, պատմական զարգացումը եւ իդէալները։

Ինչ որ կարեւոր է արուեստագէտի համար, այն չէ, որ լաւագոյն գաղափարները փոխառնէ եւ իր հերոսների բերանը դնէ, այլ այն է, որ հաւաքականութեան միջից դուրս հանէ կենդանի անձնաւորութիւններ եւ կենդանի պատկերներ, անկեղծ, բնական ստեղծագործութեամբ — եւ իբրեւ տիպ արձանացնի նրանց։ Ոչ թէ ուրեմն քարոզ, այլ պատկեր, ոչ թէ պրոպագանդա, այլ զգացում, ոչ թէ բարոյագիտութիւն, այլ բարոյականը, որովհետեւ գեղեցիկն ինքնին բարոյական է եւ ճշմարիտը՝ ինքնին կրթողական։

Այս ընդհանուր դիտողութիւնները գեղարուեստական գործի եւ կեանքի փոխ-յարաբերութեան վերաբերմամբ կարեւոր համարեցինք, որպէս զի Պետրոս Դուրեանի երկերը աւելի լաւ կարողանանք պատկերացնել։

Եւ այժմ անցնենք ուրեմն բանաստեղծի կրած ազդեցութիւններին։

—

Պետրոս Դուրեանի կրած մանկական տպաւորութիւնների մէջ կարեւոր տեղ է գրաւում նրա ընտանիքի կեանքը։ Ցնտեսական կարիքի եւ չքաւորութեան մէջ հեծող այդ ընտանիքը յաճախ երեւում է նրա նամակների, թատերախաղերի եւ բանաստեղծութիւնների մէջ։ Մասնաւորապէս «Թշուառներ»-ի մէջ դուրս բերուած աղքատ ընտանիքը Պետրոս Դուրեանի ընտանիքի պատկերն է, եւ Էդուարդն էլ — չքաւոր բանաստեղծը — նրա բանաստեղծական ցոլացումն է։ Կարելի է ասել, որ «Հէքին հիւղը» եւ «Հողէ կանթեղը» մերթ ծածկուած, մերթ բացայայտ ձեւով երեւում է միշտ նրա ստեղծագործութեան մէջ։

Այս հիւղի հետ եւ այս հողէ կանթեղի քով նրա մոր պատկերը միշտ անբաժան է։ Զգացումներով եւ թախիծով լեցուն այդ կինը, որ ծնունդ է տուել Պետրոս Դուրեանին, ապրում է վառ նրա երեւակայութեան մէջ։ Պետրոս Դուրեանը սիրում է նրան։ Մօր ազդեցութիւնը նրա մանուկ հոգու վրայ տիրական է եղել։ Այն

զգացումները, որ յետոյ այնքան մեծ թափով արտայայտուեցին Դուրեանի բանաստեղծութեան մէջ, եղել են մոր մէջ, միջավայրից եւ հաւաքականութիւնից անցել էին նրան եւ ապրում էին նրա հոգում անգիտակից կերպով։ Պետրոս Դուրեանը ժողովեց նրանց, ղտեց իր երեւակայութեան եւ գիտակցութեան հնոցում եւ ձեւ ու կերպարանք տալով՝ լոյս աշխարհ բերեց։ Այս ճանապարհը այն բազմաթիւ ձեւերից մէկն է, որով բանաստեղծը կապւում է իր միջավայրի հետ եւ կամ որով հաւաքականութիւնը ազդում է բանաստեղծի վրայ։

Պետրոս Դուրեանի "Տրտունջքը" նրա մայրն է, որովհետեւ մոր "արտասրն" է յղացել այն։ Սիրող եւ աստուածասէր մայրը, որ երբեք չի լացել եւ որ մեղմօրէն կրել է ճակատագրի դառն հարուածները — Պետրոսի ծանր տագնապները տեսնելով՝ լաց եղաւ վերջապէս։ Այս լացը ինքնին նշանակում է բողոք Աստծու դէմ։ Մի օր յետոյ գրուած "Զղջում" բանաստեղծութիւնը մոր հաշտութիւնն է, որովհետեւ նրա հոգին չի կարող մշտապէս տրտնջալ Աստծու դէմ։

Ընտանիքից դուրս Պետրոս Դուրեան անմիջական տպաւորութիւններ է ստանում շրջապատից, բնական միջավայրից։ Նրա պատուհանից երեւում է միշտ գեղեցիկ Բոսփորը — որ ինքը մի բանաստեղծութեան մէջ անուանում է Սթամպօլի կապոյտ գոտի։ Երեւում են խորհրդաւոր ու տխրական նոճիները, որ երգել է

նա այնքան թախծութեամբ եւ թերեւս նրանից յետոյ պոլսահայ գրականութեան մէջ դարձել է բանաստեղծութեան մշտական նիւթ։ Դիտել է շարունակ աստղազարդ երկինքը, որ այնքան մօտ էր նրան, պտտել է կանաչ, երազական դաշտերում, բարձրացել է Զամլըճայի բարձունքները վաղամեռիկ Վարդանի հետ, տեսել է լեռը, երկինքը, ապրել է մի խօսքով ողջ բնութեան մէջ։ Այս բոլորը նրա մանկական, պատանեկան, երիտասարդական երեւակայութեան վրայ անջնջելի հետքեր են թողել։ Նա ձուլուել է բնութեան հետ եւ դարձել է նրա մի մասնիկը։ Իր կեանքը, իր գոյութիւնը, իր ամբողջ երջանկութիւնը նա ըմբռնում է բնութեան ծոցում, պայծառ եւ աստեղազարդ երկնակամարի տակ։ Իր սէրը նուիրական է դարձնում նրանով։

"...Լսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բնութիւնն եղաւ պսակիչ,
Մեզ պսակեց աստղերով..."

Բնական միջավայրը նրա բանաստեղծութեան մէջ կենդանացած է։ Կեղծ դասական գրականութեան դէմ ուժեղ հակահարուած եղաւ նրա բանաստեղծութիւնը ի միջի այլոց նաեւ նրանով, որ մարդն ու ընկերութիւնը կապեց բնութեան հետ։ Եւ այս սկզբունքը նա իւրացրեց ոչ թէ տեսականապէս, ռոմանտիքների երկերը կարդալով, Լամարտինի, Վիկտոր Հիւգոյի, Ժան-Ժակ Ռուսսոյի, Շատոբրիանի

ազդեցութեան տակ, այլ առաւելապէս գործնական, անմիջական ճանապարհով։ Այն բազմաթիւ տպաւորութիւնները, որ նա ունէր Բոսփորի զարմանալի բնութիւնից, եւ որ մթերուած էին նրա երեւակայութեան մէջ — դուրս թափուեցին ոչ թէ նմանողութեամբ, այլ ինքնուրոյնութեամբ եւ անկեղծութեամբ։ Մինչեւ անգամ աւելի նուազ ինքնաբուխ հեղինակներ, որ նրանից առաջ ունէինք, ծնուելով Բոսփորի երազական միջավայրում, առաւել կամ պակաս բնութեան երգիչներ էին։

Արսէն Բագրատունին, կեղծ դասականութեան այդ տարամերժ վարպետը, իր "Հայկ Դիւցազն"ի էջերում բնութեան տեսարանների գեղեցիկ նկարագրութիւն ունի։ Մկրտիչ Պէշիկթաշլեան, Ղեւոնդ Ալիշան — երկուսն էլ իրենց գործի մէջ խոշոր մասով կեղծ դասականութեան հետեւողներ եղան, բայց երկուսն էլ բնութեան գեղեցկութիւններին ջերմ երգեր նուիրեցին։ Ալիշանը մանաւանդ իր մի քանի բանաստեղծութիւնների մէջ — գրուած միջնադարեան տաղերգուների ժողովրդական լեզուով եւ բոյրով — աննման էջեր ունի, որոնց մէջ բնութիւնը խօսում է, ժպտում է, լալիս է, ծիծաղում է, ապրում է վերջապէս։ Կարդացէք "Շուշանն Շաւարշանայ", գեղեցիկ Սանդուխտի այդ սքանչելի պոէման — եւ դուք կը զարմանաք թէ ինչպիսի գեղարուեստական հմայք ունի Ալիշանի նկարագիրը, գունաւոր գրիչը։

Պետրոս Դուրեան երգեց բնութիւնը բո-

լորովին ինքնաբուխ կերպով, առանց ամենափոքր չափով իսկ ենթարկուելու կեղծ դասական գրականութեան, որ նրանից առաջ տիրապետող էր մեղանում եւ բաւականաչափ ազդեցիկ էր նոյն իսկ նրա ժամանակ։

Եւ այս տեսակէտից, այնուհետեւ եկող արեւմտահայ բանաստեղծները կրում են Պետրոս Դուրեանի կախարդական ազդեցութիւնը։

Ընտանիքը եւ բնական միջավայրը չէին լրացնում Պետրոս Դուրեանի ամբողջական տպաւորութիւնները։ Վեց տարեկան հասակից սկսած դպրոց մտաւ նա, ուր մնաց մօտաւորապէս տասն տարի։ Այսքան երկար կեանքը մի հիմնարկութեան մէջ չէր կարող անցնել առանց նշանակալից ազդեցութեան։ Չի կարելի ասել, թէ այս ազդեցութիւնը միայն դրական եղաւ։ Սքոլաստիքական մանկավարժութեան մէջ մանուկ Պետրոսը բաւական ժամանակ խեղդուած մնաց։ Նրա սկզբնական շրջանի բանաստեղծութիւնների, նրա թատերագրութիւնների եւ մանաւանդ նրա թատերական ոտանաւորների մէջ երեւում են այդ դաստիարակութեան հետեւանքները։ Այդ էջերի մէջ ներշնչում չկայ, բռնազբօսիկ տրամադրութեան ու զգացումների ակամայ վերարտադրութիւններ են նրանք, որոնք մատնում են միջնադարեան դպրոցականի նրա անցրած կեանքը։

Սակայն եւ այնպէս, դպրոցի ազդեցութիւնը չի կարելի միայն բացասական համարել։ Այնտեղ սովորեց նա Հայոց լեզուն, թէ գրա-

բար եւ թէ աշխարհաբար, ծանօթացաւ հին եւ նոր գրականութեան հետ։ Եւ որովհետեւ ինքը տաղանդաւոր պատանի էր՝ կարողացաւ իր սովորած բազմաթիւ նիւթերի մէջ հոտառութեամբ զգալ, թէ ո՞րն է աւելորդ եւ ո՞րն է կարեւոր։ Բանաստեղծական ներշնչումներ քաղեց նա Գրիգոր Նարեկացու աննման գրքից, թէեւ այդ գիրքը գալիս էր տասներորդ դարի հնութիւնից։ Պետրոս Դուրեանի հեծեծանքները, հառաչանքները, հոգեկան գալարումները, սրտի խռովքը, ճիչը, յուսահատութիւնը, ներքին էութեան փոթորիկը շատ նման են հոգեբանօրէն Նարեկի երգչին։ Միայն թէ մէկը իր "հառաչանքի ձայնը" վերընծայում է զաղտնիքների տեսողին, իսկ միւսը իր "հեւացող քնարով" խնկարկում է սիրտն անապատ։

Մեր պատմագիրների ծանօթութիւնը, որ նա դուրս բերեց դպրոցից, նպաստեց նրան իր պատմական թատերախաղերը գրելիս։ "Սեւ Հողերը", "Անիի Աւերումը", "Արշակունի Թագաւորութեան Անկումը" իրենց բոլոր թերութիւններով հանդերձ՝ նոր գրականութեան սաղմեր են պարունակում իրենց մէջ եւ ցուցահանում են պատմական որոշ զգացում։

Դպրոցի մէջ նա ծանօթացաւ նաեւ նոր գրողներից Ալիշանի հետ, որի ժողովրդական ոգով գրուած բանաստեղծութիւնները անշուշտ առանց տպաւորութեան չանցան։ Իր նամակներից մէկի մէջ Պետրոս Դուրեան ասում է, որ

ինքը սիրում է սոխակի փոխարէն ըլբուլ գործածել։ Ալիշանի սիրած բառն է սա, որ "Աւարայրի ըլբուլ"ով այնքան սրտերի հետ քաղցրօրէն զրուցեց։

Հայոց լեզուի հետ միասին Իւսկիւտարի ճեմարանում նա սովորեց նաեւ ֆրանսերէն լեզուն։ Այս լեզուի ծանօթութիւնը նրան շատ օգտակար եղաւ։ Նրա միջոցով Պետրոս Դուրեան տեղեկութիւններ ստացաւ ոչ միայն ֆրանսական, այլ եւ մասամբ գերմանական եւ անգլիական գրականութիւններից, որոնց մասին քիչ յետոյ քանի մի խօսք կ'ասենք։

Դպրոցից անկախ՝ Պետրոս Դուրեանի գրական զարգացման վրայ անշուշտ ազդեցութիւն ունեցան հայ եւ օտար հեղինակների ընթերցանութիւնները։ Հայ հեղինակների թւում արդէն ակնարկեցինք Գրիգոր Նարեկացին, Ղեւոնդ Ալիշանը, մեր պատմագիրները, որոնք այսպէս թէ այնպէս որոշ դեր կատարեցին։

Միւս հեղինակներից պէտք է յիշել նրա ժամանակակից Մկրտիչ Պէշիկթաշլեանին, Թոմաս Թերզեանին, Սրապիոն Հէքիմեանին, որոնք նոյնպէս թատերախաղեր եւ բանաստեղծութիւններ էին գրում։ Բայց դժուար է նկատել այս հեղինակների առաւել կամ նուազ ազդեցութիւնը, այնքան Պետրոս Դուրեանը տարբեր է նրանցից։ Գուցէ կարելի լինի որոշ նմանութիւն գտնել միայն Պէշիկթաշլեանի աշխարհիկ քանի մի բանաստեղծական էջերի եւ Դուրեանի բանաստեղծութեան միջեւ, թէեւ այդ նմա-

նութիւնն էլ ներքին չէ, այլ աւելի արտաքին է։

Հայ գրողներից եւ գործիչներից նա ամենից շատ սիրում է Խրիմեան Հայրիկին։ 1869 թուականին, երբ Խրիմեանը Պատրիարքական պաշտօնով Կ. Պոլիս է տեղափոխւում, Պետրոս Դուրեանը նրան երեք բանաստեղծութիւն է նուիրում։ Սա մի բացառիկ դէպք է Պետրոս Դուրեանի գրական գործունէութեան մէջ։ Ներբողների եւ ձօնների հնաւանդ սովորութիւնը չունէր նա։ Խրիմեան Հայրիկից յետոյ նա չէ գրել ուրիշ որ եւ է հասարակական կամ գրական գործչի մասին։ Ունի երկու տաղ, նուիրուած իր մտերիմ ընկերներին, որոնք ամենեւին հանրային կամ գրական նշանակութիւն չունէին, — մէկը իր "ամենասիրելի" Վարդան Լուփթեանին, միւսը իր բարեկամ Յ. Ճանփէսճեանին։

Ինչ որ Խրիմեանին նուիրած տաղերի մէջ արտացոլում է, այդ ոչ թէ պատրիարքական պաշտօնի յիշատակութիւնն է, այլ նրա ժողովրդական — ռամկական դէմքն է։ Խրիմեանը նրան գրաւում է իբրեւ "Վարագ լերան մաճկալ", իբրեւ Հայաստանի գեղջկութեան արտայայտիչ։ Ակնարկութիւններ կան այդ տաղերի մէջ այն մասին, որ Խրիմեան իբրեւ ազատութեան եւ իրաւունքի առաջին մարտիկը, հալածանքի ենթարկուեց մեր կղերի եւ մեր ամիրաների կողմից։ Այդ երգերի մէջ վեր է հանուած այն մարդը, որ 50—60 ական թուականներին պաշտպանում էր "Մշոյ կտրիճներին

եւ աղջիկներին", եւ որ Հայաստանի գիւղերում լոյս էր տարածում.

"Լոյս, լոյս տեղան ամէն տեղ...
Լոյս հիւղակին, լոյս վիհին..."

Այս ժողովրդական դերից զատ՝ Խրիմեան Հայրիկը նրան գրաւում էր նաեւ իբրեւ բանաստեղծ.

"Աւարայրի նա վարդին
Սոխակն եղաւ տրտմագին..."

Կամ թէ ուրիշ արտայայտութեամբ՝

"...Նա սիրտն ըրաւ Հայրենայուշ գոռ քնար..."

Անշուշտ այս ոտանաւորների մէջ չկայ բնաւ այն մեծ գեղեցկութիւնը, որ երեւաց Պետրոս Դուրեանի միւս բանաստեղծութիւնների մէջ։ Նրանք դպրոցականի անփորձ շարադրութիւններ են, բայց դրանով մէկտեղ յայտարար են այն բանի, թէ ինչ էր սիրում եւ գնահատում մեր կեանքում Պետրոս Դուրեան։ Կ. Պոլսի մէջ ծնուած եւ մեծացած բանաստեղծի համար հոգեկան եւ բարոյական այն տրամադրութիւնը, որ նա այդ երգերով ցուցահանեց, շատ յատկանշանական է։ Յամենայն դէպս այդ տրամադրութիւնը ցոյց է տալիս, թէ ինչ թռիչք ունէր Իւսկիւտարի պատանի բանաստեղծը իր անյոյզ եւ անխռով շրջապատի մէջ...

Օտար գրականութիւններից ի՞նչ հեղինակներ Պետրոս Դուրեանի վրայ տպաւորու-

թիւն են թողել։ Իր ստացած դաստիարակու-
թեամբ եւ իր գրական միջավայրի բերումով
նա ամենից շատ կապուած էր ֆրանսիական
ռոմանտիքների հետ։ Բայց անմիջապէս պէտք
է նկատել, որ Պետրոս Դուրեանի բանաստեղ-
ծութեան եւ ֆրանսիական ռոմանտիզմի միջեւ
բաւական աչքի ընկնող տարբերութիւն կայ։
Դժբախտութիւն է մեր բանաստեղծի համար,
որ նա արտաքին պարագաների դասաւորու-
թեամբ ամենից շատ ծանօթացել է ֆրանսիա-
կան ռոմանտիքների երկերի հետ։ Իր հոգե-
կան կառուցուածքով նա նրանց նման չէ ամե-
նեւին։ Ֆրասիական ռոմանտիքների ճարտա-
սանական արուեստը, չափազանցեալ ձեւերը,
արուեստականութեան կնիք ունեցող զգացում-
ները, յաճախ բռնազբօսիկ եւ անտեղի ոգեւո-
րութիւնը Պետրոս Դուրեանի անմիջական եւ
ինքնաբուխ բանաստեղծութեան հետ քիչ
առընչութիւն ունին։ Եւ այստեղ թերեւս կա-
րելի է նկատել մեր ժողովրդական պարզ, ան-
սեթեւեթ, անպաճոյճ եւ խորունկ արուեստի
տարբերութիւնը ֆրանսիական ռոմանտիք ա-
րուեստի համեմատութեամբ, չնայելով որ Դու-
րեանը ոչինչ չի գրել մեր ժողովրդական ա-
րուեստի ոճով կամ ձեւով։ Կարելի է ասել, որ
Դուրեանի անգիտակից, բայց օրգանական կապը
հայ արուեստի եւ մեր ժողովրդական բանաս-
տեղծութեան հետ աւելի իրական է, քան պա-
տահական կապը ֆրանսիական ռոմանտիքների
հետ։ Եւ մեր կարծիքով այս օրգանական կապի

մէջ պէտք է որոնել գլխաւոր պատճառն այն
իրողութեան, որ ֆրանսիական ռոմանտիք դպրո-
ցին չի ենթարկւում Դուրեանը եւ նրանից
վերցնում է առաւելապէս այն, ինչ որ համա-
ձայն է իր նկարագրին եւ բանաստեղծական ան-
հատականութեան։

Իր գրուածքների մէջ Պետրոս Դուրեան
յիշատակում է Լամարտինին, Վիկտոր Հիւգոյին,
Ալէքսանդր Դիւմային, նաեւ Ժան-Ժակ Ռուս-
սոյին եւ նոյն իսկ Մոլիէրին։ Բանաստեղծութիւն-
ների մէջ Դուրեան նման է աւելի Լամարտինին
եւ Ալֆ. դը Միւսէին, թէեւ չունի առաջինի
"Խորհրդածութիւնների" հանդարտ ու մեղմ
հոգեբանութիւնը եւ "Դաշնակների" հաշտ ու
կրաւորական վերաբերումը, եւ ոչ էլ Ալֆ. դը
Միւսէի զգայական, կրքոտ ու տարփալից բանաս-
տեղծութիւնը։ Վիկտոր Հիւգոն եւ Ալէքսանդր
Դիւման կապուած են նրա թատերագրութիւն-
ների հետ։ Ռոմանտիք դրամայի բուռն տրամա-
դրութիւնը, անակնկալները, չափազանցութիւն-
ները, հրաշալի ու յանկարծական դէպքերը,
ինչպէս եւ իդէալական շունչը կարելի է գտնել
Դուրեանի թատերագրութիւնների մէջ։

"Թատրոն կամ Թշուառներ" վերնագիրը
կրող իր թատերագրութեան մէջ հերոսների
բերանով խօսում է Լամարտինի "Ռաֆայէլի եւ
Ցուլիայի" մասին։ Եւ ինքն էլ յայտնում է
պարզ կերպով, որ իր ստեղծած երկու սիրա-
հարները — Էդուարդը եւ Վարդուհին — նման
են Լամարտինի հերոսներին։ Միեւնոյն թա-

տերագրութեան մէջ՝ դարձեալ հերոսների բերանով, խօսում է նաեւ Ռուսսօի մասին։ Կարելի է կարծել, որ ժընեւցի փիլիսոփայ-արուեստագէտի որոշ գործերի հետ ծանօթ է եղել նա։ Յամենայն դէպս, որոշ նմանութիւն կայ նոյն Էդուարդ եւ Վարդուհի սիրահարների եւ "Նոր Հելոիզ"ի իդէալական սիրահարների՝ Սէն-Պրէօի եւ Ժիւլիի միջեւ։ Ինչ վերաբերում է Մոլիէրին — որի մասին խօսք կայ նոյն "Թշուառներ" թատերագրութեան մէջ — մեզ թւում է, որ Ֆրանսիացի հանճարեղ կատակերգակը որոշ կապ ունի Դուրեանի վերոյիշեալ թատերագրութեան կատակերգական էջերի հետ։

Ֆրանսիական հեղինակներից զատ, կարելի է խօսել գերմանացի Շիլլերի եւ անգլիացի Շէքսպիրի մասին, որոնք այսպէս թէ այնպէս որոշ տրամադրութիւն են առաջ բերել Պետրոս Դուրեանի մէջ։ Նրա ժամանակակից միւս հեղինակները եւս ոգեւորւում են Շէքսպիրի եւ Շիլլերի գործերով, որոնք յաճախ բեմ էին հանւում մեր մէջ եւ մեծ ընդունելութիւն էին գտնում։

Հանճարեղ Շէքսպիրը թէեւ գրել է մեզանից աւելի քան երեք հարիւր տարի առաջ եւ ոչ մի կապ չունի տասնիններորդ դարի ռոմանտիքական շարժման հետ — այնուամենայնիւ միշտ կախարդիչ է, որովհետեւ ներկայացնում է մարդկային սրտի խորքերը զարմանալի պարզ եւ բարձր արուեստով։ Նրա եւ Ֆրանսիացի դասականների մէջ այն հիմնական տարբերու-

թիւնը կայ, որ նա մեծ չափով բնական է, իսկ վերջինները մեծ չափով կեղծ են, եւ իրաւամբ կրում են կեղծ դասական անունը։

Գերմանացի Շիլլերը անշուշտ Շէքսպիրի հանճարը չունի. բայց ժամանակով աւելի մօտ է մեզ, ընկնելով տասնութերորդ դարի երկրորդ կէսը եւ հասնելով մինչեւ տասնիններորդ դարի սկիզբը։ Նրա գործերը, որքան էլ դասականութեան շրջանին պատկանեն եւ որքան էլ իր հայրենի գրականութեան մէջ ռոմանտիքների քննադատութեան ենթարկուած լինին — այնուամենայնիւ կիսով չափ ազդարար են նոր, ռոմանտիքական գրականութեան։ Յայտնի "Օրլէանի կոյսը" նա ինքն անուանել է մինչեւ իսկ „eine romantische Tragödie" (մի ռոմանտիկական ողբերգութիւն)։ Ընդհանրապէս ազատութեան, յեղափոխութեան ոգով լեցուն են նաեւ նրա միւս գործերը — առանձնապէս "Աւազակները", որ մեր մէջ այնքան ժողովրդականութիւն ունի։ Այս յատկութիւնները երեւում են Դուրեանի թատերագրութիւնների եւ բանաստեղծութիւնների մէջ, համապատասխան ձեւով եւ արուեստով։

—

Այս բազմատեսակ տպաւորութիւնների եւ ազդեցութիւնների մէջ ամենից կարեւոր ու վճռական նշանակութիւն ունի ժամանակի պատմական եւ սոցիալական զարգացումը, իբրեւ ներգործող ազդակ։ Պետրոս Դուրեանը այն

ժամանակաշրջանի երգիչն էր, երբ մեղանում ֆրանսիական ցեղափոխութեան ազդեցութեան տակ ստեղծուած էր համապատասխան սոցիալական տրամադրութիւն եւ համապատասխան հոգեբանութիւն։ Եւ այսպիսի մի դարաշրջանի երգիչ լինելու համար՝ անհրաժեշտ չէր, որ նա երգէր քաղաքացիական մոտիւներ եւ կամ հայրենիք ու ազգութիւն։

Բանաստեղծները տարբեր ձեւով են արտայայտում իրենց ժամանակը եւ սոցիալական հոգեբանութիւնը, եւ քնարերգու բանաստեղծները նոյնպէս՝ իրենց զուտ անհատական երգերի մէջ արտայայտում են այդ հոգեբանութիւնը։

Ֆրանսիական ռոմանտիզմը գրական արտայայտութիւնն է ֆրանսիական ցեղափոխութեան, երրորդ դասակարգի ստեղծած սոցիալական կարգերի եւ սոցիալական հոգեբանութեան։ Նա ուղղուած էր աւատական կարգերի եւ աւատական հոգեբանութեան դէմ։ Եւ այս հիմքը բնորոշ ու յատկանշական էր ընդհանրապէս ամենալայն վէպից սկսած մինչեւ ամենափոքրիկ քնարական բանաստեղծութիւնը, որովհետեւ նրանք միեւնոյն մարդկային հոգուց էին բղխում։

Պետրոս Դուրեան իր թատերագրութիւնների, իր սկզբնական քաղաքացիական երգերի եւ իր փայլուն քնարերգական բանաստեղծութեան մէջ պահպանել է այդ դարաշրջանի ընդհանուր ոգին, անշուշտ իւրաքանչիւր տեսակի

մէջ համապատասխան ձեւով։ Էդուարդը եւ Վարդուհին «Թշուառներ»ի մէջ, Վաղինակը եւ Նորայրը «Սեւ Հողեր»ի մէջ, Թաթուլը եւ Զարմուհին «Անիի Աւերումն» երկի մէջ, Վարդը եւ Շուշանը «Վարդ եւ Շուշան»ի մէջ եւ վերջապէս Շահանդուխտը եւ Բաբելը «Արշակունի Հարստութեան Անկումն» գործի մէջ մեկ ընդհանուր հոգեբանութեան առաւել կամ նուազ յաջողուած գեղարուեստական ձեւերն են։ Իսկ այդ հոգեբանութեան հիմնական տարրերն են՝ ազատութիւն, եղբայրութիւն, հայրենասիրութիւն եւ իրաւունք, լոյս եւ սէր, պայքար ու կռիւ, բողոք ու փոթորիկ, բոց ու կրակ, հրդեհ ու խանդավառութիւն, — զգացումներ եւ իդէալներ, որոնք զանազան ձեւի տակ, տարբեր ոյժով, տարբեր նրբութեամբ դրուած են նրա բովանդակ գործի մէջ։ Պետրոս Դուրեանի հայրենասիրական ոտանաւորների մէջ այդ զգացումները աւելի ուղղակի ձեւով են հանդէս եկել։ «Իմ Ցաւը» ոտանաւորի մէջ նա գրում է.

«Հէք մարդկութեան մեկ ոստը գոս
Հայրենիք մը ունիմ թշուառ,
Զ՝օգնած անոր, մեռնել աննշան,
Օ՛, այս է սոսկ ցաւ ինձ համար։»

Խրիմեան Հայրիկին նուիրած բանաստեղծութիւնների մէջ գրում է.

«Իրաւունքի, սիրոյ, լոյսի ենք կարօտ...»

կամ թէ՝

"Եղբայրութեան հայն կը յենու, ոչ թագի...„

կամ թէ՝

"Ազատ սիրեց, ազատ գոչեց, չթողեց...„

կամ թէ՝

"Նա սիրտն ըրաւ հայրենայուշ գոռ քնար...„

կամ թէ՝

"Նա իրաւունք, ազատութիւն գոչեց յար...„

Թատերագրութիւնների եւ հայրենասիրական բանաստեղծութիւնների մէջ նրա կապը իր դարաշրջանի հետ չափազանց պարզ է եւ անմիջական։

Իր քնարական, անհատական բանաստեղծութիւնների մէջ եւս այդ կապը իրական է եւ անկասկածելի, չնայելով որ ուղղակի եւ նիւթական ձեւով չէ հրապարակ գալիս այն, ինչ որ արուեստի առանձնայատկութիւն է եւ ինչ որ պայմանաւորում է նրա քնարերգութեան մեծ, բացառիկ արժէքը մեր գրականութեան մէջ։

"Սիրել„ բանաստեղծութեան մէջ նա ի միջի այլոց գրում է.

"...Բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ,
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ...„

կամ "Լճակ„ի մէջ.

"...Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկնքին,

Նըմանիլ չես կրնար դուն
Հոգուս, որ է բոց անհուն...„

"...Հոն հրդեհ կայ, ոչ մատեան...„

կամ՝ "Թրքուհին„ բանաստեղծութեան մէջ.

"...Լանջն է յուզեալ ովկէանի մը նման...„

"...Նէ կը վառի, միշտ կը վառի, չի հատնիր...„

"...Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բոցագէս...„

"...Իսկ եթէ մեռնի
Ս'ըսես հիմա կը ծնի...„

կամ՝ "Նէրա հետ„ բանաստեղծութեան մէջ.

"...Զեռքս տարաւ կուրծքն, հոն
Սիրոյ երկին մ'օրոտար...„

"...Աչերու բոցն երբ մարի,
Դագրի տրուին երբ սրտին,
Լոկ այն ատեն հարկէ որ
Անզօր շուրթերը խօսին...„

Այս հատուածները մենք մէջ բերեցինք առանց մեծ ընտրութեան, սակայն եւ այնպէս նրանց մէջ ակներեւ կերպով ցոլանում են ֆրանսիական ցեղափոխութեան, նրա ստեղծած ռոմանտիքական բանաստեղծութեան եւ դարաշրջանի սոցիալական հոգեբանութեան ընդհանուր յատկութիւնները։

«Քուրայ խօսքը», «Բոց, անհուն հոգին», «Հրդեհը եւ ոչ մատեանը», «Ցուղեալ ովկէանի նման լանջը», «Բոցագէս սիրոյ կողէն փրթած կրակը», «Սիրոյ երկնքի որոտումը», «Աչերու բոցը», «Սրտի տրոփը», եւ այլն եւ այլն — այդ ընդհանուր յատկութիւնների բանաստեղծական ձեւաւորումն են։

Սակայն պիտի անմիջապէս աւելացնենք, որ Դուրեանը նշանակալից տարբերութիւններ ունի ռոմանտիք գրականութեան եւ նրա սոցիալական հոգեբանութիւն հետ։ Եւ սրա պատճառը գլխաւորապէս այն է, որ նրա ժամանակ ֆրանսիական յեղափոխութիւնը եւ նրա ստեղծած կարգերը արդէն այլասերման նշաններ էին ցոյց տալիս։ Առաջանում էր նոր շրջան մարդկային պատմութեան մէջ, սկսուել էր սոցիալական շարժումը կեանքի մէջ եւ ռէալիզմը գրականութեան մէջ։

Պետրոս Դուրեան որոշ չափով զգաց այս նոր ժամանակը։

Նրա մի քանի բանաստեղծութիւնների, թատերագրութիւնների եւ գլխաւորապէս «Թշուառներ»ի մէջ երեւում է այս անցողական շրջանի արձագանգը։

Եթէ Պետրոս Դուրեան չկարողացաւ աւելի ստոյգ եւ աւելի զօրաւոր կերպով արտայայտել այդ տրամադրութիւնը — դրա պատճառը պէտք է որոնել մեր կեանքի առարկայական պայմանների, մեր գրականութեան այն ժամանակուայ

տիրապետող ուղղութեան, նաեւ իր վաղաժամ մահուան մէջ։

Այն ժամանակ, երբ մեր իրականութեան մէջ տիրում էր տակաւին աւատական-ամիրայական հոգեբանութիւնը եւ մեր գրականութեան մէջ կեղծ դասական ուղղութիւնը — Պետրոս Դուրեան կարողացաւ արտայայտել երիտասարդութեան նոր մտորուող տրամադրութիւնը եւ վերջնականապէս հարուած հասցնել սքոլաստիք, պահպանողական գրականութեան։

Բայց 60—70ական թուականների միջից նա աւելի հեռուն զգաց։

Ճակատագրական իրողութիւն է, որ այդ տաղանդաւոր երիտասարդը այնքան շուտ մեռաւ եւ չկարողացաւ եւրոպական կեանքի ու գրականութեան մէջ խմորուող եւ հետզհետէ մեր կեանքը թափանցող երեւոյթները տեսնել, վերլուծել, արտայայտել։

Նրա անժամանակ մահը աւելի եւս ծանր է մեր համար, քանի որ այնուհետեւ եկող բանաստեղծութիւնը հազիւ կարողանում էր հետեւել Նրան եւ բնաւ չէր կարողանում զարգացնել Նրան։

Իր միջավայրում, իր ժամանակի պատմական եւ սոցիալական զարգացման ուղղի վրայ Պետրոս Դուրեան ոչ միայն բարձր արուեստագէտ բանաստեղծ էր, այլ եւ առաջադիմական, յեղափոխական երեւոյթ էր մեր գրականութեան մէջ...

IV.

ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Արեւելահայերի մէջ աշխարհիկ գեղարուեստական գրականութիւնը աւելի շուտ սկսուեց, քան արեւմտահայերի մէջ։ Դրա փոխարէն՝ աշխարհիկ լեզուն աւելի շուտ գործածական դարձաւ արեւմտահայերի մէջ։ Սակայն եւ այնպէս կարելի է ասել՝ թէ այնտեղ եւ թէ այստեղ տասնիններորդ դարի կէսը մտաւոր, գրական, սոցիալական վերածնունդի առանցքն է ներկայանում։

Խաչատուր Աբովեան, արեւելահայ նոր գրականութեան հիմնադիրը, անշուշտ ունէր նախորդներ, որոնցից նա զանազանատեսակ տպաւորութիւններ ստացաւ եւ որոնց ազդեցութեան տակ զարգացաւ։ Բայց վերջապէս կարեւորն այն է, որ նա բոլոր շարժումները խտացրեց իր մէջ եւ համարձակ կերպով կառուցեց արեւելահայ գրականութիւնը ժողովրդական հողի վրայ։

Ա՛րդ, Խաչատուր Աբովեան իր գործը կատարեց տասնիններորդ դարի կէսից առաջ։ Նրա նշանաւոր "Վէրքը" գրուած էր 1841 թուականին։ Բայց այդ թուականին չտպագրուեց այն եւ

մտքերի վրայ ազդեցութիւն էր անում ձեռագիր օրինակների միջոցով։

Քառասնական թուականներին Խաչատուր Աբովեան գրեթէ մենակ էր։ Գրական համախմբում, գրական դպրոց չկար այն ժամանակ։ Տասնուհինգ-քսան տարի յետոյ միայն ստեղծուեց այս դպրոցը, մի կողմից Մոսկվայում Ստեփան Նազարեանի, Միքայէլ Նալբանդեանի, Ռաֆայէլ Պատկանեանի գլխաւորութեամբ, "Հիւսիսափայլի" շուրջը (1858), միւս կողմից Թիֆլիսում՝ Մարկոս Աղաբեգեանի, Պերճ Պռօշեանի միջոցով, "Կռունկ"ի շուրջը (1860)։

Այսպիսով ստեղծուեց արեւելահայերի *վէպը, բանաստեղծութիւնը, հրապարակագրութիւնը, քիչ յետոյ նաեւ իրական թատերագրութիւնը։*

Խաչատուր Աբովեանի մէկուկէս կամ երկու տասնեակ տարիների առաջացումը պէտք է բացատրել մեծ չափով ռուս-պարսկական պատերազմով եւ նրա ստեղծած հետեւանքներով։

Եթէ արեւելահայերի մէջ գեղարուեստական գրականութիւնը Աբովեանի միջոցով ստեղծուեց աւելի շուտ, արեւմտահայերի մէջ էլ հրապարակագրութիւնը եւ մամուլը սկսուեց աւելի կանուխ։ Իզմիրի "Արշալոյս Արարատեան"ը հիմնուեց տասնիններորդ դարի կէսից առաջ, Կ. Պոլսի "Մասիս"ը 1852 թուականին, իսկ Ստեփան Ոսկանի "Արեւելք"ը 1855 թուականին Պարիզում։ Ճիշտ է, այդ թերթերի աշ-

խարհաբարը այդ ժամանակ չափազանց արա-
տաւոր էր, բայց վերջապէս աշխարհաբար էր։

Թէ լեզուի եւ թէ բովանդակութեան
կողմից աւելի ժողովրդական եւ աւելի առողջ
հրապարակագրութիւն եղաւ "Վասպուրական
Արծուի" հրապարագրութիւնը, որ հրատարա-
կուեց Խրիմեանի ձեռքով Վարագում 1855
թուականին։

Այսպիսով ստեղծուեց ուրեմն արեւմտա-
հայոց հրապարակագրութիւնը, որի մէջ յայտնի
դեր կատարեցին Խրիմեան Հայրիկ, Ստեփան
Ոսկան, Նահապետ Ռուսինեան, Գրիգոր Օտեան,
որոշ չափով նաեւ Կարապետ Իւթիւճեան,
գլխաւորապէս աշխարհաբարի տեսակէտով, եւ
քիչ յետոյ Մատթէոս Մամուրեան։

Այդ հրապարակագրութիւնը արծարծում
էր նոր գաղափարներ եւ պատուաստում էր
աշխարհիկ լեզու։ Վերոյիշեալ հրապարակա-
գիրներից Ստեփան Ոսկանը, Ռուսինեանը եւ
Գրիգոր Օտեանը ապրել էին անմիջապէս ֆրան-
սիական 1848 թուի յեղափոխութեան գաղա-
փարական ոլորտում, ունէին ջերմ, համարձակ,
եռանդուն հրապարակագրութիւն, բայց ոչ
մէկը նրանցից հեռաւորապէս անգամ չհասաւ
Միքայէլ Նալբանդեանցին, որ ապրում էր նրանց
ժամանակ եւ որ տիրում էր մտքերի վրայ։

Սակայն հրատարակագրութիւնից աւելի
մեզ հետաքրքրում է 50—70 ական թուական-
ներին գոյութիւն ունեցող գեղարուեստական
գրականութիւնը։ Այդ ժամանակաշրջանում

չկար վէպ եւ իրական թատերագրութիւն,
կար միայն բանաստեղծութիւն եւ պատմա-
կան ողբերգութիւն, որոնց մասին կարեւոր
ենք համարում ամփոփ տեղեկութիւն տալ, որ-
պէս զի պարզ լինի, թէ Դուրեանի բանաստեղ-
ծական եւ թատերական գործը ինչպիսի միջա-
վայրում տեղի ունեցաւ։

Արսէն Բագրատունին, որ ծնուած էր
1790ին եւ որ 1866ին մեռած էր արդէն,
առանձին գրքով հրատարակեց իր համբաւաւոր
"Հայկ Դիւցազն"ը 1858 թուականին։ Ընդար-
ձակածաւալ գործ էր դա, գրուած 15 ոտնեայ
երկայնաշունչ տաղաչափութեամբ, երգուած էր
Հայկի հերոսական վէպը, ծայրից ծայց գրաբար
լեզուով։ Անշուշտ, Արսէն Բագրատունու այդ
երկի մէջ կար մեծ տաղանդի շունչ, բայց այդ
տաղանդը սպասաւորութեան էր դրուած մեռած
լեզուն եւ սքոլաստիք գրականութիւնը վեր-
ստեղծելու ապարդիւն գործի վրայ, եւ ուրեմն
վրիպած էր նոր կեանքի եւ նոր գրականութեան
համար։ Նրա գործի մանրամասների մէջ կային
գեղեցիկ էջեր նաեւ նոր ժամանակի իմաստով
— ինչպէս օրինակ բնութեան հրաշալի նկա-
րագրութիւններ — որոնք անցան յետնորդ-
ներին եւ զարգացան նրանց միջոցով։

Խրիմեան Հայրիկ, ծնուած 1820 թուին,
իր աշխարհիկ նշանաւոր գործերը — ինչպէս
"Հայ գոյժ", "Վան գոյժ" բանաստեղծութիւն-
ները եւ "Պապիկ եւ Թոռնիկ" հրաշալի արձակը
— հրատարակեց 1877 թուին եւ նրանից յե-

տոյ։ Յիսնական-վաթսունական թուականներին վերաբերում են — բացի աշխարհիկ հրապարակագրութիւնից, որի մասին խօսեցինք արդէն — նրա գրաբար բանաստեղծութիւնները։ "Հրաւիրակ երկրին Այրարատեան"ը հրատարակում է նա 1850 թուին, "Հրաւիրակ երկրին Աւետեաց"ը 1851 թուին, իսկ "Մարգարիտ Արքայութեան Երկնից" արձակ կրօնական բանաստեղծութիւնը 1866 թուին։ Խրիմեանի գրաբար բանաստեղծութիւնների շրջանում Արսէն Բագրատունին եղել է նրա համար զարմանալի օրինակ, որին անուանում է "մեծահանճար քերթող"։ Նրա գործերի մէջ սակայն որոշ չափով կեանք կայ եւ զգացւում է իրականութեան ձայնը, որ խուլ էր դասական "Հայկ Դիւցազն"ի մէջ։ Խրիմեանը իր "Հրաւիրակ Երկրին Այրարատեան" գրաբար բանաստեղծութեամբ հրաւիրում է դէպի հայ գաւառները, դէպի հայ ժողովրդի ապրած վայրերը, հրաւիրում է այնտեղ հիմնելու նոր գրականութիւնը եւ նոր կեանքը։ Այդ բանաստեղծական գործի մէջ երեւում է "Վասպուրականի Արծիւը" եւ "Վարագ լերան մաճկալը"։ Նկարագրում է նա Արաքսի հովիտը, Վաղարշապատը, Վասպուրականը, Վարագը։ Նկարագրում է ո՛չ թէ Հայկ Դիւցազնի ժամանակները, այլ ներկայի վայրերը։

Եւ նկարագրութեան մէջ — թէեւ գրաբարի կաշկանդումների ներքեւ — զգացւում է որոշ չափով կենդանի շունչ։

Խրիմեանի միւս գործը, "Հրաւիրակ Երկրին Աւետեացը", Բեթղեհէմի, Նազարէթի, Յորդանանի, Երուսաղէմի եւ Քրիստոսի շրջած վայրերի նկարագրութիւնն է, որի մէջ աւելի եւս զգացւում է կեղծ դասականութեան շրջանի արձագանգը, թէեւ այնտեղ էլ կան գեղեցիկ, ներշնչուած էջեր։

Ղեւոնդ Ալիշան, ծնուած 1820 թուին Կ. Պոլիս, ուսած եւ մեծացած Վենետիկ, աւելի է ենթակայ կեղծ դասական գրականութեան գրաբարի կաշկանդումներին եւ Արսէն Բագրատունու ազդեցութեան։ "Ցուշիկների" եւ "Նուագների" հարիւր էջից ապահովաբար ինքնուրոյն անկենդան եւ բռնազբօսիկ արտադրութիւններ են, որոնք միշտ մեռած էջեր կը մնան մեր գրականութեան համար։ "Նուագների" հինգ ընդարձակ հատորների մէջ երրորդ հատորը միայն ունի Նահապետ վերնագրով մի բաժին, էջ 217—298, որ պարունակում է անակնկալ կերպով այնքան գեղեցկութիւն եւ այնպիսի մեծ ներշնչում։ Նահապետը այնուհետեւ դառնում է Ալիշանի բանաստեղծական սիրելի անունը, որ ապրում է մեր գրականութեան մէջ մինչեւ օրս։

"Մանկունի", "Մաղթունի", "Տէրունի", "Տխրունի" եւ դրանց նման անկենդան ու չոր գրուածքների անապատում "Նահապետը" յիրաւի մի զով ու թարմ ովասիս է։ Ալիշանը այդ բաժնի մէջ տեղաւորել է 9 կտոր միայն։ Եւ ապահովաբար այն միւս հարիւրաւոր կտորները

չեն, որ յաւերժացնում են Ալիշանի բանաստեղծական անունը. այլ միայն եւ բացառապէս այդ ինքը քերթուածները։ Նրանց մէջ են "Հայոց աշխարհիկը", "Հրազդանը", "Պլպուլն Աւարայրի", եւ այն զարմանալի "Շուշանն Շաւարշանայ"։ Այդ քերթուածները գրուած են աշխարհաբար լեզուով, "միջնադարեան" կոչուած մեր աշխարհիկ բանաստեղծութեան սիրուն ու գողտրիկ հայերէնով, ջերմ, տաք, անուշ, ներդաշնակ ու նկարագեղ, որ յիշեցնում են միւս Նահապետին, սիրոյ անմահ երգչին, թերեւս անունն էլ ընտրուած նրա ներշնչումով։

Ալիշանի այդ բանաստեղծութիւնները մեր ժամանակակից գրականութեան մէջ կղզեացած տեղ են գրաւում, քիչ են կապուած միջավայրի հետ եւ կարծես թէ "միջնադարեան" վերածնութեան մի էջն են, շարունակութիւնը Կոստանդին Երզնկացու, Գրիգոր Աղթամարցու Նահապետ Քուչակի այնքան ուրոյն եւ միջնաշխարհիկ քնարերգութեան։

Մկրտիչ Պէշիկթաշլեան, ծնուած 1828 թուականին Կ. Պոլիս, աշակերտած Վենետիկ, գտնուում է Արսէն Բագրատունու եւ Ղեւոնդ Ալիշանի — ոչ Նահապետի — ազդեցութեան տակ։ Մկրտիչ Պէշիկթաշլեանը մօտ վաթսուն քերթուած ունի, որոնց մէջ շատ մեծ տեղ են գրաւում գրաբար բանաստեղծութիւնները, եւ ընդամէնը մէկ քանի հատ են աշխարհիկ տաղերը։ Ներբողներ եւ ձօներ ունի նուիրած Մխիթարեան մէկ քանի վարդապետներին, որոնց

մէջ նաեւ Ալիշանին եւ Բագրատունուն։ Այդ ձօները գրուած են գրաբար, Նահապետի գողտրիկ տաղերից որ եւ է կերպ ներշնչուած չեն եւ ընդհանրապէս կեղծ դասականութեան ոգով յղացուած բնորոշ ու արհեստական արտադրութիւններ են։ Արսէն Բագրատունին Պէշիկթաշլեանի համար բանաստեղծութեան կատարելատիպն է, որ նման է լատին մեծ բանաստեղծին, Վիրգիլիոսին, եւ որ "կապտել է նրա փառքի կէսը"։

Սակայն Պէշիկթաշլեան ժամանակի գրական եւ քաղաքական ազդեցութեան տակ գրեց մի քանի քերթուածներ, մեծ մասամբ աշխարհաբար լեզուով, որ գրականութեան պատմութեան մէջ կարող են տեղ ունենալ։ Այսպէս. "Հայ Քաջուհին", "Մահ Քաջորդւոյն", "Եղբայր եմք մեք", "Ծերն Վանայ" ինքնուրոյն քերթուածները, մանաւանդ հրաշալի "Գարունը", ինչպէս եւ նմանողութեամբ գրուած "Հայ Քաջորդի" եւ "Թաղումն Քաջորդւոյն" երգերը ցուցնում են, թէ ինչպիսի դեր կը կատարէր մեր նոր գրականութեան մէջ այդ նուրբ բանաստեղծը, եթէ իր տաղանդը չաղաւաղէր գրաբարի կապանքների տակ եւ նրա մեռելական շունչի մէջ։

Յորէն Նարպէյ, ծնուած 1831 թուականին Կ. Պոլիս, աշակերտած նոյնպէս Վենետիկ, գտնուում է գրաբարի եւ կեղծ դասական գրականութեան ազդեցութեան տակ։ Գրել է բաւական թուով բանաստեղծութիւններ, մեծ

մասամբ գրաբար լեզուով, գրել է ամէն տեսակ նիւթերի մասին — հայրենիք, հայրենական հին դիւցազներ, պանդխտութիւն, քոյր, սէր, վարդ — երբեմն գողտրիկ լեզուով եւ մեղմ տրամադրութեամբ, բայց ընդհանրապէս առանց յոյզի, առանց խռովքի, առանց աստուածային կայծի։ "Վարդենիքը", որ հրատարակեց Թէոդոսիայում 1863 թուին, "Պանդխտի քնարը", որ հրատարակեց Կ. Պոլիս 1868 թուին, "Ստուերք Հայկականքը", որ լոյս ընծայեց Կ. Պոլիս Դուրեանի մահից երկու տարի յետոյ, 1874 թուին, հեռաւորապէս անգամ չեն յիշեցնում Իւսկիւտարի փոթորկալի բանաստեղծին։

Մկրտիչ Աճէմեան, ծնուած Կ. Պոլիս 1838 թուականին, աշակերտած Նոյնպէս Վենետիկ, իր նախորդների նման ենթարկուել է գրաբարի ազդեցութեան։ Սակայն նրա բանաստեղծութիւնների մէջ եւս, ինչպէս եւ Պէշիկթաշլեանի ու Ալիշանի քերթուածների մէջ, գրաբարի հետ կան նաեւ աշխարհաբար էջեր, եւ այն՝ բաւական յաջողուած։

Մկրտիչ Աճէմեան 1871 թուականին հրատարակեց իր բանաստեղծութիւնների ժողովածուն "Թպիտք եւ Արտասուք" վերնագրով։ Այդ թուականը Պետրոս Դուրեանի բանաստեղծական ստեղծագործութեան տենդոտ, գրեթէ միակ թուականն է։

Մկրտիչ Աճէմեանի այդ ժողովածուի մէջ կան մի քանի աշխարհիկ ոտանաւորներ, որոնց վրայ երեւում է ժողովրդական պարզ բանաստեղծութեան դրոշմը, նաեւ "Միջնադարեան" աշխարհաբարի կամ արեւելահայ բանաստեղծութեան հետքերը։ "Մերուշէ"ն պարզ, անպաճոյճ, միամիտ սիրոյ մի ինքնաբուխ արտայայտութիւն է։ Փոքրիկ, սիրուն, անմեղ մի աղջիկ է Մերուշէն, որին սիրում է երգիչը, եւ որ սակայն հարսնացած է.

"Մերուշէ մատաղ, կոյս մ'է Մերուշէ,
Բիրն աչերուն ոբքան մեղուշ է...",

—

"Մերուշէ պլպուլ մըն է Մերուշէ,
Ձայնը կոկորդին մէջ շատ անուշ է...",

—

"Մերուշէ ղիս շատ սիրէ Մերուշէ,
Բայց հարսնացած է, ափսոս շատ ուշ է...",

Կամ թէ՝ "Այս սէրը փուշ է", բանաստեղծութիւնը, որ Նոյնպէս նուիրուած է գողտրիկ Մերուշէին.

"Տես ո՞նց դաշտերում ծաղկունքն են չքնաղ,
Տես ի՞նչպէս երկի՛նքն էլ փայլի կապուտ,
Ջուրերն են պայծառ, ծովն էլ է խաղաղ,
Քո մաքուր հոգուդ ի՞նչ է պատել մութ.
Ափսոս Մերուշէ,
Այս սէրըն փուշ է...",

Ժողովրդական այս պարզ տողերը տարաբախտաբար շատ չեն Մկրտիչ Աճէմեանի բա-

նաստեղծութիւնների մէջ։ Գրքի մէջ կան ձներ, ներբողներ, գրաբար բանաստեղծութիւններ, "Վահագն" վերնագրով մի գրաբար դիւցազնական պոէմ, որոնք ոչ մի նմանութիւն չունին վերոյիշեալ հատուածին եւ շատ դժուար կը լինի կռահել, թէ միեւնոյն բանաստեղծի արտադրութիւններն են։ 1871 թուականին Մկրտիչ Աճէմեանը դեռ արտադրած չէր իր ներդաշնակ, սիրուն, հարուստ եւ գեղեցիկ յանգերով աշխարհիկ երգերը, եւ "Մերուշէ"ի նման տաղերը բացառութիւն էին։

Անկարելի է համեմատել նրա այդ ժամանակուայ — անշուշտ նաեւ յետագայ — ոտանաւորները Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնների հետ, որոնց մէջ ցոլանում էր անկեղծ, խորունկ, բուռն տրամադրութիւն եւ զարմանալի կերպով մշակուած աշխարհաբար։

Ցիսնական-եօթանասնական թուականների միջոցին ուրիշ հեղինակներ եւս բանաստեղծութիւններ էին գրում, ինքնուրոյն կամ նմանողութեամբ, ինչպէս Թոմաս Թէրզեան, Սրապիոն Հէքիմեան, Ստեփան Ոսկան, Նահապետ Ռուսինեան եւ այլն, որոնցից առաջին երկուսը աւելի յայտնի էին թատերագրութեան, իսկ վերջին երկուսը հրապարակագրութեան մէջ։ Թոմաս Թէրզեան գրում էր գրաբար եւ կիսագրաբար, Սրապիոն Հէքիմեան գրում էր գրաբար, Նահապետ Ռուսինեան գլխաւորապէս փոխադրում էր, որից մնացել է "Երբ որ բացուին" ծանօթ հայրենասիրական երգը (1874),

իսկ Ստեփան Ոսկանը շինում էր քաղաքական-հասարակական ոտանաւորներ, որոնց մէջ նա հեռաւոր կերպով անգամ չէր կարողանում նմանել իր ընկերակից հրապարակագիր Միքայէլ Նալբանդեանին։

Ահաւասիկ այս էր ընդհանուր գծերով արեւմտահայ բանաստեղծութիւնը յիսնական-եօթանասնական թուականներին, երբ ապրում էր Պետրոս Դուրեան։

Ինչպէս նկատւում է այս պատկերից՝ ժամանակի տրամադրութիւնը երեւում էր մէկի կամ միւսի մէջ։ Բնութիւնը ներս էր խուժում, հակառակ մարդկանց ստացած դաստիարակութեան եւ սովորութեան։ Համաձայն ռուսական առածի թէ — "արտաքսիր բնութիւնը դռնից, նա ներս կը մտնի պատուհանից" — եւ համաձայն ֆրանսական ասութեան թէ՝ „Chassez le naturel, il revient au galop", արեւմտահայ բանաստեղծները իրենց գրուածքների մէջ այսպէս թէ այնպէս արտայայտում էին ժամանակի պահանջը եւ տիրող սոցիալական հոգեբանութիւնը։

Բայց Պետրոս Դուրեան այդ բոլոր տրամադրութիւնը բեւեռեց իր մէջ եւ արտայայտեց ժամանակն ու պատմական զարգացումը "հեղեղի" պէս, ինչպէս նրանից առաջ եւ նրա ժամանակ ոչ ոք չէր արտայայտել։

Արսէն Բագրատունին, Խրիմեան Հայրիկը այդ շրջանում, Խորէն Նարպէյը գրում էին գրաբար քերթուածներ։ Ալիշանը, Պէշիկթաշ-

լեանը, Մկրտիչ Աճէմեանը գրում էին մեծ մասամբ գրաբար բանաստեղծութիւններ եւ շատ քիչ մասով աշխարհիկ տաղեր։ Սրանց մէջ ամենագեղեցիկ աշխարհիկ էջերը Նահապետի երգերն էին, որ սակայն մեկուսացած բնաւորութիւն ունէին եւ որ յիսնական թուականից այս կողմ այլ եւս չերեւացին։ Մկրտիչ Պէշիկթաշլեան շատ թոյլ եւ անգոյն կերպով արտայայտեց աշխարհաբարի պահանջը։ Իսկ Մկրտիչ Աճէմեան այդ շրջանում գրեթէ միայն սկսնակ էր, գրաբարեան աւանդութիւնների մէջ մեղկացած սկսնակ։

Եւ Պետրոս Դուրեանն էր միայն, որ չենթարկուեց Արսէն Բաբրատունու եւ կեղծ դասական գրականութեան ազդեցութեան։ Իւսկիւտարի մէջ ծնուած եւ մեծացած, նա Վենետիկի մէջ չէր ապրած, գրաբարեան քերթողների այդ աւանդական մթնոլորտում։ Զարգացել էր հեռու այդ ազդեցութիւններից եւ կարողացել էր կեանքի մէջ անմիջապէս թօթափել դպրոցական դաստիարակութեան յոռի կողմերը։ Պետրոս Դուրեան մի զարմանալի կենդանի, հաւարձակ, ինքնուրոյն շեշտով կարողացաւ նետել իր վրայից գրաբարի շղթան, այն "շղթան", որ այնքան ժամանակ փակել-կաշկանդել էր Խաչատուր Աբովեանի լեզուն եւ նրան համրութեան դատապարտել։

Եւ Պետրոս Դուրեան եղաւ ոչ միայն արեւմտահայ նոր բանաստեղծութեան, այլ եւ նոր լեզուի ստեղծողը։

Գեղարուեստական գրականութեան միւս ճիւղը — *վիպագրութիւնը* — դեռ չէր երեւացել արեւմտահայերի մէջ։ Առաջին վիպական կամ վիպանման գործը, Խաչատուր Միսաքեանի "Սոփիա"ն, հրատարակուած է միայն 1904 թուականին "Անահիտ"ի մէջ։ Գրութեան թուականը յայտնի չէ։ Հաւանօրէն գրուած պիտի լինի Պարիզում 60—70 ական թուականին։ Եւ այն ձեւով, ինչ ձեւով տպագրուած է՝ ամբողջութիւն չէ ներկայացնում, այլ հաղիւ իրար հետ կապուող մասեր միայն։ Երկրորդ վէպը, Մատթէոս Մամուրեանի "Սեւ Լեռին Մարդը" տպագրուեց "Արեւելեան Մամուլ"ի մէջ մաս-մաս, 70 ական թուականից յետոյ, եւ այն էլ մնաց անկատար։ Երրորդ վէպը, Արիստակէս Տեւկանցի "Շահէն ի Սիբիր" հրատարակւում է միայն 1877 թուականին։

Այսպէս. Պետրոս Դուրեանից առաջ կամ նրա ժամանակ արեւմտահայերի մէջ գոյութիւն չունէր վիպագրութիւն։ Կար միայն պատմական ողբերգութիւն, որի մասին մի քանի խօսք կ'ասենք եւ դրանով կը փակենք այս գլուխը։

Պատմական ողբերգութեան մէջ այդ ժամանակաշրջանում յայտնի դարձան Սրապիոն Հէքիմեան, Մկրտիչ Պէշիկթաշլեան եւ Թոմաս Թէրզեան։

Սրապիոն Հէքիմեան թէ լեզուով եւ թէ բովանդակութեամբ միանգամայն գրաբարեան շրջանի մարդ էր։ Իր ողբերգութիւնները գրել է նա հին լեզուով, չնայելով որ նել-

կայացուելու համար աշխարհաբար լեզուն առաջին անհրաժեշտութիւն էր։ Այդ երկերը Հայոց նոր գրականութեան հետ վերաբերութիւն չունին եւ առհասարակ տեղ չեն կարող գտնել մեր գրականութեան պատմութեան մէջ։

Պատմական ողբերգութեան մէջ որոշ նորութիւն մտցրեց Մկրտիչ Պէշիկթաշլեան, որ իր թատերագրութիւնները գրեց աշխարհաբար լեզուով։ Այդ աշխարհաբարը բաւական կանոնաւոր է, սահուն, մինչեւ իսկ պատկերալից, բայց զուրկ է ոյժից, թափից, թռիչքից։ Մկրտիչ Պէշիկթաշլեանի առաջին պատմական ողբերգութիւնը եւ թերեւս ամենալաւը "Կոռնակ"ն է, որի նիւթն է հին Հայաստանի երկու նախարարութիւնների ներքին ընդհարումը։ "Կոռնակը" առաջին անգամ ներկայացուեց Օրթագիւղի մէջ 1856 թուին եւ մեծ ընդունելութիւն գտաւ հասարակութեան կողմից։ Այնուհետեւ Մկրտիչ Պէշիկթաշլեան գրեց ուրիշ ողբերգութիւններ — "Արշակ II", "Վահան", "Վահէ", բոլորն էլ նոր հայերէնով եւ իրենց տեսակի մէջ ընդհանրապէս յաջողուած, չափուած, կանոնաւոր գործեր։ Նրանց ընդհանուր հակասութիւնն այն էր, որ կեղծ դասական գրականութեան արտադրութիւններ էին աշխարհաբարի կեղեւի մէջ։ Բացակայում էր նրանց մէջ ոչ թէ միայն ժամանակակից կեանքը, ինչ որ պատմական ողբերգութիւնները չէին կարող տալ, այլ եւ ներկայի տրամադրութիւնը, հոգեբանութիւնը, թռիչքն ու զգացումները, ինչ որ Դուրեան հնարաւոր դարձրեց իր անկատար թատերագրութիւնների մէջ անգամ։

Թոմաս Թէրզեան իր պատմական ողբերգութիւնները գրեց կիսագրաբար լեզուով։ Բովանդակութեամբ աւելի մօտենում էր նա եւրոպական ռոմանտիքներին, քան Պէշիկթաշլեանը, բայց լեզուով աւելի հնութեան դիրքում էր կրում եւ բաւարարաչափ կանոնաւոր չէր։ Ստեղծագործութեան դժուարութիւն ունի նա, թատերագրութիւնների կառուցուածքի մէջ նկատւում է որոշ ծանրութիւն եւ ձախողութիւն։ Դրա հետ միասին՝ շատ անգամ աւելի փոխադրող է, նմանող, թարգմանող, քան ինքնուրոյն ստեղծագործող։ "Յովսէփ Գեղեցիկը", որ հեռաւորապէս անգամ չէ յիշեցնում հին կտակարանի աւանդութեան պարզութիւնն ու խորութիւնը, ֆրանսերէնի նմանողութիւն է։ Իսկ "Սանդուխտը", որ առնուած է Նահապետի "Շուշանն Շաւարշանայ" պօէմից, չունի ամենեւին նրա գեղեցկութիւնը եւ բնաւ չէ կարելի ասել, թէ կառուցուած է այնպիսի մի սքանչելի նախատիպի վրայ։

Այս էր ընդհանրապէս արեւմտահայ թատերական գրականութիւնը յիսնական-եօթանասնական թուականների սահմաններում։

Իրական թատերագրութիւնը եւ ժամանակակից կատակերգութիւնը տակաւին գոյութիւն չունէր։ Հրապարակին տիրում էր ուրեմն պատմական դժգոյն ողբերգութիւնը միայն։

Այսպիսի պայմանների մէջ գրեց Պետրոս Դուրեան իր թատերական երկերը, որոնք մեծ մասամբ պատանեկան գործեր էին, անկատար եւ մանաւանդ անհաւասար։ Եւ սակայն, չնայելով իր բոլոր իրական թերութիւններին, Դուրեանի թատերագրութիւնների մէջ եւս զգացւում է ժամանակի շունչը, պատմական զարգացումը, կենդանի, թրթռուն լեզու, ջերմ տրամադրութիւն, յաճախ մինչեւ իսկ հնի եւ նորի ընդհարումը, պայքար, դրամատիզմ։ Եւ քանի որ թատերական գրականութիւնն այնպէս աղքատ էր եւ այնպէս յամառ կերպով կառչած կեղծ դասական ձեւերին, Պետրոս Դուրեանի այնքան անկատար գործը նաեւ այս միջավայրում պատմական նշանակութիւն ունի։

V.

ՆԱՄԱԿՆԵՐԸ

Պետրոս Դուրեան թողել է ընդամենը 13 նամակ, որոնք բանաստեղծութեան եւ լեզուի տեսակէտից գեղեցիկ, ինքնարուխ, կախարդական էջեր են եւ որոնք յաճախ պարզում են նրա կեանքը, հոգին, փիլիսոփայութիւնը։

Այդ նամակները տպագրուած են 1893 թուին, Կ. Պոլիս, Պետրոս Դուրեանի "Տաղք, թատերգութիւնք, նամականի" ժողովածուի մէջ, որ հրատարակել է նրա կենսագիր Բարսեղ Էքսէրճեան։

Նամակները գրուած են 1869 եւ 1871 թուականին։ Միւս թուականներից մեր ձեռքը ոչինչ չի հասել։ 1869 թուին վերաբերում են ընդամենը երկու նամակ, որոնցից առաջինը քիչ կարեւորութիւն ունի։ Մնացեալ տասնեւմէկ նամակները վերաբերում են 1871 թուականին եւ թանկագին նիւթեր են պարունակում իրենց մէջ։

Այսպէս, ինչպէս բանաստեղծութիւնների մեծ եւ կարեւոր մասը, նոյնպէս եւ նամակները գրուած են 1871 թուականին, որ բանաստեղծի

վերջին տարին էր եւ որ եղաւ ստեղծագործութեան տենդոտ թուական։

Տարաբախտաբար նամակների վերնագիրները պակաս են եւ ստոյգ չէ թէ այդ նամակները որո՞նց են գրուած։ Հրատարակողը բաւականացել է միայն մի ընդհանուր ծանօթութեամբ, որի մէջ ասուած է թէ՝ "այս նամակները ուղղուած են Խորէն Նարպէյին, Իզմիրլեանին, Յ. Ճանֆէսճեանին, Տիգրան Ադամեանին"։ Բայց թէ ո՞ր նամակը այդ անձերից ո՞րին է ուղղուած — այդ մասին ոչինչ չէ ասում հրատարակողը։ Տարօրինակ կերպով՝ այս ծանօթութեան մէջ յիշատակուած անձերի շարքում պակասում է մէկը, Դուրեանի բարեկամ Արմէն Լուսինեանը, որին ուղղուած է նամակների մեծագոյն մասը։ Այդ նամակների ուշադիր ընթերցումից կարելի է որոշ կերպով եզրակացնել, որ վերջին 6 նամակները ուղղուած են միեւնոյն անձին, եւ քանի որ յայտնի է, թէ վերջին 3 նամակները ուղղուած են Արմէն Լուսինեանին — պիտի եզրակացնել ուրեմն, որ այդ 6 նամակներն էլ ուղղուած են նրան։ Աւելին։ Նամակների մէջ կան ուրիշ երեք նամակ եւս, որոնք նախընթաց են այդ նամակներին եւ որոնց մէջ որոշ չափով նկատւում է միեւնոյն տրամադրութիւնը եւ յաջորդականութիւնը։ Թերեւս կարելի լինի ենթադրել, որ այդ նամակները եւս ուղղուած են Արմէն Լուսինեանին։

Մնում են չորս նամակ, որոնցից մէկը ուղղուած է Խորէն Նարպէյին եւ վերաբերում է

իր երկերի հրատարակութեան խնդրին։ Միւս երեք նամակները ունին հետեւեալ վերնագիրը — "Շնորհափայլ Հայր", "Բարեկամ", "Սգաւոր"։ Թերեւս կարելի լինի եզրակացնել, թէ այդ նամակներն են ուղղուած Իզմիրլեանին, Յ. Ճանֆէսճեանին եւ Տիգրան Ադամեանին, եթէ միայն ընդունենք, որ հրատարակողի վերոյիշեալ ծանօթութեան մէջ յիշուած անձերը ստուգուած են ինքնին եւ որ եւ է թիւրիմացութեան հետեւանք չեն։

—

Պետրոս Դուրեանի նամակները արձակ բանաստեղծութեան բոլոր հրապոյրն ունին։ Այդ նամակների մէջ գործնական խնդիրների մասին չէ, որ խօսում է Պետրոս Դուրեան եւ ոչ էլ առօրեայ, ընտանեկան հարցեր են շօշափուած այնտեղ։ Ինչ որ կայ այդ նամակների մէջ եւ ինչ ասուած է թէկուզ մասնաւոր իրողութիւնների վերաբերմամբ — օծուած է ջերմ, անկեղծ, սրտառուչ բանաստեղծութեան ցօղով ու բոյրով։

Այդ նամակները ամենասերտ առընչութիւնն ունին նրա բանաստեղծութիւնների հետ։ Յաճախ նկատւում են այնտեղ նոյն մտածումները, միեւնոյն ձեւերը, միեւնոյն արտայայտութիւնները, ինչ որ բանաստեղծութիւնների մէջ — որովհետեւ նրանք երկուսն էլ դուրս են գալիս միեւնոյն հոգուց եւ միեւնոյն էութեան խորքից։ Եւ ինչպէս շատ անգամ բանաստեղծի

մի գործ լրացնում եւ ամբողջացնում է նրա գրչից դուրս եկած մէկ ուրիշ գործ, այնպէս էլ Դուրեանի նամակները լրացնում են նրա բանաստեղծութիւնները։ Այն մտածումը կամ այն զգացումը, որ կիսատ է թողել բանաստեղծը իր քերթուածների մէջ, յաճախ ամբողջացած ենք տեսնում նրա այս կամ այն նամակում։ Այսպէս են գլխաւորապէս Դուրեանի մտածումները աշխարհի կամ շրջապատի մասին, ինչ որ իր բանաստեղծութիւնների մէջ բաւական քօղածածկ են արտայայտուել եւ ինչ որ աւելի որոշ ենք տեսնում նրա նամակների մէջ։

Բացի այն, որ Պետրոս Դուրեանի նամակները իբրեւ արձակ քերթուածներ՝ նման՝ են նրա բանաստեղծութիւններին եւ բացի այն, որ նրանք ամբողջացնում են նրա երգերը — այլ եւ մանաւանդ նրանք բացատրում, մեկնաբանում են Դուրեանի գեղարուեստական գործը։ Բանաստեղծի երգերի համար նրա նամակները յաճախ քննադատական եւ բացատրական խօսք ունին։ Այդ նամակներից մենք իմանում ենք յաճախ, թէ Դուրեանի այս կամ այն բանաստեղծութիւնը ինչպիսի պայմանների մէջ է գրուած, ինչ տպաւորութեան ազդեցութեան տակ, ինչ հոգեբանական վիճակի արտայայտութիւն է։ Չպիտի կարծել, թէ Դուրեանի այն սքանչելի բանաստեղծութիւնները — որ այնքան պարզ ու վճիտ երեւոյթ ունին — միաժամանակ պարզունակ են հոգեբանօրէն։ Այդ զարմանալի քերթուածները շատ յաճախ կարծուածից աւելի բարդ են եւ ենթադրածից աւելի խորունկ։ Կարդացէք Դուրեանի բանաստեղծութիւնը մէկ, երկու, տասն անգամ — եւ ամէն անգամ չտեսած կամ չզգացած գեղեցկութեան նորանոր էջեր կը բացուին ձեր առջեւ։ Յաճախ մի տող, մի նախադասութիւն, մի սոսկական բառ անգամ կարող է նոր լոյս տարածել ամբողջ բանաստեղծութեան վրայ եւ նրա գեղարուեստական-հոգեբանական արժէքը անհունապէս բարձրացնել։ Եւ նրա նամակները շատ անգամ այդպիսի լուսաւորութեան կենդրոններ են։

Պետրոս Դուրեանի նամակների մէջ երեւում է նրա փիլիսոփայութիւնը աշխարհի եւ իրերի մասին։ Այն, ինչ որ գեղարուեստագէտը, չէ ներկայացրել պարզ կերպով իր բանաստեղծութիւնների եւ թատերագրութիւնների մէջ, մտածելով որ գրական այդ տեսակները փիլիսոփայութիւն արտայայտելու վայր չեն — տեսնում ենք մենք նամակների մէջ։

Ի՞նչ է աշխարհը, ի՞նչ է կեանքը, ի՞նչ է մարդս աշխարհի վրայ, ի՞նչ է տաղանդը, ի՞նչ է անհունը — այս եւ այսպիսի հարցերի մասին Պետրոս Դուրեանի նամակների մէջ յաճախ խօսք է լինում, ուր բանաստեղծը արտայայտում է իր հայեցողութիւնը սեղմ, ամփոփ եւ գրեթէ միշտ հետաքրքրական ձեւով։

Իր փիլիսոփայական աշխարհահայեցողութիւնից զատ — որ անշուշտ մեծ տեղ չէ

գրաւում Նրա Նամակների մէջ — այս Նամակները աւելի որոշ, աւելի լայն արձագանգն են Նրա վշտոտ ու անարշալոյս կեանքի։

Պետրոս Դուրեանի Նամակները Նրա ողբերգական կեանքի արձանագրութիւնն են, անշուշտ ներշնչուած եւ անկեղծ արձանագրութիւնը։ Եւ այս տեսակէտից՝ Նրանք Նոյնն են, ինչ որ Նրա բանաստեղծութիւնները, որովհետեւ երկուսն էլ պատմում են միեւնոյն փոթորկալի կեանքը։ Միայն թէ՝ բանաստեղծութիւնները աւելի հանրամարդկային են եւ աւելի ընդհանուր, իբրեւ բարձր գեղարուեստական գործեր, մինչդեռ Նամակները աւելի անձուկ են եւ աւելի մասնաւոր, իբրեւ սոսկական պատմութիւններ։ Պետրոս Դուրեանի Նամակները կենսագրական նիւթեր են պարունակում իրենց մէջ եւ ապահովաբար շատ են օգնել Նրա կենսագրութիւնը գրողներին։ Այդ Նամակների մէջ պատմուած է իր կեանքը, իր գործերի տպագրութեան խնդիրը, իր յարաբերութիւնը ընկերների եւ բարեկամների հետ, իր թատերական գործունէութիւնը, իր ընտանեկան նիւթական վիճակը, իր անձնական կարօտութիւնը, իր կեանքի դժուարութիւնները, իր անյաջողութիւնները, իր մտքերը, իր հիւանդութիւնը եւ վերջապէս իր մահը, որ նա վերջերը միշտ տեսնում էր աչքի առջեւ եւ որի մասին խօսում էր այնքան դառնութեամբ։

Իր տնտեսական դժուարին կացութեան մասին — մի Նամակի մէջ, որ գրել է Խորէն

Նարպէյին 1871 թուականի Յունուար 22ին — ի մէջ այլոց այսպէս է արտայայտուում.

«...Կոյր մը չէ ձեզ դիմողն, որ աչերն բանաք, այլ մէկն է, որ ճակտին վրայ սեւ ամպ մ'ունի։ Հիւղի մը հառաչն է այն. հոն ուր վառարանն ամայի է եւ սիրտը կը մխայ, հոն, ուր կեանքը կը լռէ եւ քնարը կը հեծկլտայ։»

Այսպէս. աչքերի լոյս եւ իմաստութիւն չէ, որ պակասում է Նրան. եւ բանաստեղծը չէ աղերսում որ աչքերը բանան, այլ կրակ է ուզում «ամայի վառարանի» համար, այն հիւղի համար, ուր «քնարը կը հեծկլտայ...»

Աշխարհի մասին 1869 թուականի Դեկտեմբեր 20ի Նամակով այսպէս է արտայայտուում.

«...Միշտ ձանձրալի է այժմեան աշխարհը, անոր համար, որ ուղեղին մէջ ջահ չունի...»

Իսկ 1871 թուականի Յուլիս 5ի Նամակով այսպէս է խօսում.

«...Կ'անիծես աշխարհս, բարեկամ։ Արդէն ինքը անիծեալ է։ Աշխարհս կամ Աստուծոյ ձանձրոյթի մէկ հառաչն է եւ կամ դժոխքի մէկ անհամ կատակը... ինչ եւ է՝ կսկիծի մը դուռ է...»

Նոյն թուականի Հոկտեմբեր 11ի Նամակի մէջ, որ գրել է Արմէն Լուսինեանին՝ աշխարհն անուանում է Աստուծոյ, այդ «Գերմարդկային Տիտանի» ձանձրոյթի մէկ հառաչը»։

Այս հատուածներից երեւում է, որ բանաստեղծը յաճախ անդրադառնում է աշխարհի

Էութեան վրայ եւ աշխատում է հասկանալ նրա յաւիտենական գաղտնիքը։

Եւ այս նամակների մէջ արտայայտուած տրամադրութեան ու նրա "Տրտունջք„ բանաստեղծութեան վերջին մասի միջեւ որոշ նմանութիւն կայ.

"Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...„

Այսպիսի յոռետեսական բացագանչութեամբ է վերջանում նրա նշանաւոր բանաստեղծութիւնը։

Մի ժամանակ կարծւում էր, թէ այդ մռայլ տողը բանաստեղծի սեփական խօսքերը չեն եւ թէ նրանք ներմուծուած են որ եւ է սրբագրողի կողմից։ Մէջ բերուած համեմատութիւնները ցոյց են տալիս սակայն, որ բանաստեղծը յաճախ գործ է ածել նման արտայայտութիւններ։ Միայն թէ իր նամակի մէջ աշխարհի մասին չէ ասում, թէ նա Աստուծոյ ծաղրն է, այլ ասում է թէ նա՝ Աստուծոյ ծանծրոյթի մէկ հառաչն է եւ կամ դժոխքի մէկ անհամ կատակը։

Այսպէս։ Նամակի մէջ աւելի հաշտ եւ աւելի խաղաղ վերաբերմունք ունի Դուրեան թէ դէպի Աստուած եւ թէ դէպի աշխարհս, մինչդեռ բանաստեղծութեան մէջ ամենամռայլ տրամադրութեամբ հառաչում է, թէ Աստուած ստեղծել է աշխարհս ծաղրելու համար միայն։ Եւ այն, ինչ նամակի մէջ վերագրել էր դժոխքին, բանաստեղծութեան մէջ վերագրում է

Աստծուն։ Ինչ էլ որ լինի սակայն, աշխարհս բանաստեղծի համար "կսկիծի մը դուռն է...„։

Այս է ահա ամենակարճ ձեւակերպումը այն մռայլ փիլիսոփայութեան, որ Պետրոս Դուրեանի նամակների եւ բանաստեղծութիւնների մէջ հնչում է որոշ ժամանակաշրջանում։

Այս կսկծալի աշխարհի մէջ բանաստեղծը համարում է իրեն մի "դալկահար եւ դողդոջ հիւր„։ Այսպէս է գրում նա 1871 թուականի Սեպտեմբեր 5ի նամակի մէջ։

Եւ այս համեմատութիւնը արեւելեան բանաստեղծութեան անծանօթ արտայայտութիւն չէ։ Այդպէս է խօսում աշխարհի եւ մարդկանց մասին արեւելահայոց ժողովրդական երգիչ Աշուղ Ջիւանին, իր յայտնի բանաստեղծութեան մէջ, որ սկսւում է "Ձախորդ օրերը ձմրան նման կու գան ու կերթան„ լուսաւոր խօսքերով.

"Աշխարհս հիւրանոց է, Ջիւան, մարդիկը հիւրեր...„

Եւ անշուշտ Աշուղ Ջիւանին այս համեմատութիւնը փոխ չէ առել Պետրոս Դուրեանի վերոյիշեալ նամակից, այլ արտայայտել է մեր ժողովրդի փիլիսոփայութիւնը։ Պետրոս Դուրեանի նամակն անկասկած անձնական տրամադրութեան թարգմանութիւն է, բայց նա էլ արտայայտուած է ժողովրդական ձեւով եւ գոյնով...

Այսպէս։ Բանաստեղծը գիտէ, որ աշխարհս Աստուծոյ ձանձրոյթի մէկ հառաչն է եւ որ ինքը դողդոջուն հիւր է մեր աշխարհում։ Նա գիտէ, որ ինքը աշխարհ է եկել իր "մահն զգալու եւ մեռնելու" համար։ Եւ իր Նամակների մէջ շատ տեղ արձագանգ է տալիս այդ ծանր գիտակցութեան։

Իր հիւանդութեան, իր մահուան, իր գերեզմանի մասին այնպիսի սրտաճմլիկ տողեր ունի Պետրոս Դուրեան իր Նամակների մէջ, որ անկարելի է կարդալ առանց ամենախորին յուզմունքի.

"...Այս օրերս դարձեալ մշտնջենաւոր վէրքս շունչ առաւ կուրծքիս տակ..."

"Վէրքիս մօտեցիր, եղբայր, սա ահարկու անդունդին։ Սակայն սեւ ժայռը եւ երկնքի աստղերը միայն հոն կրնան նայիլ..."

Եւ "Նոճեաց տղան" — որ Պետրոս Դուրեանն ինքն է — "կը նայի իր վէրքին այնպէս, ինչպէս փառասէրն իր աստղին"...

Այսպէս է գրում բանաստեղծը 1871 թուականի Օգոստոս 13ի Նամակով իր մի բարեկամին, եւ այնուհետեւ մինչեւ իր մահը, գրեթէ իր բոլոր Նամակների մէջ, խօսում է անընդհատ իր "վէրքի" եւ իր մահուան մասին։

Այս տողերի եւ Նրա բանաստեղծութիւնների մէջ միեւնոյն ցաւի արձագանգն է լսւում, միշտ սրտակտուր, աղէտալի եւ խորապէս ողբերգական։

Իր անհատական վերաբերումը, սակայն, դէպի զարհուրելի մահը՝ Նամակների մէջ ըստ երեւութին աւելի հանգիստ է, աւելի մեղմ ու հաշտ եւ մինչեւ անգամ աւելի հերոսական։

1871 թուականի Սեպտեմբեր 5ի Նամակով գրում է իր բարեկամին.

"...Սակայն մի ցաւիր եղբայր իմ, սապէս համոզուէ, որ քո եղբայրը գերեզմանի տեղ Նոյեան տապանը կը մտնէ աշխարհի արիւնահեղեղէն փրկուելու համար..."

"Երբեք մի մտաբերեր, որ ես յուսահատ եմ. բնա՜. բանաստեղծ մը մահուանէ չսոսկար...։"

Բայց վերջապէս մահուան դառնութիւնը կարող է ազդել ամենախաղաղ մարդիկներին անգամ եւ նրանց հաղորդել իր խորհրդաւոր սարսափը, որ աւելի զօրաւոր է, քան հերոսական ոգիների արիութիւնը։ 1871 թուականի Սեպտեմբեր 7ի Նամակի մէջ Պետրոս Դուրեան գրում է.

"...Անյուսութիւն, գերեզմանի այդ սեւ կաթը կը խմեմ..."

Եւ այս անհարթ տողերը միանգամայն զուգադիպում են այն խաւար տրամադրութեան, որ ծնեց նրա յուսահատական բանաստեղծութեան հետեւեալ սոսկալի երկտողը.

"Անյուսութիւն, գերեզմանի
Այդ սեւ կաթը շուտ ըմպեցի..."

1871 Թուականի Սեպտեմբեր 30ի նամակը, որ ուղղուած է իր մտերիմ Արմէն Լուսինեանին, զարմանալի տխուր տողեր ունի։ Այդ նամակի մէջ բանաստեղծը խօսում է իր բարեկամի սիրոյ եւ ամուսնութեան մասին։ Իբրեւ ազնիւ մարդ, իբրեւ անփոխարինելի ընկեր, Պետրոս Դուրեանը օրհնում է իր բարեկամի երջանկութիւնը, մահուան գերեզմանի առջեւ կարողանում է անուշաբոյր խօսքեր արտասանել նրա սիրոյ եւ նրա ապագայի մասին։ Բայց այդ սրտառուչ օրհնութիւնից յետոյ աւելացնում է հետեւեալ անհունօրէն դառն տողերը.

«...Կ'ուզեմ ձեր ըմպած երջանկութեան բաժակէն կաթիլ մը գողնալ, որ կարող է սրտիս անհուն բաժակը լցնել...»

Բանաստեղծը, իր սրտի անսահման կարօտով, ամփոփուած է այդ մի քանի վերաւոր խօսքերի մէջ։ Մարդն է այնտեղ, ամէն ժամանակուայ կարօտալից մարդը, որ ուզում է ապրել, արեւի լոյս տեսնել, երջանկութեան բաժակից գէթ «կաթիլ մը» գողնալ։

Բայց դաժան բնութիւնը իր դատաւճիռը արձակել է արդէն, եւ Պետրոս Դուրեան այլ եւս նոր գարուն չպիտի տեսնի։ Զգում է այդ նոճիների տղան, տեսնում է ճակատագրի անդառնալիութիւնը եւ յոգնած, վաստակած տրամադրութեամբ բաձագանչում է.

«Ափսո՜ս, շատ հեռու կ'երեւի ինձ փթթինազարդ գարունը. ձմրան ձիւներն իմ սիրած

վայրերուս հետ զիս ալ պատենաւորել կը սպառնան...»

Եւ բանաստեղծը իր «անհուն» մնաք-բարովն է ուղղում աշխարհին.

«Է՛հ, մնաք-բարով Աստուած եւ արեւ,
Որ կը պլպլաք իմ հոգուս վերեւ...»

—

Մահից մի ամիս առաջ, 1871 Թուականի Դեկտեմբեր 10ին, իր բարեկամ Արմէն Լուսինեանին ուղղում է մի ընդարձակ նամակ, որ նրա վերջին նամակն է՝ գոնէ տպագրուածների մէջ։ Այդ նամակի ամէն տողի մէջ նա դրել է մի կտոր իր հոգուց, իր ազնիւ հոգուց։

Պետրոս Դուրեանի մատաղ, երիտասարդ կեանքն է, որ վերջին անգամ պատմւում է այդտեղ, թախիծով, մահուան դողով, սիրով եւ իմաստութեամբ։

Եւ այդ վերջին նամակի մէջ է նա յանձնարարում բարեկամին հոգ տանել եւ տպագրութեան յանձնել «մի քանի պատառ թղթերու» վրայ գրուած «արցունքոտ տողերը...»։

———

VI.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

—

1. Պատմական ողբերգութիւնները:

Պետրոս Դուրեան գրել է բաւականաչափ թատերական երկեր:

Այդ երկերը կարելի է երկու մասի բաժանել — պատմական ողբերգութիւններ եւ իրական դրամա:

Պատմական ողբերգութիւնները թուով եօթ հատ են, որոնցից երեքը հրատարակուած են: Նրանք են՝ "Սեւ Հողեր", գրուած 1868 թուին, "Ասպատակութիւնք կամ Անիի աւերումն", եւ "Անկումն Արշակունի Հարստութեան" գրուած 1870ին:

Պատմական ողբերգութիւններից չորսը անտիպ են, որոնք են՝ "Արտաշէս", գրուած 1870 թուին, "Կործանումն Հռոմայ", "Շուշանիկ" եւ "Տիգրան Բ." գրուած 1871ին:

"Վարդ եւ Շուշան", որ գրուած է 1867ին, դպրոցական շրջանում, ոչ պատմական ողբերգութիւն է եւ ոչ իրական թատերագրութիւն:

"Թատրոն կամ Թշուառները", որ գրուած է 1871ին, իրական դրամա է, ինչպէս անուանում է ինքը Պետրոս Դուրեան:

Այս ցանկից երեւում է, որ Պետրոս Դուրեան սկսել է դրամաներ գրել տակաւին աշակերտ եղած ժամանակ: Առաջին տարին, 1867ին, արտադրել է ուրեմն մէկ գործ, երկրորդ եւ երրորդ տարին նորէն մէկ-մէկ գործ, չորրորդ տարին երկու գործ, հինգերորդ տարին, 1871 թուին, չորս գործ, որ ծաւալով էլ բաւական ստուար են:

Այսպէս: 1871 թուականը Պետրոս Դուրեանի գրական գործունէութեան համար շատ կարեւոր թուական է հանդիսանում: Նրա բանաստեղծութիւնների խոշոր մասը — եւ շատ կարեւոր մասը — ինչպէս տեսանք իր տեղում, գրուած է այդ թուականին:

Հաղիւ քսան տարին թեւակոխած մի պատանի այդ թուականին գրում է Հայոց բանաստեղծական գրականութեան ամենէն ուժեղ էջերը, ինչպէս եւ գրում է չորս թատերագրութիւն — պատմական եւ իրական: Կարելի է ենթադրել, թէ ինչ կը տար Պետրոս Դուրեանը յետագայ տարիներում, հետզհետէ զարգանալով եւ հասունանալով, եթէ տնտեսական ծանր խնդիրը նրա հիւանդութեան եւ մահուան պատճառ չդառնար:

—

Պետրոս Դուրեան թատերագրո՞ղ է թէ ոչ։

Արեւելահայ երիտասարդ քննադատ Վահան Նալբանդեան, "Մշակ„ի 1901 թուի Օգոստոս 2ի համարում այն կարծիքն է յայտնում, թէ Դուրեանին չի կարելի թատերագիր անուանել, որովհետեւ նա թատերագրութիւններն արտադրել է կարիքից ստիպուած եւ որովհետեւ նրանք ընդհանրապէս թոյլ գործեր են։

Անշուշտ կարելի չէ վէճի առարկայ դարձնել այն, որ քնարերգակ-բանաստեղծ Դուրեանը անհամեմատելի կերպով բարձր է թատերագիր Դուրեանից։

Բայց երբ նրան համեմատելու լինենք իր ժամանակի միւս թատերագիրների հետ, կը տեսնենք, որ Պետրոս Դուրեան յամենայն դէպս աւելի թոյլ եւ աւելի անկատար չէ նրանցից։

Անկարելի է համեմատել մեր բանաստեղծութիւնը մեր դրամատիքական արուեստի հետ։ Տարիների, դարերի անցեալ ունի մեր բանաստեղծութիւնը։ Սկսած հնագոյն Հայոց վէպից, հեթանոսական շրջանի էպոսից, մինչեւ տասնիններորդ դարը՝ այդ բանաստեղծութիւնը մշակուել, զարգացել եւ կատարելագործուել է։ Իւրաքանչիւր դար եւ իւրաքանչիւր սերունդ նրա վրայ դրել է իր մշակութեան կնիքը։ Մտածել, թէ տասնիններորդ դարի մեր բանաստեղծական գրականութիւնը միայն տասնիններորդ դարի մեր լաւագոյն բանաստեղծների տաղանդի գործն է — մոլորութիւն է պարզապէս։

Մեր դրամատիքական գրականութիւնը սակայն նոր ժամանակի գործ է։ Թէ ինչու հին Հայաստանում դրամատիքական արուեստ գոյութիւն չունէր կամ չզարգացաւ — այդ խնդիրը չափազանց հետաքրքրական է ոչ միայն մեր, այլ եւ արեւելեան միւս գրականութիւնների համար։ Մեր դրացի պարսիկ ժողովուրդը, որ շատ բարձր բանաստեղծութիւն ունէր — դրամա չունէր եւ մինչեւ այժմ էլ չունի։ Գրականութեան տեսաբաններից ոմանք այդ երեւոյթը բացատրում են նրանով, որ դրամատիքական գրականութիւնը կամքի, գործողութեան արտադրութիւն է, եւ որովհետեւ արեւելեան ժողովուրդների մէջ կամքը, գործողութիւնը թոյլ է — դրա համար էլ չէ ստեղծուած կամ չէ զարգացած դրամատիքական արուեստը։

Ինչ էլ որ լինի սակայն, իրողութիւնն այն է, որ մեր գրական երկարատեւ կեանքի ընթացքում, սկսելով հնագոյն ժամանակներից մինչեւ տասնիններորդ դարը, մենք դրամատիքական գրականութիւն չենք ունեցել, եթէ չհաշուենք Արտաւազդին վերագրուած դրամատիքական անյայտ գործերը, կրօնական արարողութիւնների մէջ նկատուած թատրոնական սաղմերը եւ տասնութերորդ դարի կրօնական-թատերական մէկերկու բացառիկ գործերը։

Այսպէս ուրեմն, մինչդեռ մեր բանաստեղծութիւնը հին, մշակուած, զտուած սեռ է, մեր դրամատիքական գրականութիւնը գրեթէ միանգամայն նոր տեսակ է։ Մենք ունենք թէ

հին եւ թէ նոր գրականութեան մէջ շատ արժէքաւոր բանաստեղծներ, որոնք կարող էին եւ այժմ էլ կարող են պատիւ բերել ամենակրթուած ժողովուրդների գրականութեան։ Մինչդեռ մենք չունենք դրամատուրգներ, որոնք — չենք ասում արտասահմանեան գրականութեան համար — գոնէ մեզ համար շատ արժէքաւոր լինէին։ Գաբրիէլ Սունդուկեանը մինչեւ օրս միակ արժէքաւոր թատերագիրն է մնում, այն էլ լեզուի պատճառով գրեթէ տեղային նշանակութիւն է ստանում, չնայելով իր անկասկածելի տաղանդին եւ չնայելով նիւթի հանրամարդկայնութեան։

Միւս կողմից, մեր նոր թատերագիրները թէ բանաստեղծութեան եւ թէ վէպի մէջ արժէքաւոր լինելով, դրամաների մէջ յաճախ միջակ են եւ աւելի յաճախ թոյլ են։ Շիրվանզադէն իբր վիպագիր անհամեմատ կերպով բարձր է, ինչպէս եւ Շանթը իբր բանաստեղծ աւելի արժէք ունի, քան իբրեւ դրամատուրգ։ Դրամատիքական գրականութեան տեսակը — մէկ կողմ թողնելով Սունդուկեանին — վերջին քսանամեակում կամ թերեւս վերջին տասնամեակում առաջ գնաց եւ շատ թէ քիչ մշակուեց։

Պետրոս Դուրեանի թատերագրութիւնները այս պայմանների մէջ դատելով երկրորդական, անկարեւոր գործեր չեն։ Մեր գրականութեան պատմութեան մէջ, մասնաւորապէս թատերական գրականութեան պատմութեան մէջ — նրանք իրենց տեղն ունին անկասկած։ Չնայելով շատ հիմնական թերութիւններին՝ նրա թատերագրութիւնները մինչեւ հիմա ընդհանրապէս կարդացւում են հետաքրքրութեամբ, որովհետեւ պարունակում են իրենց մէջ դրամատիքական վայրկեաններ, ունին հանգոյց, զարգացում, լուծում, ունին եթէ ոչ դրամատիքական գործողութիւն, գէթ դէպքերի յաջող յաջորդականութիւն։ Նրա պատմական ողբերգութիւնները ունին պատմական որոշ տրամադրութիւն։ Նրանց մէջ երեւակայութեան թափով ներկայացուած է պատմական որոշ էպոք, որոշ ժամանակաշրջան — արիւնալից, բուռն, զգացումներով, կրքերով, ընդհարումներով լի։ Ներկայացուած են ոչ թէ պատերազմները — սրերով եւ շաչիւններով, աղաղակներով եւ գոչումներով — այլ ներկայացուած է պատերազմներից յետոյ եկող դառն աղէտի շրջանը, ծանր իրականութիւնը, կեանքի վէպն ու դրաման։ Եւ այս բոլորը արուած է շատ լաւ լեզուով — անշուշտ նկատի առնելով այն ժամանակուայ աշխարհաբարը — կանոնաւոր, սահուն, տաք, սրտառուչ, բանաստեղծական, ժողովրդական եւ ըստ ամենայնի հաղորդիչ ու վարակիչ։ Եւ ինչ որ շատ գնահատելի է՝ բառերի խիստ ընտրութեամբ, ոչ աւելորդ ոճերով եւ դարձուածներով, ոչ խճողուած ու բարդուած, ինչպէս լինում է սովորաբար ռոմանտիք լեզուն եւ ինչ որ մինչեւ օրս էլ յաճախ տեսնում ենք անգամ անուանի հեղինակների մէջ։

Եւ այս դրական յատկութիւնները կարելի է նկատել մինչեւ իսկ նրա սկզբնական գործերի, օրինակի համար "Սեւ Հողերի" մէջ, որ գրուած է պատանեկան վաղ հասակում եւ որ լի է այնքան միամտութիւններով ու թերութիւններով:

Պետրոս Դուրեանի պատմական եւ իրական ողբերգութիւնների մէջ անակնկալները ահագին տեղ են գրաւում: Այս տեսակէտից նա հաւատարիմ արձագանգն է ֆրանսիական ռոմանտիք թատերագրութեան: Անբնական եւ արտասովոր իրողութիւններ, չափազանցութիւններ, ֆանտաստիքական դէպքեր, հրաշքային տարրեր կարելի է գտնել գրեթէ բոլոր գրուածքների մէջ: Նկատելի է, որ հեղինակի կամեցողութիւնը խոշոր տեղ է բռնում այդ երկերում, երեւակայութիւնը չափազանց ազատ է եւ գրեթէ անզուսպ, ինչ որ բացասական յատկութիւն է գեղարուեստական երկեր ստեղծագործելու համար: Այս տեսակէտից "Սեւ Հողերը" եւ "Վարդ եւ Շուշանը" զարմանալի կերպով բնորոշ են:

Բայց Պետրոս Դուրեան արագ քայլերով զարգանում է թատերական գրականութեան մէջ եւ արտադրում է երկեր, որոնք ուրիշ տեսակէտներով հետաքրքրական են, որոնք կարող էին, մանաւանդ այն ժամանակ, կրթողական լինել միւս գրողների համար:

Պետրոս Դուրեանի պատմական ողբերգութիւնների մէջ նկատելի է նոր ժամանակի տրամադրութիւնը: Այս տրամադրութիւնը միւս

հեղինակների մօտ չափազանց դժուար է կամ անկարելի է գտնել: Եւ այդ է մանաւանդ, որ նրան հանում է կեղծ դասական գրականութեան ոլորտից եւ կապում է նոր գրականութեան հետ: Այդ դրամաների մէջ կարեւորն անշուշտ պատմական կեանքի վերարտադրութիւնը չէր, ինչ որ շատ դժուար էր այն ժամանակուայ պատմական եւ սոցիալական գիտութիւնների վիճակում: Կարեւորը պատմական-սոցիալական ոգին էր, որ այլ էր Դուրեանի եւ այլ միւսների մէջ:

Պետրոս Դուրեան աշխատել է վերլուծել, հասկանալ, գիտակցել մեզանից շատ հեռու ժամանակներում կատարուած իրողութիւնների իմաստը: Եւ այս տեսակէտից բաւական նշաններ է տուել իր երկու պատմական աշխատութիւնների մէջ, որոնց խորագիրն է "Ասպատակութիւնք կամ Աւերումն Անիի" եւ "Անկումն Արշակունի Հարստութեան":

Անի քաղաքի աւերումն պատմական ողբերգական, ծանր իրողութիւններից է: Մի ամբողջ ժողովուրդ, աշխատասէր, շինարար, ստեղծագործող — կանգնած է ահաւոր թշնամու առջեւ: Հռչակաւոր քաղաքը պիտի կործանուի, իր ապիկար եւ անժողովրդասէր վարիչների քաղաքականութեան պատճառով: Վերջին պահուն, երբ թշնամին քաղաքի պատերը պիտի պատռի եւ սրարշաւ ներս մտնի անուանի ոստանը — իշխանները միջնաբերդի ներսը փակուած մտածում են միմիայն իրենց համար: Դրամա-

տիքական վայրկեան է սա, որ Պետրոս Դուրեան մի քանի գծերով կարողացել է ներկայացնել։ Նահատակուած թաթուլի կինը, հերոսական Զարմուհին, պահանջում է, որ ժողովրդի համար նախապէս կարգադրութիւն լինի, որ ամէնից առաջ այն "խեղճերի" մասին մտածուի.

"Ո՞վ պիտի խրախուսէ այն խեղճերը, որոնց սիրտն արդէն դառնութեամբ լի է։"

Բայց հայ աղնուականութեան եսական ներկայացուցիչը դիւանագիտական սառնասրտութեամբ պատասխանում է.

"Եթէ դեռ ժողովուրդը մտածենք, որուն կորուստն անհրաժեշտ է, մենք մեր ազատութիւնը պիտի կորսնցնենք։ Ժողովրդին ազատութիւնը մեր դիւցազնութեանը կարօտ չէ, այլ պիտի խոնարհի նա անողորմ ճակատագրի առջեւ։"

Եւ միւս կողմից բոլոր իշխանները աղաղակում են մի սրտառուչ համաձայնութեամբ.

"Ճշմարիտ է!..."
"Բոլոր իշխաններն այսպէս կ'ուզեն!..."

Եւ այսպէս։ Նախարարները պահում են ապահով տեղ, իսկ "խեղճ ժողովուրդը" խոնարհւում է անողորմ ճակատագրի առջեւ, ինչպէս բացարձակ կերպով պահանջել էր նախարարութեան ներկայացուցիչը։

Մի քանի խօսքով Դուրեան ներկայացրել է մեր պատմական կեանքի իրական կողմը, որ մինչեւ այժմ տակաւին մատչելի չէ շատ պատ-

մաբանների, որոնք մեր անցեալ իրականութեան մէջ տեսնում են միայն մի հօտ եւ մի հովիւ։

"Անկումն Արշակունի Հարստութեան" երկի մէջ բաւական հետաքրքրական խորք կայ։ Անշուշտ երիտասարդի գործ է այդ, գրուած մեր նորագոյն թատերական գրականութեան սկզբնական շրջանում, բայց չնայելով դրան՝ զգացւում է տաղանդի փայլը, հեղինակի իմաստութիւնը եւ կեանքն ըմբռնելու ուղիղ տրամադրութիւնը։

Գրուածքն սկսուած է պարզ եւ անբռնաբնոս կերպով։ Հեղինակի երեւակայութիւնը տանում է ընթերցողին դէպի հինգերորդ դարի մեր հեռաւոր անցեալը, դէպի մի պարզ զինուորի աղքատիկ խրճիթը։ Այս ընտանիքի մէջ ապրում են հայրը, ծեր զինուոր Բաբեկ, եւ աղջիկը, սիրուն Շահանդուխտը։ Մայրը չկայ արդէն։ Նրա փոխարէն կայ այն քաղցր յիշողութիւնը, որ թողել է նա սիրելի աղջկայ եւ ամուսնու հոգիների մէջ։

Բաբեկը եւ Շահանդուխտը ապրում են հաւասար, անուրախ կեանքով։

Ծեր զինուորը իր ամբողջ կեանքը անցրել է պատերազմների մէջ, ընտանիքից եւ զաւակներից հեռու, որովհետեւ այդպէս է կամեցել Թագաւորը։ Եւ այդ երկարատեւ ծառայութիւնն այսօր բացարձակապէս ոչինչ չարժէ։ Նրան ասել են, որ "Թագաւորը" եւ "հայրենիքը" կը գնահատեն նրա անձնազոհութիւնը։ Եւ այդ գնահատութիւնն այսօր այն է, որ նրա սիրասուն

ղաւակը դողդողալով է ապրում անշուք տանիքի տակ։

Գրուածքի առաջին իսկ էջերից վիճակների տարբերութիւնը աչքի է ընկնում։ Պետրոս Դուրեան Շահանդուխտի բերանով արտասանում է հետեւեալը։

«...Խեղճ զինուորներն իրենց արիւնով Թագաւորին եւ ազնուականաց երջանիկ ապագան կը գնեն, բայց դարձեալ անոնցմէ կը նախատուին, վասն զի ծայն չունին, վասն զի ցնցուտին մարդը անարգութեան կը դատապարտէ... Աղքատն իր տնակին մէջ չոր եւ նեխուտ հացով կը գոհանայ, իսկ հարստին ապարանքը նոր խորտիկներ կը հնարուին... Զինուորը պատերազմի փողին գոռումէն կը սարսռի, վասն զի իր սիրելիէն պիտի բաժնուի, Թագաւորը անդին կոյս աղջիկ մը կ'առեւանգէ մօր գրկէն... Ի՜նչ սոսկալի են ասոնք...»

Ծեր եւ աղքատ զինուորի այս մռայլ խրճիթից յետոյ, իբրեւ հակադրութիւն, Պետրոս Դուրեան դուրս է բերել Թագաւորի պալատը։ Միապետութեան եւ պաշտօնական կողոպուտի վայրն է այդ, զարդարուած արեւելեան շքեղութիւններով, ոսկով եւ ադամանդով։ Այդ պալատը ամբողջովին եւ այդ բոլոր պերճութիւնը ձեռք է բերուած ժողովրդի արիւնով եւ քրտինքով։

Պետրոս Դուրեան մի քանի խօսքով ներկայացրել է այնտեղ իշխող միապետի աշխարհայեացքը իր պաշտօնի եւ ժողովրդի պարտականութեան մասին.

«...Թագաւորը սուր կու տայ եւ ժողովուրդը կը զարնէ կամ կը զարնուի, դրօշակ կու տայ եւ զինուորը կը կանգնէ կամ իրեն պատանք կ'ընէ...»

Ահա թէ ինչպէս է խօսում հինգերորդ դարի Հայոց միապետը, Արտաշիրը, անշուշտ ոչ իբրեւ բացառութիւն, այլ որպէս ընդհանուր տիպ իշխող Թագաւորների։

Պետրոս Դուրեանի այդ պատմական դրամայի մէջ ծեր զինուորի եւ Թագաւորի միջավայրից զատ դուրս է բերուած նաեւ նախարարների ապարանքը։ Հայոց երկրի բոլոր կողմերից հաւաքուել են մեծ ու փոքր իշխանները Փարներսեհի հարուստ ապարանքում։ Նախարարները խնճոյք են անում, խմում են Ակռաի անուշ գինին, կեցցէ Հայաստան են պոռում փրփրալից գինու բաժակների միջից եւ ծծում են գեղջուկ ժողովրդի արիւն-քրտինքը։

Եւ դրամատիկական ընդհարումը մէկ կողմից մղւում է Թագաւորի եւ գեղջկութեան միջեւ, միւս կողմից գեղջկութեան եւ նախարարների միջեւ, երրորդ կողմից Թագաւորի եւ նախարարների միջեւ։ Այս վերջինը անշուշտ ոչ այնպիսի հիմքերով եւ ոչ այնպէս խորունկ կերպով, որպէս գեղջկութեան եւ ազատների հակադրութիւնը։

Պետրոս Դուրեան անազատների դասի միջից հանել է Բաբէլի եւ Շահանդուխտի

պատկերները։ Բայց եւ ազատների դասի մէջ դրել է նա որոշ անհատներ, որոնք զգում են իրենց դասակարգի անիրաւութիւնը եւ տեսնում են "խեղճ" ժողովրդի տառապանքը։

Թագաւորի որդին, երիտասարդ Հրաչեան, սիրում է գեղեցիկ Շահանդուխտին։ Այդ սիրոյ մէջ նա ազդւում է ծեր զինուորի խիստ բարոյականութիւնից եւ Շահանդուխտի ազնիւ բնաւորութիւնից։ Եւ իր մօր հետ ունեցած խօսակցութեան մէջ զղջացողի շեշտով բացագանչում է.

"Եւ միթէ աշխարհիս վրայ թագ մը կայ, որ արիւնոտ չըլլայ...„

Մայրը, հեզահամբոյր եւ վշտոտ Հերանուշը, ձանձրացել է իր մեծաշուք պալատների մէջ։

"...Ի՞նչ է ծիրանին, ժողովրդեան արեամբ կարմրած պատանքի կտոր մը, որ դարձեալ ժողովուրդը կը կարկտէ։ Ի՞նչ է պալատը, վիրապ մը ուր մարդիկ շղթայ եւ տապար կը կռեն իրենց նմանները հարուածելու։ Ի՞նչ է թագաւորը, թագ կրող չոր գանգ մը, որ մութին մէջ կը հարուածէ։ Հայաստան կը զգայ այս հարուածը եւ կը ճչէ, կ'անիծէ...„

Ահաւասիկ ինչպէս է խօսում արքայական պալատների մէջ բախտաւորութիւն չգտած կինը։ Թէ որդին եւ թէ մայրը նման են այն ազնուական անհատներին, որոնք իրենց դասակարգի փայլից ու դատարկութիւնից յոգնած

են եւ հետամուտ են նոր իդէալների, ինչպէս օրինակի համար՝ ռուս գրականութեան մէջ Յայտնի զղջացող ազնուականները կամ Ժան-Ժակ Ռուսսոյի բարոն Վոլմարները, որոնք ժողովրդի պարզ բարքերից ազդուած՝ կամենում են այդ բարքերով նորանալ։

Պետրոս Դուրեան հինգերորդ դարի աղմկալից կեանքի մէջ դրել է ոչ այնքան արտաքին վտանգը, որքան ներքին վէրքը, ինչ որ խորապէս արժէքաւոր է դարձնում նրա գրուածքը պատմական տեսակէտով եւ ինչ որ կարող է հրահանգիչ լինել նաեւ այսօրուան համար։

Այսպէս։ Եօթանասնական թուականների մեր պատմական ողբերգութիւնների շարքում Պետրոս Դուրեանի գործը աչքի է ընկնում թէ իբր յղացում եւ թէ իբր կատարում։ Նրա մէջ եղած հիմնական թերութիւնները շատ են անկասկած, բայց այդ թերութիւնները մեծ մասամբ արդիւնք են այն ժամանակուայ գրական-հասարակական պայմանների։ Մինչդեռ նա ունի նաեւ անկասկածելի առաքինութիւններ, որոնց մի մասը մենք աշխատեցինք ցուցահանել եւ որ արդիւնք են նրա ստեղծագործական կարողութեան։

Եւ անշուշտ գրականութեան պատմութեան մէջ այս հետաքրքրական գործը չէ կարող անցնել առանց ուշադրութեան։

2. Իրական դրամաներ:

Պետրոս Դուրեան մեր թատերական գրականութեան մէջ ընդհանրապէս եւ արեւմտահայ գրականութեան մէջ մասնաւորապէս ուշադրութեան արժանի է իր իրական դրամայով:

"Թատրոն կամ Թշուառներ" գործը իր բոլոր թերութիւններով հանդերձ մեր նոր թատերագրութեան գիտակցական նախափորձերից է:

Հետաքրքրական է մանաւանդ այդ թատերագրութեան յառաջաբանը, իբրեւ գրականութեան տեսութիւն եւ իբրեւ գրական գիտակցութիւն, որ երեւան է հանել Դուրեան տակաւին 1871 թուականին: Այդ յառաջաբանի մէջ Պետրոս Դուրեան իր գործը անուանում է ժամանակակից թատերախաղ եւ գրում է ի միջի այլոց հետեւեալը.

"...Թատերախաղիս նիւթը թէպէտ եւ ճշմարիտ դէպքեր կը պարունակէ, սակայն այսուամենայնիւ, ինչպէս որ հեղինակ մը կը ստիպուի ընել, պահանջուած յաւելադրութիւնք չեն զլացուած:

Զայս երկասիրելով՝ իմ մասնաւոր դիտումն է իմ անանշանութեամբ օրինակ ըլլալ ուրիշ թատերագրաց, որ աւելի արդի ընտանեկան անցքերը պարունակող բարոյալից թատերախաղեր յօրինելու աշխատին, որով աւելի օգուտ կրնան ընծայել հայ հասարակութեան, քան թէ ազգային

հին դիւցազնութիւնքը ողբերգութեանց վերածելով, որք միշտ միակերպութենէ վրիպած չեն, վասն զի նիւթոց հարուստ աղբիւրներ չունին եւ հետեւաբար ունկնդիր թատերատեսներու տաղտկալի կրնան ըլլալ իրենց միակերպ եւ անընդհատ ներկայացումներով:

Որչափ որ կարելի է սոյն թատերախաղիս լեզուն թատերական կամ պարզ ըլի:"

Վերջում աւելացնում է, որ եթէ իր "յանդուգն եւ միանգամայն դողդոջ քայլափոխը" ներողամտութեամբ եւ քաջալերութեամբ ընդունուի՝ ինքը նորանոր գործերով պիտի փութայ "այս գրական արհեստը քիչ շատ կատարելագործելու աշխատիլ":

Տարաբախտաբար ոչ մէկը տեղի ունեցաւ, ոչ միւսը:

Պետրոս Դուրեան չկարողացաւ այս "ժամանակակից թատերախաղը" հրատարակել իր կենդանութեան օրով: Հասարակութեան ներողամտութիւնը եւ քաջալերութիւնը չունեցաւ, չկարողացաւ գրական այդ նոր ճիւղը "կատարելագործել", ինչպէս ինքն էր փափագում, քանի որ մի տարի չանցած մեռաւ նա ողբերգական պայմանների մէջ: Գրուածքը հրատարակուեց նրա մահից յետոյ, եւ ուրիշներն էլ պատրաստ չէին այն "յանդուգն" դերի համար, որ գծել էր Պետրոս Դուրեան:

Կարելի է ասել, որ քնարերգու բանաստեղծ Պետրոս Դուրեան իրական եւ սոցիալական թատերագրութեան նշանակութիւնը հասկացել էր որպէս ոչ ոք արեւմտահայ գրականութեան մէջ եւ որպէս շատ քչերը արեւելահայոց մէջ։

Այս քչերի մէջ էր 60ական թուականների սկզբին Միքայէլ Նալբանդեանը եւ 60ական թուականների վերջերին Գաբրիէլ Սունդուկեանը։

Առաջինը, Միքայէլ Նալբանդեան, ինդիրը քննել էր իբրեւ քննադատ-հրապարակագիր, "Հիւսիսափայլ"ի մէջ արծարծելով իրական-սոցիալական թատրոնի նշանակութիւնը եւ պաշտպանելով եղած թոյլ փորձերը։

Երկրորդը, Գաբրիէլ Սունդուկեան, մօտեցել էր նրան իբրեւ դրամատուրգ, գործնականապէս հիմք դնելով իրական թատերագրութեան։ "Խաթաբալան" նա գրել էր 1866 թուին, որ եւ նոյն թուին ներկայացուել էր։ Իսկ նշանաւոր "Պէպօն" գրել էր 1870 թուին, որ ներկայացուել էր 1871 ին։

Գրեթէ միաժամանակ, 1871 թուին, Պետրոս Դուրեան արծարծում եւ պաշտպանում էր Կ. Պոլսում իրական թատերագրութեան գաղափարը։ Նրա միջավայրը աւելի անպատրաստ էր, հրապարակին տիրում էր պատմական-դիւցազնական ողբերգութիւնների աղմուկը, չկար ռուսաց իրական գրականութեան աջակցութիւնը եւ ինքն էլ տակաւին շատ երիտասարդ էր։

Այս պայմանների մէջ նրա գործը անհրաժեշտաբար պիտի ունենար շատ թերութիւններ։ Դա ինքն էլ գիտակցում էր այդ, եւ իր նշանակալից յառաջաբանի մէջ խօսում էր այն աստիճանաբար կատարելագործելու մասին։

Եւ այսպէս։ Պետրոս Դուրեան յաղանում է իր իրական թատերագրութիւնը գրական կատարեալ գիտակցութեամբ, որ ինքնին արդէն բարձրացնում է նրա նշանակութիւնը՝ անկախ գրուածքի ներքին արժէքից։

"Թատրոն կամ թշուառներ" ժամանակակից թատերախաղը ներքին արժանիքի տեսակէտից էլ արհամարհելի գործ չէ։ Անշուշտ նա համեմատութեան չէ կարող դրուել Գաբրիէլ Սունդուկեանի իրական թատերախաղերի հետ, բայց մենք, ինչպէս քիչ առաջ բացատրեցինք, պիտի նկատի ունենանք Կ. Պոլսի գրական պայմանները եւ այդ տեսակէտից էլ գնահատենք Դուրեանին։ Մանաւանդ թէ հասուն դրամատուրգի "Պէպօ"ի եւ ուրիշ գործերի բարձր գնահատութիւնը ամենեւին պատճառ չէ, որ մենք աւելի համեստ գործի վրայ ուշադրութիւն չդարձնենք, մի գործի վրայ, որի հեղինակը այլապէս բարձր է եւ այլապէս առաջնակարգ մեր գրականութեան մէջ։

"Թատրոն կամ թշուառներ" երկի նիւթը խառն է իրական եւ ֆանտաստիկական դէպքերով։ Մենք կ'աշխատենք իրական մասը ներկայացնել եւ այն վերլուծել, յապաւելով վերջին գործողութիւնը, որ միանգամայն աւելորդ է,

ֆանտաստիքական դէպքերը թողնելով մէկ կողմ, որ գլխաւորապէս ֆրանսիական ռոմանտիք եւ սանտիմէնտալ դպրոցի ինքնակար արձագանգներն են։

Եւ ահաւասիկ այն իրական նիւթը, որի վրայ հիւսել է Դուրեան իր "ժամանակակից" դրաման։

Թոմաս Մուրատօֆ ռուսահայ յայտնի վաճառական է եղել։ Հասարակական եւ տնտեսական կարգերի մէջ այսօրուան հարուստը վաղը կարող է կորցնել ամէն ինչ եւ հացի կարօտ դառնալ։ Այդպէս է Թոմաս Մուրատօֆը գրուածքի մէջ։ Սնանկացած վաճառականի պարագան է սա, որ մեր իրական գրականութեան սիրած նիւթերից է եւ որի արձանագրութիւնը Շիրվանզադէի վէպերի եւ դրամաների մէջ շատ ենք պատահում։

Թոմաս Մուրատօֆը ունի մի աղջիկ Վարդուհի անունով։ Կինը մեռած է եւ գրուածքի մէջ ամենեւին չէ երեւում։ Նրա ընտանիքում ապրել եւ մեծացել է մի որբ պատանի, Եդուարդ անունով։ Եդուարդը եւ Վարդուհին իրար սիրել են սկզբում իբրեւ եղբայր եւ քոյր, այժմ սիրում են քիչ տարբեր կերպով, բայց դարձեալ անմեղ են, երազական ու ազնիւ։

Եդուարդը բանաստեղծ է եւ թատերագիր։ Աշխատում է աղքատիկ խրճիթի մէջ, "հողէ կանթեղով"։ Սենեակը ցուրտ է, վառարանի մէջ կրակ չկայ։ Բայց ընայելով այդ ծանր պայմաններին՝ այնուամենայնիւ գրում է, գրում է անվախճան։ Նկատելի է այստեղ, որ գրուածքի հերոսի եւ Պետրոս Դուրեանի միջեւ որոշ նմանութիւն կայ։ Մանաւանդ "հողէ կանթեղը" առնուած է ուղղակի Պետրոս Դուրեանի կենսագրութիւնից։

Բայց հողէ կանթեղը եւ անկրակ վառարանը դեռ կարելի է տանել, եթէ մի ծածկուած յարկ լինի եւ նրա տակ էլ մի անկիւն։ Թոմաս մուրացիկ է, չի կարողանում վճարել բնակարանի վարձը եւ տանտէրը ուզում է նրան հեռացնել տնից ոստիկանութեան միջոցով։

Այդ ծանր պայմաններում Թոմային օգնութեան է գալիս մի հարուստ պարոն, որ խոստանում է վճարել տան վարձը, խոստանում է Թոմային աղատել մուրացկանի սարսափելի վիճակից... եթէ միայն գեղեցիկ եւ անմեղ Վարդուհին իր ննջարանի մէջ ընդունի նրան։ Ընդունի նրան ոչ որպէս ամուսին, այլ որպէս տարփածու։ Որովհետեւ՝

"...Միթէ հնա՞ր է, որ վերին աստիճանի ազնուական մը խոնարհի մուրացկանի մը աղջիկ իրեն բացարձակ կին առնել։"

Աղքատ Թոմայի առջեւ դրուած է 50 ոսկին եւ աղջկայ պատիւը մէկ կողմից եւ տնտեսական ծանր մահը միւս կողմից։ Տաժանելի պայքար է սկսւում այդ խեղճ, անզօր մարդու հոգում։ Այդ պայքարը վերջանում է Թոյլի տեղատուութեամբ։

“...Թող անպատիւ ըլլայ (աղջիկը), բայց ոչ անօթի, վասն զի անօթի մարդը, աղքատ մարդն արդէն անպատիւ է...„

Այս սարսափելի որոշումից յետոյ Եդուարդը, աղքատ պատանին եւ Վարդուհու աղնիւ սիրահարը, ատելի է դառնում Թոմայի համար:

“...Եդուարդ, կրակը նետէ՛ այս մրոտած թուղթերը, որոնց վրայ ընդունայն քիրտ եւ լոյս կը թափես... Հրաժարէ՛ այդ քաղցր բայց խաբուսիկ երեւակայութիւններէն եւ երազներէն, հրաժարէ՛ այդ թովիչ փառքէն, ջախջախէ՛ այդ մուրացկանութեան նպաստող քնարը...„

Եւ Եդուարդը արտաքսւում է Թոմայի խրճիթից, որովհետեւ աղքատ է, որովհետեւ վաղը պիտի այնտեղ մտնի մեծահարուստ պարոնը, յիսուն ոսկի փայլուն նուէրով, գնելու համար դժբախտ Վարդուհու պատիւը:

Վարդուհին սոսկալի տառապանքների մէջ տեղի է տալիս: Տեղի է տալիս, որովհետեւ ծանր տնտեսական դրութիւնը, ոստիկանութեան սպառնալիքը եւ հոր բանտարկութեան երկիւղը այդ անզօր աղջկայ մէջ մթնեցնում են հոգեկան եւ բարոյական գիտակցութիւնը: Նա մտածում է ամենամեծ ինքնազոհութեան գնով ազատել հարազատ հօրը, ազատել նաեւ սիրած երիտասարդին:

Թոմայի տնից դուրս գալով՝ Եդուարդը աշխատում է որ եւ է գործ գտնել եւ վաստակով վերադառնալ տուն, օգտակար լինելու համար Թոմային եւ մանաւանդ Վարդուհուն, որի վրայ կախուած զարհուրելի ոճրին անգիտակ է տակաւին:

Դերասանական ասպարիզի մէջ է փորձում իր բախտը, հրաւիրւում է սիրահարի դերերի համար եւ հինգ ֆրանկ կանխավճար է ստանում: Այդ փոքրիկ գումարը նրա աչքում ամենազօր է երեւում, եւ նա սրտատրոփ շտապում է տուն, ազատելու համար իրենց տնակը ոստիկանութեան հետամտութիւնից եւ Թոմային՝ վերահաս բանտարկութիւնից:

Բայց աւա՜ղ, արդէն ուշ է ամէն ինչ: Թոման չի ընդունում Եդուարդին, որովհետեւ այնտեղ է արդէն մեծահարուստ պարոնը եւ իր ձեռքն են արդէն 50 փայլուն ոսկիները:

Եւ ինչ որ անասելի կերպով ծանր է այս ամբողջ մռայլ պատմութեան մէջ, այն է, որ Վարդուհին ծախում է իր պատիւը եւ հայրը ստանում է յիսուն կեղծ ոսկիներ միայն: Պատ-ծեցէք, թէ ինչ կը լինի թշուառական Թոմայի ներքին տրագեդիան: Եւ նա հոգեկան ծայր աստիճան յուզման մէջ հարուստների դէմ դանգատագին բողոք է արձակում.

“...Հարո՛ւստ մարդիկ, ի՞նչ կուզէք աղքատներէն...„

Սրտաբեկ եւ յուսահատ՝ Վարդուհին եւս փորձում է իր համար մի պարապմունք գտնել: Նա էլ բաղխում է թատրոնի դռները: Դերասանուհու պաշտօն է ստանձնում այնտեղ, հան-

դիպում է խորտակուած հոգով իր սիրելի Եդուարդին, եւ երկուսն էլ միասին, իրենց դերերը կատարելու ժամանակ, փոխանակ կեղծ կերպով թունաւորուելու՝ ընդունում են իսկական թոյն եւ մեռնում են զուարճացող հասարակութեան աղմկալից ծափերի տակ...

Այս է նիւթը Պետրոս Դուրեանի ժամանակակից թատերախաղի, որ նա անուանել է "Թատրոն կամ Թշուառներ": Ինչպէս նկատելի է, այս նիւթի մէջ վիպական-ռոմանտիքական բաւական ուժեղ տարր կայ: Բայց կայ նաեւ իրականութեան արձանագրութիւնը, նոր սկսուող դրամատիրական կարգերի յոռի, աղէտաւոր հետեւանքները, ինչ որ այն ժամանակ տակաւին գրականութեան մէջ չէր անցել եւ որ անցաւ Պետրոս Դուրեանի սկսնակ, անփորձ գրչի միջոցով:

Ամբողջութիւնից անկախ՝ այդ գրուածքի մէջ մի քանի կարեւոր կէտեր կան, որոնք Դուրեանին լուսաբանում են որոշ չափով սոցիալական մտածողութեան կողմից եւ որոնցից մէկը աւելորդ չենք համարում առաջ բերել:

Գրուածքի երկրորդական անձերից մէկը խօսում է նոր թատերագրութեան նշանակութեան մասին եւ քննադատում է ժամանակակից հասարակութիւնը, որ իրական գործի փոխարէն հաճոյք է ստանում դիւանագիտական դաւերի եւ պատերազմի նկարագրութիւնը կարդալով:

"...Մեր հասարակութեան մէջ թատրոնի եւ գրականական նիւթերու վրայ գրուած յօդուածներ կարդացող չկայ. ամէնքն էլ քաղաքագէտ են եղեր. խելքերնին ու մտածմունքնին տուեր են այն քաղաքագէտ ճիւաղներուն մեքենայութեանց, որոնք քանի մը կանգուն հողի համար արեան հեղեղներ թափել կուտան եւ անօթի ընտանիքներ կը կազմեն..."

Այս տողերը գրուած են 1871 Յունուարին եւ անշուշտ ակնարկութիւն են 70—71 թուականի ֆրանս-պրուսական պատերազմին:

"Քանի մը կանգուն հողի համար արեան հեղեղներ..."

Ահա թէ ինչպէս է բնորոշում Դուրեան իր դրամայի մէջ այդ պատերազմը, որ ուրիշների համար հայրենասիրական գործ էր:

Այսպէս:

Ինչ որ այս գրուածքի մէջ հետաքրքրական է — ոչ այնքան դրամատիքական կատարումն է, որքան բովանդակութեան յղացումը: Անշուշտ, այժմեան արուեստի տեսակէտից նայելով՝ այդ գրուածքը բաւականութիւն չի կարող տալ շատ թէ քիչ խիստ պահանջների: Բայց դիտելով այն իր ժամանակի եւ պայմանների վրայ՝ նա կը ստանայ որոշ արժէք, որ որոշ չափով պատմական է:

Այն, ինչ որ Պետրոս Դուրեանը արաւ — այն ժամանակի թատերական գրականութեան

համար շատ համարձակ քայլ էր եւ նոյն իսկ յեղաշրջում էր։

Եւ զարմանալին այն է, որ մինչեւ այսօր էլ Պետրոս Դուրեանի սկսած տարտամ գործը ուրիշների կողմից գոյն եւ ոյժ չստացաւ, եւ արեւմտահայ գրականութիւնը մինչեւ այժմ էլ չունի իրական-ժամանակակից դրամատուրգ։

VII.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Մինչեւ հիմա մենք մասնաւորապէս կանգ չառանք Պետրոս Դուրեանի բանաստեղծական գործի վրայ։

Մենք աշխատեցինք այդ գործի զարգացման պարագաները պարզել, ցոյց տալ այն միջավայրը, որի մէջ առաջացաւ Դուրեանի բանաստեղծութիւնը, վերլուծել այն սոցիալական եւ հոգեբանական մթնոլորտը, որի արտայայտիչը հանդիսացաւ նա այնքան գեղեցիկ կերպով։

Այսպիսով, մեր աշխատութեան նախկին մասերի մէջ ինքնին արդէն բաւական բան ասուեց Պետրոս Դուրեանի ոչ միայն միւս գործերի, այլ եւ բանաստեղծական գործի մասին։

Ի նկատի ունենալով այն բոլորը, ինչ որ ասել ենք արդէն Պետրոս Դուրեանի մասին, այսուհետեւ շատ էջերի եւ լայն ծաւալի պէտք չկայ այլ եւս նրա բանաստեղծական գործը ամբողջացնելու եւ իբրեւ մէկ գեղարուեստական միութիւն ընթերցողի առջեւ պատկերացներու համար։

Եւ այժմ ահա անցնում ենք նրա բանաստեղծական գործին մասնաւորապէս։

1. Բանաստեղծական գործը իբրեւ հոգեբանական ամբողջութիւն:

Իր զանազան բանաստեղծութիւնները Պետրոս Դուրեան գրել է իր կեանքի զանազան տարիներում: Ինչպէս ընթերցողը գիտէ, այս կեանքը շատ կարճ տեւողութիւն է ունեցել: Գրել է նա սկսած 1867 թուականից: Բայց նրա կարեւոր բանաստեղծական էջերը գրեթէ ամբողջապէս ամփոփուած են 1871 թուականի մէջ: Այնպէս որ, բանաստեղծական տեսակէտով, այս թուականի բանաստեղծութիւնները կարելի է համարել նրա ամբողջական գործը:

Փաքը ինչ զարմանալի երեւոյթ է այս, որ մէկ տարուայ բանաստեղծական արտադրութիւնը ոչ միայն մեր տաղանդաւոր բանաստեղծի լաւագոյն արտադրութիւնն է, այլ եւ առ հասարակ մեր նոր բանաստեղծութեան ամենէն ինքնատիպ եւ ամենէն անկեղծ էջերն են: Եթէ Պետրոս Դուրեան մնացել է մինչեւ այսօր կենդանի իր բանաստեղծական գործով, եթէ յիսուն երկար տարիներ յիշւում է նա իբրեւ այնքան տաղանդաւոր բանաստեղծ — յիշւում է գրեթէ բացառապէս 1871 թուականի բանաստեղծութիւնների շնորհիւ:

Եւ սա մեր բանաստեղծի համար մի բացասական պարագայ չէ ամենեւին: Քսան տարեկան հասակում նա զգաց իր մօտալուտ մահը,

հաւաքեց իր բոլոր ոյժերը եւ կերտեց իր լուսաւոր տողերը: Կերտեց մէկ տարուայ ընթացքում միայն: Այս իրողութիւնը որչափ պատուաբեր է նրա համար, նոյնքան ողբերգական է մեզ համար, որ զրկուեցինք Դուրեանի աւելի հասուն տարիների բանաստեղծական արտադրութիւնից:

Պետրոս Դուրեանի բանաստեղծական գործը մի հոգեբանական ամբողջութիւն է ներկայացնում: Այդ գործը նրա կեանքի, նրա ներքին ողբերգական աշխարհի բանաստեղծական ձեւակերպումն է: Բանաստեղծի հոգեկան աշխարհը շատ կարճ ժամանակի ընթացքում տարբեր շրջաններ անցրեց: Այս տարբեր շրջանները եւ հոգեբանական այս տարբեր վայրկեանները համապատասխան տրամադրութիւն եւ համապատասխան երգեր ստեղծեցին: Այսպիսով, Պետրոս Դուրեանի հոգեկան զարգացման հետեւեցին նրա երգերը եւ խորապէս արձագանգ տուին այդ զարգացման:

Անշուշտ չի կարելի այս հիմնական տրամադրութիւնը իբրեւ խիստ կերպով սահմանագծուած միջոց ներկայացնել: Եղել են խոտորումներ եւ եթէ կարելի է այսպէս ասել՝ վերիպումներ նրա բանաստեղծական արտադրութեան մէջ: Այսինքն այս կամ այն ոտանաւորը ժամանակագրական կարգով խստապէս չէ ենթարկւում հիմնական տրամադրութեան — բայց որ հիմնական տրամադրութիւնը գոյութիւն ունի,

այդ պարզ կը յայտնուի նրա բանաստեղծական արտադրութեան շատ թէ քիչ ուշադիր ընթերցումից։ Մասնակի երեւոյթները մէկ կողմ թողնելով ուրեմն, կարելի է ասել, որ ընդհանուրը չափազանց ներդաշնակ է բանաստեղծի հոգեկան զարգացման։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնը կարելի է ընդունել իբրեւ մի իրական հոգեբանական վէպ, որի մէջ պատմուած է բանաստեղծի կեանքի զանազան վայրկեանները զարմանալի խորին վերլուծութեամբ։ Կամ աւելի եւս ճիշտ՝ Դուրեանի բանաստեղծութիւնը կարելի է ընդունել իբրեւ մէկ հոգեբանական դրամա, որի մէջ գործող անձը ինքը բանաստեղծն է, որ ապրում է ներքին զարհուրելի ողբերգութեամբ։ Որպէս մի դրամատիքական ստեղծագործութեան մէջ, Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնների հերոսը — ինքը — ունի իր հոգեկան կնճիռի սկզբնաւորութիւնը, զարգացումը, լուծումը, հոգեկան կնճիռի, որ ներկայացուած է այնքան իրական դրամատիզմով։

Պետրոս Դուրեան կեանքի մէջ տենչացել է, այդ տենչանքը դարձել է սէր, սէրը ծանրածանր պատահարների է հանդիպել եւ հետեւել է դրժումը, այնուհետեւ ապրել է դառն յիշողութեամբ, այս յիշողութեան դառնութիւնը հետզհետէ դարձել է յուսահատութիւն, յուսահատութիւնը՝ մահուան ու գերեզմանի տրամադրութիւն, մահուան տրամադրութիւնը՝ ըմբոստացում՝ ճակատա-

գրի դէմ, ապա հոգեկան թուլացում՝, զղջում՝, համակերպում՝, անկում՝...

Ահա բանաստեղծի հոգեկան կեանքը, որ այնքան զարմանալի կերպով ողբերգական է։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնը այս ողբերգութեան գեղարուեստական արտայայտութիւնն է եւ նրա հոգեկան վայրկեանների հարազատ արտացոլումը...

Մենք կ'աշխատենք այդ վայրկեանները եւ նրանց համապատասխան բանաստեղծական արտայայտութիւնը վերլուծել, ցոյց տալ նրանց գրական-հոգեբանական յատկութիւնները եւ ապա ամփոփել բոլորը մի գեղարուեստական ամբողջութեան մէջ, որպէս կերտել է բանաստեղծը։

Սկսենք ուրեմն նրա սկզբնական վայրկեանից։

2. Տենչանքի եւ կարօտի երգերը։

Սկզբնական վայրկեանը, որ մեզ երեւում է Պետրոս Դուրեանի բանաստեղծական գործի մէջ — նրա տենչանքի եւ կարօտի երգերն են։ Այս վայրկեանը մենք դեռ չենք անուանում սիրոյ վայրկեան, որովհետեւ նրանց մէջ կայ նուրբ տարբերութիւն։ Կարօտը պատանեկան պայծառ շրջանն է։ Նրա մէջ կայ անորոշ յուզմունք, որոշ անհանգստութիւն, բայց ոչ բուռն

եւ ուժգին տրամադրութիւն, ոչ այնպիսի խռովութիւն, որ յատուկ է սիրոյ շրջանին եւ յատկապէս Պետրոս Դուրեանի սիրուն։

Այդ վայրկեանը զարմանալի գեղեցկութեամբ արտայայտել է արեւելահայ բանաստեղծ Վահան Տէրեան, որ ուրիշ տեսակէտով ողբերգական կեանք ունեցաւ եւ որի այդ տրամադրութիւնը Նման է Դուրեանի տրամադրութեան, չնայելով որ երկու տաղանդաւոր բանաստեղծները ապրել են ժամանակով հեռու միմեանցից եւ այնքան տարբեր միջավայրերում։

Այդ շրջանի տիպիկական բանաստեղծութիւններից են "Նէ" եւ "Թրքուհին"։

"Նէ"ն կարօտի վաղահաս եւ գողտրիկ արտայայտութիւնն է։ Բանաստեղծը աչքը բաց է անում աշխարհին, արեւին, բնութեան։ Պայծառ բնութեան մէջ նա տեսնում է գարնանագեղ վարդը եւ յարգում է այն, ինչպէս արտայայտում է բանաստեղծը այդ սկզբնական վայրկեանին։ Միայն թէ նա յարգում է վարդը ոչ թէ ինքն իր մէջ, իբրեւ բնութեան զարդ, այլ որովհետեւ նա Նման է կոյսի այտերին եւ յիշեցնում է Նրան։

Պատանի բանաստեղծը աչքը երկինք է բարձրացնում եւ այնտեղ տեսնում է եթերքի կապոյտը իր անսահման գեղեցկութեան մէջ։ Նայում է այդ սքանչելի կապոյտին խորին հոգեզմայլութեամբ, որովհետեւ այդ կապոյտը Նմանում էր կոյսի աչքերին։ Այստեղ էլ եթերքի

գեղեցկութիւնը նրան չէ գրաւում ինքն իր մէջ, իբրեւ զարմանալի բնութեան մէկ վսեմ արտայայտութիւն, այլ նրա համար, որ յիշեցնում է կապուտաչեայ կոյսին։

Որոնող բանաստեղծը աշխարհի տաղտկութեան մէջ տաբւում է միստիկական խոհերով եւ երկնքի անսահմանութեան մէջ կարդում է Աստծուն։ Եւ այս դարձեալ ոչ թէ ինքն իր մէջ, բնազանցական անբացատրելի պատկերացումով, այլ որովհետեւ նա պէտք է որ Նման լինէր "սիրուն եւ ամրիծ" կոյսին։

Այսպէս. բնութիւնը, գեղեցիկ երկնակամարը, միստիկական աստուածութիւնը Նրան յոյզ են պատճառում, որովհետեւ նա այդ բոլորի մէջ, ամենուրեք, տեսնում է ապրող եւ կենդանի էակը, որ գեղեցկութեան տիպարն է։

Եւ ստեղծւում է յստակ, սիրուն, միամիտ ու պայծառ բանաստեղծութիւնը, որ նա խորագրել է երկու գրով — "Նէ"։

"Վարդը զարնայնի
Թէ կուսին տիպար
Այտերուն շրլար՝
Ո՞վ յարգէր զանի։

Թէ չնմանէր
Կապոյտն եթերաց
Կուսին աչերաց՝
Երկինք ո՞վ նայէր։

Թէ կոյսը չըլլար
Սիրուն եւ ամբիծ,
ԶԱստուածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար:„

Պետրոս Դուրեանի սկզբնական տրամադրութեան արտայայտութիւնն է այս երեք կարճ քառեակը, որի մէջ խորագրել է նա այնքան շատ բան եւ որոշ հասակի համար այնքան ճշմարիտ հոգեբանութիւն:

Այս անուշ տրամադրութիւնը հետզհետէ սկսում է անհանգստանալ: "Թրքուհին„ արդէն որոշ չափով առաջացած տենչանքի արտայայտութիւն է: Նա սքանչանում է հանդէպ այն "վերջալոյսի աղջկան„, որի սիրտը տրոփում է քոցավառուած հորիզոնի կարօտի ժամին եւ որ՝ "եթէ նայի — կ'ըսես հիմա կը մարի„...

Պետրոս Դուրեանի ամէնէն ինքնատիպ բանաստեղծութիւններից է "Թրքուհին„, որի մէջ նա դրել է իր հոգեբանական եւ գեղարուեստական նուրբ կարողութիւնները: Նա ներկայացնում է մի էակ, որ այլ եւս այնպէս եթերային չէ, ինչպէս "Նէ„ի կոյսը: Այս էակը մի տարօրէն միացումն է երազական եւ զգայական մտապատկերների: Դալկահար է նա, վերջալոյսի ստեղծագործութիւն, "մեղամոմի անդրիանդի մը հանգոյն„, բայց միաժամանակ՝ "սիրտը կը մնայ սիրավառ„, միաժամանակ՝ "լանջն է յուզեալ ովկեանի մը նման„: Տենչանքն ու կարօտն են երգուած այդտեղ, որ

ամէն վայրկեան կարող են փոթորկալի սէր դառնալ: Պատանեկան շիկնութիւնն է արտայայտուած այդտեղ, որ կարող է մի յանկարծական ոյժով ընկնուիլ: Սրտի սկզբնական շարժումներն են նկարուած, որոնք կարող են ամէն ակնթարթ թոիչք դառնալ: Անհատնում մի բան ունի այդ էակը իր մէջ, որ կարող է նուաղիլ, մաշիլ, խամրիլ, բայց որ միշտ վառուում է ու վառուում, տաճարի մէջ շարունակ առկայծող տնանկ կնոջ ճրագի պէս:

Զարմանալի գեղեցկութեամբ է դուրս բերել Պետրոս Դուրեան այս հոգեբանական զանազանակերպութիւնը, որ սակայն այնքան իրական է եւ այնքան ճշմարիտ՝ պատանի, երիտասարդ հոգիների համար: Մի շրջան է սա, որ երազներ ու կարօտ ունի եւ որ սկսում է զգալ արեան ձայնը, սկսում է տարփանքի մթութիւն տեսնել իր պայծառ աչքերի առջեւ:

Եւ սակայն զգայականութեան ու տարփանքի շեշտերը, ինչ որ առհասարակ ունի Պետրոս Դուրեան — այսչափ են միայն: Դուրեան արեւելեան տարփալից միջավայրի ծնունդ լինելով, երգելով արեւելքի զգայական էակին՝ տուել է նրան նրբութեան եւ խորութեան մի սրտառուչ գունաւորում, ինչ որ իր հոգու յատկութիւնն է գերազանցապէս:

Բայց միայն հոգեբանական նրբութեան մէջ չէ այդ բանաստեղծութեան խորին արժանիքը: Նա միաժամանակ գեղարուեստական զարմանալի իրագործում ունի, համաձակ, ամ-

փոփ, ուժեղ եւ ինքնուրոյն։ Այդ իրագործումը մասնաւորապէս արտայայտում է այն կարճ ձեւակերպութիւնների մէջ, որով վերջանում են բանաստեղծութեան տուները եւ որոնք այնքան վարպետօրէն գծում են վերջալոյսի աղջկան։

„...Եթէ շարժի,
Կ'ըսես — Հիմա կը թռչի։

—

Եթէ շիկնի,
Կ'ըսես — Հիմա կը բռնկի։

—

Եթէ խօսի,
Կ'ըսես — Հիմա կը հատնի։

—

Իսկ եթէ մեռնի,
Կ'ըսես — Հիմա կը ծնի։„

Պետրոս Դուրեանի սիրոյ նախագուռն է սա։ Այն ողբերգական սիրոյ, որ յետոյ պիտի նկարագրէր բանաստեղծը այնքան յուզումնալի շեշտերով եւ այնպէս աղիողորմ գալարումներով։

3. Սիրոյ երգը։

Կարօտի եւ տենչանքների մէջ Պետրոս Դուրեան ուզում էր առանձնանալ։ Կեանքը եւ աշխարհի սէրը նրան անհասկանալի երկիւղ էին պատճառում։ Ապրում էր նա պատանեկան

ոսկեճաճանչ երազների մէջ, առանց հոգեմաշ տանջանքների, աղատ՝ սիրոյ սարսափելի ողբերգութիւնից։ Արցունքի դառնութիւնը չէր ճանաչում նա, ինչպէս չէր ճանաչում Խորասուզուած Զանգ„ի լեգենդական Ռաուտէնդլայնը, որ այնպէս գեղեցիկ կերպով ներկայացրել է գերման բանաստեղծ-դրամատուրգ Գերհարտ Հաուպտման։ Եւ ինչպէս մի օր միամիտ Ռաուտէնդլայնը՝ սէրը ճանաչելով՝ աչքերի մէջ անծանօթ կաթիլներ է տեսնում, եւ վշտանում, վշտանում խորապէս — այնպէս էլ Դուրեան մի խորհրդաւոր վայրկեանի մէջ ճանաչում է սիրոյ կրակը.

„Բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ,
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։„

Սակայն նա չէր ուզում ենթարկուել այդ դիւթական խօսքին, ուզում էր լուռ մենանալ, ապրել բնութեան անմեղ գեղեցկութիւններով,

„Սիրել կայծերն երկնի կապուտ...
...Խոկալ, սուզուիլ, զմայլիլ սուտ...„

Այս խոկումը, իդէալական այս զմայլումը պատանի բանաստեղծի ոգու ձգտումն էր, որ արտայայտում է նա մի քանի ձեւերով։ Նա ուզում էր սիրել երկնքի զեփիւռը, որ ուրիշ գաղտնիք չունի բացի անուշ բոյրը, որ չի խոցում երբեք, որ շոյում է քիւր երազներ։ Նա ուզում էր վերջապէս քնարը սիրել,

"Պաշտել, գրկել միայն քնար,
Սիրող էակ ճանչել զանի...,,

Բայց ոգեկան եւ մտաւոր բոլոր այս իդէալ-ները պարտւում են եղերական կերպով, որովհետեւ

"Ո՛հ, խուրձ մը վարս, եղեմ՝ մը շունչ,
Շրջազգեստ մը շրշեց իմ՝ շուրջ...,,

Ահա թէ ինչպիսի հոգեբանական եւ գեղարուեստական նրբութեամբ է ներկայացնում մեզ Պետրոս Դուրեան մարդկային հոգու ամենախորհրդաւոր վայրկեանը, այն անվերադառնալի ակնթարթը, որի ժամանակ մարդուս հոգին հրաժեշտ է տալիս մենակ կեանքին:

...Եւ բանաստեղծը սիրում է:

"Թոթուեց թեւերն հոգիս մոլար,
Ճանչեց զնէ, գեղ ու կրակ,
Սիրտն անապակ, ինչպէս վտակ,
Անմեղ, ինչպէս սիւգ դալկահար,
Հաւատարիմ՝, ինչպէս քնար...,,

Նկատեցէք, թէ ինչ ինքնուրոյն ձեւով է արտայայտում բանաստեղծն իր հոգու բռնկումը, իբրեւ թեւերի թափահարում, եւ ինչ զարմանալի պատկերներով է գծում նա իր սիրած էակին: Այդ սիրած էակը ոչ միայն գեղեցիկ է կրակի պէս, այլ եւ վտակի պէս մաքուր սիրտ ունի, այլ եւ անմեղ է սիւգի պէս, այլ եւ հաւատարիմ է, ինչպէս քնար:

Մէկ ամբողջ կեանք է արտայայտուած այս բանաստեղծութեան մէջ, որ Դուրեան խորագրել է "Սիրել,, բայով, հոգեկան մի ամբողջ կեանք, ոչ թէ իր դադարի, այլ իր շարժման մէջ, իր գործողութեան ընթացքում:

Սիրոյ այս առաջին բնազդական զարթնումը Պետրոս Դուրեան երգել է հոգեբանօրէն եւ գեղարուեստօրէն պարզ եւ խորունկ ձեւի մէջ: Մի քանի ամփոփ եւ ընտրուած պատկերներով եւ մի քանի սակաւաթիւ տողերի մէջ բանաստեղծը տալիս է այն, ինչ ուրիշները լայնածաւալ էջերի մէջ դժուարութեամբ կարող էին ներկայացնել: Պետրոս Դուրեան բռնել է մարդկային անվերջանալի հոգու մի քանի ուժեղ վայրկեանները, որոնք բնորոշում են անհատին եւ որոնց մէջ զտուած է ամբողջ հոգին:

Բանաստեղծի մեծութիւնը ահաւասիկ այստեղ է եւ այս է որ արժէք ունի ինչպէս բանաստեղծութեան, նոյնպէս եւ ամէն արուեստի մէջ:

Բացի այս բանաստեղծութիւնից՝ Պետրոս Դուրեան ունի նաեւ մի քանի ուրիշ ոտանաւորներ, որոնց մէջ նոյնպէս երգել է սէրը:

Այդ բանաստեղծութիւնների շարքում բնորոշ տրամադրութիւն են ցուցահանում "Զնէ պաշտեմ„ եւ "Ներա հետ„:

"Սիրել„ բանաստեղծութեան մէջ Պետրոս Դուրեան երգել է այնքան յուզիչ շեշտերով սիրոյ բռնկումը:

"Զնէ պաշտեմ„ բանաստեղծութեան մէջ

մեղմօրէն քնքուշ ձեւով ներկայացնում է իր սիրոյ իդէալը։

Իսկ "Ներա հետ" բանաստեղծութեան մէջ հոգեկան բուռն ծարաւով երգում է սիրոյ վայելքը, որ աւա՜ղ այնքան վաղանցիկ եղաւ բանաստեղծի համար։

Պետրոս Դուրեանի սիրոյ իդէալը բուռն եւ ճաճանչաւոր էակ չէ։ Նա չէ սիրում այն դէմքը,

"Ճառագայթի ու վարդի
Փթթումներով վեհապանծ...",

Նոյնպէս, նա չէ սիրում գիւղաստղի նման հեռաւոր կոյսը, եւ ոչ էլ նրան, որի աչքերը լի են տարփանքներով եւ արբեցութեամբ.

"Ես չը սիրեմ՝ սա կապոյտ
Զոյգ երկինները գինովցած...",

Պետրոս Դուրեանի սիրային իդէալը այսպէս ասելով՝ հարաւային հրակէզ սիրտը չէ, այլ հիւսիսային խորունկ հոգին, որ աւելի յարատեւ է ապրում եւ աւելի մշտապէս զգում։ Արեւելեան բանաստեղծութիւնների մէջ յաճախակի երեւացող կիրքը, զգայական շունչը նրա բանաստեղծութեան համար ամենեւին բնորոշ չեն։ Ռոմանտիք բանաստեղծների ընդհանրապէս անզուսպ երեւակայութիւնը նոյնպէս յատկանշանական չէ նրա համար։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնը, չնայելով իր ոյժին, իր բուռն թափին, զարմանալի կերպով զգաստ է, հոգեբանական, մեծ մասամբ նուրբ եւ գեղեցկօրէն չափուած։

Իր ամենաբուռն բանաստեղծութեան մէջ անգամ — "Տրտունջք"-ի մէջ — որտեղ նրա հոգին այնպիսի սանձակոտոր տրամադրութիւն է առնում՝ այս յատկութիւնները զարմանալի կերպով ներկայ են։

Նրա սիրային իդէալն էլ նոյն ընդհանուր հոգուց է առաջանում։ Նա չէ սիրում ռոմանտիքական ճոխութիւն ու զարդարանքը, այլ սիրում է "մէկ ճառագայթը" եւ ժպտի մէկ վարդը"։

"...Ինձ կը բաւէ իր սրտին
Մէկ ճառագայթը միայն
Եւ մէկ վարդը իր ժպտին...",

—

"...Ես դողդողամ իր վրայ,
Նէ իմ՝ վրայ զորովի...",

Պատանեկան մաքուր եւ անկիրք սիրոյ արտայայտութիւն են այս անզարդ, բայց ներքնապէս շատ բովանդակալից խօսքերը։ Այս բանաստեղծութիւնը, որ անշուշտ Դուրեանի լաւագոյններից է, ցուցահանում է այնքան նուրբ հոգեբանութիւն եւ պատմում է խորին անկեղծութեամբ, թէ ինչ է գնահատում բանաստեղծը սիրած կոյսի մէջ։

Սիրոյ բռնկումից եւ սիրային իդէալից յետոյ Պետրոս Դուրեան երգել է նաեւ սիրոյ վայելքը։

Գիտենք, կեանքի մէջ այս վայրկեանը ունեցել է թէ ոչ մեր ողբերգական բանաստեղծը, քանի որ — ինչպէս իր տեղում նկատել ենք — կենսագրութեան տուեալները չափազանց անկատար են այս նկատմամբ։ Բայց բանաստեղծութեան մէջ կայ այդ վայրկեանը, եւ մենք կ'ուզէինք մի քանի խօսք ասել այս մասին։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնների շարքում "Ներա հետը" պէտք է համարել անշուշտ ամենաանկեղծ եւ ներշնչուած էջերից մէկը։ Այդտեղ բանաստեղծը խորին կարօտով երգում է սիրային այն երանելի ժամը, որ ունենում է սիրող հոգին սիրող հոգու մօտ։ Այն ժամանակ, երբ նա գրում է իր հրաշալի տողերը — սիրային վայելքի ժամը անցած է արդէն։ Նա անդրադառնում է այդ վայրկեանին մի ճշմարիտ վերապրումով, եւ թերեւս դրանից է առաջանում այն հոգեմաշ, անդարմանելի կարօտը, որ խեղդում է բանաստեղծին.

"Ո՜հ, այն ժամը ոսկեզօծ
Անշուշտ սահած, թռած է
Ճակատագրին անողորմ
Սեւ ձեռքերէն երկաթէ։"

Բանաստեղծութեան այս տունը միայն յայտնում է մեզ, թէ բանաստեղծի վայելքն արդէն անցածէ։ Մնացած տասը տունը երգում են վայելքը իբրեւ ներկայ իրողութիւն եւ երգում են այնպէս խորունկ, ինչպէս քիչ քնարական բանաստեղծներ կարող են երգել։

Այս վայելքը նա չէ երգում ամենաին զգայական տրամադրութեամբ կամ տարփալի պատկերներով։ Այս ուղղութեամբ ինչ որ ասում է բանաստեղծը, այն է, թէ սիրած աղջկայ արձակ մազերը քամին տանում է դէպի նրա երեսը եւ մազերի բոյրերով հովահրում է բանաստեղծի բռնկած ճակատը.

"Եվ թողուց որ վարսքն ազատ
Սիւզը դէպ յիս բերելով
Միշտ հովահրէ բրոնկած
Ճակատս զով բոյրերով։"

Մազերի այս զով բուրմունքը յիշեցնում է մասամբ այն բանաստեղծներին, որոնք աշխատում են տեսողական եւ երաժշտական մտապատկերները լրացնել կամ փոխարինել հոտառութեան մտապատկերներով։ Ցամենայն դէպս Պետրոս Դուրեանի այդ բանաստեղծութիւնը այն զգայական հոգեբանութիւնը չէ, որ երեւաց օրինակի համար Գաբրիել Դ'Անունցիօի տարփալի բանաստեղծութիւնների մէջ, կրքոտ բոյրերի եւ խենթացնող անուշահոտութիւնների այն հարաւային շունչով, որ բնորոշում է իտալացի բանաստեղծին։

Պետրոս Դուրեանի վայելքը հոգեկան ինքնամոռացումն է, կարօտալի եւ ոչ տարփալի, գորովալի եւ ոչ զգայական, յստակ ու ջինջ եւ ոչ պղտոր ու բորբոքուած։

Վայելքի այդ երանելի ժամը նրա համար թոթովանք է եւ դող։

"Թոթովեցի... դողացի..."

Այդ դողն եւ թոթովանքի վայրկեանին բանաստեղծը չի կարողանում խօսք արտասանել, բայց նրա աչքերում վառւում է բոցը եւ սիրտն էլ տրոփում է ուժգին.

"...Խօսինք ըսաւ — ո՛հ, խօսիլ,
Հատնիլ է լոկ ինձ համար:"

—

"Աչերու բոցն երբ մարի,
Դաղրի տրոփին երբ սրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անզօր շուրթերըն խօսին:"

Պետրոս Դուրեան իր սիրային վայելքը երգում է միայնութեան մէջ, հեռու մարդկանցից, հեռու օրուայ խառնակ ձայներից, այն վսեմ ժամին.

"Երբ կարմիր շողը մարէին
Հորիզոնին վերեւի..."

եւ երբ՝

"Հուր հորիզոն մարեցաւ,
Երկինքն աստղեր փթթեցան..."

Նրա երանութեան ժամին ականատես են միայն երկինքն ու աստղերը, որոնք նախանձոտ չեն եւ որոնք յուզւում են բանաստեղծի դողով: Երջանկութեան ոգեւորուած վայրկանին նրանք խոստումներ են տալիս ոչ թէ մարդկանց, այլ

աստղերին, որոնք բանաստեղծի երեւակայութեան մէջ մի զարմանալի գաղտնիքով կարող են ապրել եւ համազգալ մարդկային հոգին.

"Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Դողդըղացին աստղերն ալ
Մեր երդումէն ահարկու:

—

Լսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բնութիւնն եղաւ պսակիչ
Մեզ պըսակեց աստղերով..."

Բայց, աւա՜ղ, աստղերի այս բանաստեղծական պսակը ոչ մի իրական հետեւանք չի ունենում: Եւ բանաստեղծի սիրային վայելքը, երգուած այնպիսի ռոմանտիկական ոգեւորութեամբ, պարտւում է անիրաւունակ կերպով:

Պետրոս Դուրեան, որ իր սիրային երգերով խօսեցրել էր բնութիւնը այնպիսի նոր բառերով եւ այնքան գեղեցիկ արտայայտութիւններով — մերժւում է կեանքում: Եւ սիրային երգին յաջորդում է Դրժումի երգը...

4. Դրժումի երգը:

Պետրոս Դուրեանի կեանքի շատ ծանր պայմանների մէջ նրա հոգին աւելի եւս դառնանում է մերժուած սիրուց:

Պատանի բանաստեղծը իր ամբողջ էութեամբ ձգտում էր մի բարեկամ սիրտ ունենալ, նրա քով լինել միշտ, սիրել սեւ աչքերը, սիրել պայծառ ճակատը — բայց չկարողացաւ գոհացնել իր հոգեկան բուռն ցանկութիւնը, եւ նրա կեանքը կորցրեց իր բարոյական յենարանը։

"Դրժել" բանաստեղծութիւնը նրա հոգեկան այս ծանր տրամադրութեան հարազատ արձագանգն է։

"Ես ուզեցի պաշտել զնէ...,,

—

"...Սիրել աստղերն սեւ աչերուն...,,

—

"...Մտիկ ընել թնդիւն սրտին...,,

—

"...Շնչել, խմել ներա հոգին...,,

Բայց այս աղիողորմ կարօտը մնում է անպատասխան եւ սիրած էակը տրտնջում է նրա գորովանքից.

"Զիս կը նեղես — հրծծեց ինձի։,,

Պետրոս Դուրեան կամենում է նրա քնարը դառնալ, հեծեծալ նրա ձեռքերի մէջ, երգել նրան, հիանալ նրանով.

"Ես ուզեցի քնար մ՚ըլլալ
Ներա ձեռքին տակ հեւացող,
Ներա հոգոյն խորն հիացող
Թեթեւ պատկեր մ՚ըլլալ շարժեալ,
Մոռնալ զիս, լոկ զնէ խոկալ...,,

Սակայն աղջիկը մնում է անդրդուելի եւ բանաստեղծի հոգին ցնցում է "ամպրոպ մը սաստ"։ Խորին տխրութիւնը պատում է նրան, եւ նա զգում է, որ իր բոլոր ոգեւորութիւնը եղել է ցաւագին կերպով ի զուր, նա զգում է, որ իր սիրած էակի սիրտը ոչինչ, ոչինչ չի կարող տալ այսուհետեւ.

"...Ի զուր սիրտս վիսաց առջին
Ինկարկելու սիրտն անապատ...,,

Եւ այն ժամանակ, երբ բանաստեղծը նկատում է այս զարհուրելի անապատը — չի կարողանում պահել այլ եւս իր հոգեկան արիութիւնը եւ իր բարոյական հաւասարակշռութիւնը։

Զարմանալի կերպով մարգկային է այս վիճակը։ Դա մի վայրկեան է, որին ենթակայ են ամենաուժեղ խառնուածքներն անգամ եւ որից յետոյ քչերն են կարողանում նոր սէր ունենալ եւ նոր երանութիւն երգել։

Պետրոս Դուրեանի հոգին "կայծակնահար" է լինում այս սարսափելի վայրկեանից յետոյ եւ երգերը "մոխիր" են դառնում իր էութեան մէջ.

"Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներն յիս,
Ճակատագիրս խնծղաց ի վեր...,,

Նկատեցէք Ինչպիսի անսովոր ձեւով եւ խոլական ոյժով է արտայայտում Պետրոս Դուրեան իր գոյութեան ճակատագրական ժամը։ Իր ցաւատանջ երեւակայութեան մէջ ստեղծում է նա ահաւոր պատկերներ, որպէս թէ նրա խոկումները ամպեր են, որոնք որոտում են եւ կայծակնահար են անում մատաղ հոգին։ Որպէս թէ հրդեհ է առաջանում նրա գոյութեան ներսը եւ ոսկի երազները այրուելով, այրուելով մոխիր են դառնում։ Եւ այս ողբերգական տեսարանի վրայ ճակատագիրը վերեւից ծիծաղում է թշնամական քրքիջով։

Պետրոս Դուրեան չորս տողերի մէջ ամփոփում է մերժուած սիրոյ ծանր պատմութիւնը։ Այդ տողերը սովորական չեն, մեայլ են, միստիքական գոյն ունին, եւ միաժամանակ պատկերալից են, ուժեղ եւ արտայայտիչ։

Դրժումից յետոյ Դուրեան թեքւում է դէպի բարոյական անհաւասարակշռութիւնը։ Նա այլ եւս իր առջեւ չէ տեսնում նոր կեանք, նոր վայելք։ Նա չի կարող այլ եւս երազել, որովհետեւ.

"Փունջ մը կնճիռ, քոյլ մը կայծակ,
Դժոխք մ'անէծք խոցեց հոգեակս։,,

"Դրժել" բանաստեղծութիւնից զատ՝ Պետրոս Դուրեան մերժուած սիրոյ հոգեբանութիւնը արտայայտել է նաեւ ուրիշ բանաստեղծութիւնների մէջ։

"Մնաս բարեաւ"ը թափառական սիրոյ երգն է, մանկական եւ յուզումնալից շեշտերով։ Բանաստեղծը նկարագրում է մի գեղեցիկ, գարնանաշունչ առաւօտ։ Այս առաւօտի մէջ նա պատկերացնում է իր սիրած կոյսը՝ բոցավառ եւ եթերային, որ ժպտում է բանաստեղծին լուսնի պէս.

"Առտու մը դեռ մթնշաղ՝
Կը ծաւալէր շող ու շաղ.
Ծաղկանց մէջ քեզ տեսայ ես,
Կը ժպտէիր լուսնոյ պէս։

Աչերդ սիրոյ Ատրուշան,
Մ'ատներդ էին գիրգ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայուածքդդ ծնէր նոր եթեր։,,

Սակայն կոյսը չէ սիրում նրան — եւ բանաստեղծը թափառաշրջիկ է դառնում։ Բնութեան պարզ եւ անգիտակցական միջավայրում նա աշխատում է մոռանալ իր ցաւերը, բուժել իր վէրքը, բայց ի զուր։ Մերժուած սիրոյ պատկերը հետեւում է նրան եւ ամենուրեք նա լսում է դրժումի սարսափելի խօսքը.

"...Երբ առուակին եզերքը
Նստիմ սփոփել իմ վէրքը,

Դարձեալ դու կը գտնես զիս,
Ալեաց մէջէն կը ժպտիս:

Երբ լեռները կը փախչիմ,
Որ չտեսնեմ քեզ՝ հանգչիմ,
Հողմոյն մէջէն կը խօսիս,
Թէ՝ դու բնաւ չես սիրեր զիս:,,

"Հոգիներ" բանաստեղծութեան մէջ արտայայտուած է նոյն հոգեբանութիւնը աւելի վերաւոր ձեւով.

"Երբ աստղալոյց գիշեր է զով,
Շրջազայիս Պաղլար-Պաշի,
Գիտես թէ սիրտս որչափ մաշի
Շրջազգեստիդ լոկ շրշիւնով:,,

Բայց աղջիկը կատարելապէս անտարբեր է բանաստեղծի ողբերգական կոչերի հանդէպ եւ փախչում է նրանից անդառնալի կերպով: Փախստի այս վայրկեանը Պետրոս Դուրեան արտայայտել է մի գեղեցիկ եւ ինքնուրոյն պատկերով.

"...Գիսաստղի պէս հեռուն կ'նազիս՝
Հովին տրուած մազերդ ոսկի:,,

Եւ այս տողերի մէջ ամփոփուած է ոչ թէ անէծք, ոչ թէ չարախնդութիւն մերժուած հոգու, այլ դարձեալ հիացմունք սիրած էակի գեղեցկութեան հանդէպ, որ ոսկի մազերը հովին տուած՝ հեռանում է եթերքի մէջ, ստուերը տարածելով բանաստեղծի դողդոջուն քնարի վրայ:

5. Յիշողութեան եւ ափսոսանքի երգը:

Պետրոս Դուրեանի գրժումի երգերը վերջանում են գերեզմանի յիշողութեամբ: Բանաստեղծը սկսում է մտածել, որ այս հոգեկան լքման մէջ նրան կարող է մահը ազատել: Բայց գերեզմանական մռայլ տրամադրութիւնը աւելի բնորոշ կերպով յետոյ է երեւան գալիս նրա բանաստեղծութիւնների մէջ, երբ նրա հոգին անցնում է յուսահատութեան ծանր ու դժուարին շրջանը:

Առ այժմ, սիրած էակի դրժումից յետոյ Պետրոս Դուրեան որոշ ժամանակ յիշողութեամբ է ապրում: Այդ շրջանում նա արտադրում է յիշողութեան եւ ափսոսանքի իր սրտաճմլիկ երգը, որ ունի "Սեւ-Սեւ" տխուր խորագիրը:

Այս բանաստեղծութիւնը կարօտակէզ տրամադրութեան արտայայտութիւն է, գրուած սակայն հանդարտաբարոյ շեշտով, որ բնորոշ է յիշողութեան հոգեբանութեան համար: Նա որոշ նշանակութիւն ունի Դուրեանի կենսագրութեան զանազան պարագաները ճշտելու տեսակէտից: Այդտեղ բանաստեղծը պատմում է իբրեւ յիշողութիւն, որ նա ունեցել է իր "սիրուհին", որ այս սիրուհու հետ նա ոսկեզօծ օրեր է անցկացրել: Սակայն սեւ ճակատագիրը շատ է տեսել բանաստեղծի երջանկութիւնը, եւ սիրուհին վախճանուել է: Դժուար է որոշել, թէ այս պատմութեան մէջ որ մասն է իրակա-

նութիւն եւ որ մասը բանաստեղծական պատկերացում։ Եթէ սիրուհու մահուան պատմութիւնը ռոմանտիքական "աւելադրութիւն„ համարենք կամ փոխաբերական նշանակութիւն ունեցող հատուած, բանաստեղծութեան միւս մասերը սակայն մեծ չափով իրական ապրում են ցուցահանում։ Այդ բանաստեղծութեան մէջ Պետրոս Դուրեան իր պատանեկան հոգեբանութիւնն է գծում մի պատկերաւոր քառեակով, որ հետեւեալն է.

"Երբեմն հոգիս աստղի մը բոց
Եւ թիթեռնի մ'ունէր թեւեր,
Վերջալոյսի նման ամպոց
Երազներ, հոր ճակատս վառէր։„

Երկու բանաստեղծական նախադասութեան մէջ Պետրոս Դուրեան տալիս է մի ամբողջ շրջանի հոգեկան նկարագիրը։ Եւ նկատեցէք, որքան ինքնաբուխ եւ որքան բովանդակալից են համեմատութիւնները։ Հոգին — աստղի բոց, հոգին — թիթեռնի թեւ, եւ կարմիր երազները — ճակատի վրայ։

Այսպէս էր նա այն ժամանակ, երբ սիրում էր եւ երբ թւում էր թէ սիրուած էր։

Իսկ այժմ սառն արցունքներ կան սրտի մէջ եւ "սեւաթորմի„ ամպերը խեղդում են նրան.

"Արդ սառոյցներ դառն արտասրի
Կը քարանան կուրծիս ներքեւ
Եւ բարդք ամպոց սեւաթորմի
Կ'ուզեն խեղդել սիրտս ու արեւ։„

Պետրոս Դուրեանի հոգին մռայլւում է այսպէս։ Բանաստեղծը օրեր ու գիշերներ յիշում է իր երբեմնի աստղի բոցը եւ իր թիթեռնի թեթեւ թեւերը։

Այս յիշողութիւնը սկզբում հանդարտ էր, մեղմ, տխրօրէն անուշ։ Բայց հետզհետէ նա դառնանում է, թունաւորում բանաստեղծի ողջ գոյութիւնը եւ յուսահատութեան ու տրտունջի այնպէս ուժգին տրամադրութիւն ծնեցնում։

Եւ բանաստեղծի փոթորկալից երգը այս շրջանում է ստեղծագործւում։

6. Յուսահատութեան եւ մահուան երգը։

Կեանքի դժուարին պայմանները, դրժուած սէրը, ամենամօտ ընկերոջ մահը եւ վերջապէս անբուժելի հիւանդութիւնը Պետրոս Դուրեանի հոգու մէջ ծնեցնում են ամենամռայլ տրամադրութիւն։ Այս մռայլ տրամադրութիւնը հետզհետէ դառնում է աւելի ու աւելի անդարմանելի։ Ժամանակի հետ Պետրոս Դուրեանի վերքը փոխանակ սպիանալու, աւելի եւս խորանում է եւ պատում նրա ամբողջ գոյութիւնը։

Այն հոգեկան դրութիւնը, որի մէջ բանաստեղծը գտնւում է այդ շրջանում — կա-

րելի է կոչել մի բառով յուսահատութիւն։ Այդ դրութեան մէջ բանաստեղծը կորցնում է իր երազները, կորցնում է իր հաւատը, կորցնում է իր գոյութեան հիմքը։ Նա, որ այնպիսի զօրաւոր կապով կապուած էր կեանքի հետ — հետզհետէ տեսնում է իր առջեւ կեանքի խուսափումը։ Բանաստեղծական ուժգին տրամադրութեամբ սիրել էր նա կեանքի խորին հրապոյրը։ Այս հրապոյրը եղել էր նրա համար ոչ թէ զգայական ցանկութիւն, ոչ թէ եսական կամ քաղքենիական հանգստաւէտ կեանքի փափագ — այլ մտաւորական եւ բարոյական նուրբ ձգտողութիւն։ Եւ ահաւասիկ այս բարոյական նուրբ իդէալը զարնւում է սարսափելի իրողութեան։

Պետրոս Դուրեանի յուսահատութիւնը յոռետեսական յուսահատութիւն չէ։ Բանաստեղծի հոգեկան դառնութիւնը նման չէ այն անհատների հոգեկան վիճակին, որոնք յուսահատութեան մէջ են ընկնում՝ չկարողանալով գոհացնել իրենց չափազանցեալ ցանկութիւնները եւ կամ իրենց տարկանոն իղձերի կամ գործերի հետեւանքով։ Այս տեսակէտից նա ոչինչ հիւանդագին բան չունի իր մէջ։ Նա վատառողջ տրամադրութեան կամ մեղսագործ հոգերանութեան արտադրութիւն չէ, եւ ոչ էլ սոցիալական այլասերութեան ուղղակի կամ անուղղակի հետեւանքը։

Պետրոս Դուրեանի անհատական ցանկութիւնները կեանքի մէջ բաւական չափաւոր են, բնականոն եւ աղնիւ։

Աշխատանքի եւ բարոյական պարտականութեան մարդն է նա։ Իր մանուկ հասակը, իր պատանութիւնը, իր երիտասարդութեան տարիները անց է կացրել շարունակական հոգսի եւ գործունէութեան մէջ։ Պարապի եւ զուարճութեան ժամեր չէ ունեցել նա։ Ապրած եւ վայելած կեանքի յոգնածութիւնը չունի նա։ Յարատեւ եւ անդադրում աշխատանքի մէջ լինելով՝ նա ժամանակ չէ ունեցել փիլիսոփայելու կեանքի "անցաւորութեան" եւ "ունայնութեան" վրայ։ Իր կեանքի բեռը կրել է նա ամենամեծ պատրաստակամութեամբ, հերոսաբար, անձնազոհութեամբ։ Եւ կամեցել է դրա փոխարէն՝ "ծառի մը շուք եւ նրա քով մէկ վտակ"։

Բայց այս նուազագոյն ցանկութիւնն անգամ նրան զլացել է կեանքը։

Ահա թէ ո՞րտեղ է Պետրոս Դուրեանի հոգու խորին ողբերգութիւնը։ Ահա թէ ինչ է բանաստեղծին մղում դէպի մութ տրամադրութիւն, դէպի յուսահատութիւն։ Այս տրամադրութիւնը հետզհետէ այնքան է կենդրոնանում, խորանում, ամփոփւում, որ նրան այլ եւս կեանքի մէջ ոչինչ լուսաւոր բան չի երեւում։ Սիրում էր նա կեանքը իր բանաստեղծական հոգու մաքուր յոյզերով, բայց կեանքը նրան անիրաւութիւն արաւ։ Դառն եւ թունաւոր "ճակատագիրը" վերեւից "խնծղաց" եւ բանաստեղծի շուրջը ամեն ինչ ամայացաւ։ Ոչ ոք չկար, որ նրան այդ զարհուրելի կացութեան մէջ նեցուկ լինէր, մարդկայնօրէն աջակցէր, ոչ ոք

չկար, որ նրա սիրտը բաց անէր եւ տեսնէր թէ այնտեղ "ի՞նչեր գրուած կան"...

Եւ Պետրոս Դուրեան ընկնում է յուսահատութեան տագնապի մէջ։ Իր հոգու այդ վիճակը ընդգրկում է ամեն ինչ — եւ նա ամեն տեղ իր յուսահատ պատկերն է տեսնում։ Մտածողութիւնը նեղանում է, զգացողութեան սահմանը եղերական կերպով անձուկ դառնում, հայեացքը եղերւում մինչեւ վերջին ծայր։

Հոգեբանական այս մռայլ ժամին Պետրոս Դուրեան արտադրում է երգեր, որոնք զեղուն են յուսահատութեան ու մահուան շունչով։ "Լճակը", "Ի՞նչ կ'ըսեն", "Հեծեծմունքը", "Իմ մահը" այս հոգեկան կացութեան անկեղծ, յուզումնալից արտայայտութիւնն են։

Ինչպէս միւս բանաստեղծութիւնների մէջ, նոյնպէս էլ այդ տագնապալի էջերում Պետրոս Դուրեան մնում է իբրեւ իրական բանաստեղծ, որովհետեւ նա արտայայտում է ոչ թէ մի անգոյ տրամադրութիւն, այլ պատկերացնում է մի իրական ներքնաշխարհ։ Ռոմանտիզմը պահուած է նրա բանաստեղծութիւնների գլխաւորապէս արտաքինի վրայ, այն էլ սրբագրուած է Դուրեանի զգաստ եւ անկեղծ արուեստի միջոցով։ Զարմանալի է, որ այդ մռայլ եւ խորապէս ողբերգական բանաստեղծութիւնների մէջ՝ Դուրեան կարողացել է պահպանել չափի զգացումը եւ նկարագրական պարզութիւնը, ինչ որ սովորական յատկութիւն չէր ռոմանտիքների մօտ, մանաւանդ նրա ճանաչած ռոմանտիքների մօտ։

"Լճակ" բանաստեղծութեան մէջ բանաստեղծը խօսում է "մելամաղձոտ" լճի հետ եւ պատմում նրան իր հոգու ներքին խռովութիւնը։ Իր յուսահատութեան ժամերին, իր միայնութեան օրերին, թափառում է նա բնութեան մէջ, սակայն այս բնութիւնը ոչինչ չի կարողանում անել եւ բանաստեղծի վէրքը մնում է անբուժելի։ Լճակի "ալիքներն" ու "փրփուրները" ոչինչ են երեւում բանաստեղծին՝ իր ահագին տառապանքի համեմատութեամբ.

"Որքան ունիս դու ալի,
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի քիւր։"

Եւ եթէ մինչեւ իսկ երկնքի կրակ աստղերը լճի մէջն ընկնեն՝ դարձեալ նա չէ կարող նմանել բանաստեղծի հոգուն, որ անվերջանալի կրակ է.

"Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չես կրնար դուն
Հոգուս, որ է քոց անհուն։"

Այս յուսահատութեան ծանր վայրկեաններին Պետրոս Դուրեան մենակ է բացարձակապէս։

"Ոչ ոք ըսաւ. — Սա տղին
Պատռենք սիրտը տրտմագին,
Նայինք ինչեր գրուած կան...
— Հոն հրդեհ կայ, ոչ մատեան:"

Բանաստեղծը վշտի ծանր ճգնաժամի մէջ ասում է, որ եթէ մինչեւ անգամ բաց անելու լինեն նրա սիրտը՝ այնտեղ ոչինչ չեն կարող կարդալ, քանի որ գիրք չկայ այնտեղ, այլ միայն կրակ կայ: Նրա հոգին պատմելու նիւթ չէ այլ եւս, այլ զգալու եւ այրուելու մի տարր է: Եւ քիչ յետոյ, աւելի առաջ տանելով իր հոգու վերլուծումը, բանաստեղծը ասում է, որ այդ անհուն բոցը այրուել, այրուել եւ մոխիր է դարձել արդէն նրա յուսահատ հոգում: Այս յուսահատութիւնը ամեն ինչ կարող է խառնվել: Մինչեւ անգամ "մելամաղձոտ" եւ "ապշած" լճակը չէ կարող սառնասիրտ կերպով դիտել տագնապալի բանաստեղծին, ու ինքն էլ կը խառնվի անշուշտ.

"...Հոն կայ մոխիր... յիշատակ...
Ալեակդ յուզի՛ն թող, լըճակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Ցուսահատ մը նայեցաւ..."

"Ի՞նչ կ'ըսեն" բանաստեղծութիւնը աւելի մռայլ տրամադրութեան արտայայտութիւն է: Ցուսահատութիւնը այդտեղ ծանր չափի է հասել: Խորին տրտմութեամբ եւ անասելի խառվ-

քով բացականչում է բանաստեղծը իր դժբախտ, դատապարտուած գոյութեան համար.

"Արշալոյս մը չանցա՛ւ սրտէս..."

Եւ բանաստեղծը իր այդ խաւարչտին վայրկեանին տեսնում է միայն մահ ու գերեզման: Մի քանի փոքրիկ տողերի մէջ, հարց ու պատասխանի խօսքերով, ըստ երեւոյթին պարզ ու մանկունակ ձեւով, Պետրոս Դուրեան ներկայացնում է ամենագառն ողբերգութիւնը մի տառապող հոգու, որ այլ եւս ելք չունի եւ որի ելքը բոլոր մահկանացուների ճակատագրական, վերջին ճանապարհն է:

Իր ամենամօտ ընկեր Վարդան Լուիֆեանի ողբերգական մահը նրա մէջ այս մթին տրամադրութիւնն աւելի եւս զօրեղացնում է: Վարդանի մահուան մէջ Պետրոս Դուրեան տեսնում է իր սեփական մահուան նախերգանքը: Նրանք երկուսն էլ միասին են անցկացրել դպրոցական երազկոտ տարիները, Զամբճայի սարը նստած միասին են լուռ մնացել եւ իրրեւ դժգոյն երկու բոցեր՝ իրարու մէջ են այրուել միայն: Պետրոս Դուրեան բանաստեղծական ինքնուրոյն արուեստով ներկայացնում է այս հոգեկան զարմանալի կապը.

"Ո՛հ, երկնքի ժապաւէններ՝
Ճառագայթներ՝ միացուցած
Էին սրտերը մեր միմեանց,
Մեր սրտերը սիրանուէր:

Նոքա միմեանցս համար քանի
Էին անհուն բաց մատեաններ,
Հո՛ն ամեն բառ խորք մը ունէր
Իր ներքեւը սիրոյ, ցաւի:

Ո՛հ, կը յիշեմ, Զամլըճայի
Սարը նստած լուռ մրխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սեւ հովանոցք վրշտահարի:

...Զէինք խօսեր, խօսքն մեր հոգոց
Անհունութիւնը կը պղծէր.
Մենք զերդ երկու դժգոյն բոցեր
Իրարու մէջ կայրէինք սոսկ:„

Այսպէս մտերիմ են եղել Նրանք, իբրեւ մի միայնակ գոյութիւն: Երկուսն էլ տառապել են հիւծախտի ահաւոր ճիրաններում եւ երկուսն էլ միասին ըմպել են "գերեզմանի սեւ կաթը„.

"...Անյուսութիւն, գերեզմանի
Այդ սեւ կաթը շատ ըմպեցինք.
Քեզ յափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից դժգոյն որդի:„

Եւ ոչ մի կասկած չունի Պետրոս Դուրեան, որ ինքն էլ պիտի գնայ Լուիգիեանի ողբերգական ճանապարհով: Աղիողորմ ձայնով նա կանչում է անհետացող Վարդանի յետեւից եւ Նրանից լուր է հարցնում, թէ արդեօք այն աշխարհում երջանիկ է նա, թէ թշուառ:

"Երջանիկ ես հոդ թէ թշուառ,
Զուարթնոյ թեւով լուր մ'ինձ ղրկէ:„

Դուրեանի համար այս աշխարհս "միշտ տաղտուկ է„, ցաւերի "մեծ մայր„ է նա, որի մէջ երջանկութիւն չտեսաւ բանաստեղծը եւ որից միայն հարուածներ ստացաւ:

Եւ եթէ այնտեղ "ծառի մը շուք„ կայ եւ նրա քով "մէկ վտակ„ — Պետրոս Դուրեան նոյն օրն իսկ կը թօթուէր կեանքը, որ նա առնուանում է "հոգու աղտոտ ձորձը„ — եւ իսկոյն հոդ կը հագնէր, "հոդ սգաւոր„...

Սակայն կեանքի անդառնալի փախուստը եւ մահուան արագ յարձակումը նրան որոշ վայրկեաններ սարսափեցնում է, անտանելի խռովութիւն հաղորդում նրա գոյութեան, փոթորիկ յարուցանում նրա ներքին աշխարհում, որ արտայայտում է նա իր այնքան վսեմ ու վիրաւոր տրտունջի երգի մէջ:

7. Տրտունջի երգը:

Պետրոս Դուրեանի երգերի մէջ "Տրտունջքը„ ամենից երկայնաշունչ եւ ամենից բարդ բանաստեղծութիւնն է: Իր շօշափած նիւթով դա մի ամբողջ դրամատիքական բանաստեղծութիւն է, քան թէ մի երգ: Մի ողբերգական կեանք է ներկայացուած այդտեղ իր փոթորկալի զգացումներով, իր մտածողու-

թեամբ, իր աշխարհահայեցողութեամբ, իր բուռն պայքարով, որ մղւում է ճակատագրի եւ աստուածութեան դէմ։ Քնարական, նկարագրական եւ պատմողական տրամադրութիւնից աւելի, այդտեղ արտայայտուած է դրամատիքական խռովայոյզ տրամադրութիւն։ Սոֆոկլէսեան եւ Շէքսպիրեան շունչ կայ այդ գործի մէջ, որ յուզում է ընթերցողին իր խորութեամբ, անմիջականութեամբ եւ անկեղծութեամբ։

Ի՞նչ է այդ դրամայի նիւթը։ Կեանքի յաւիտենական ողբերգութիւնը — ապրելու բնածին, բնազդական փափագը եւ մահուան անդիմադրելի ոյժը, որոնք մի զարհուրելի ընդհարման մէջ են։ Այս ընդհարումը սարսափելի է գիտակցական ամեն հասակի համար, բայց նա մանաւանդ սարսափելի է երիտասարդ, կենսալից տարիքի համար։ Ընդհանուր գրականութեան պատմութեան մէջ շատերը այս զարհուրելի ընդհարման հոգերանութիւնը արուեստի նիւթ են դարձրել։ Հանրամարդկային մի եղական պրոբլեմ է այդ, որի վրայ միշտ պիտի գրուի, քանի կայ աշխարհը եւ քանի կեանքը պայքար է մղում մահուան արհաւիրքի դէմ։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնը այդ հանրամարդկային նիւթի ապրած, զգացած արտայայտութիւնն է, գրուած ներշնչման մի յուզումնալից վայրկեանում, տաղանդի վերաւոր թափով։

Այդ այն վայրկեանն է, երբ բանաստեղծի հայեացքը շփոթւում է մահուան վտանգի

առջեւ եւ նրա վերջին շունչը մոլորւում է աշխարհի մառախուղի մէջ։

Բանաստեղծութիւնը սկսւում է մի սրտամորմոք բացականչութեամբ, որ քերթողը հանում է իր էութեան խորքից եւ որով հրաժեշտ է տալիս Աստծուն եւ արեւին.

"Ի՜, մինաք բարով, Աստուած եւ արեւ
Որ կը պլլպլլաք իմ հոգուս վերեւ...,,

Եւ անմիջապէս մի տողի մէջ ձեւակերպում է իր մահը, դիցաբանական ժամանակի արտայայտութեամբ.

Աստղ մ՚ալ ես կերթամ յաւելուլ երկնից։

Չէ՞ որ դիցաբանական հաւատալիքի համաձայն երկնքի վրայ ցրուած անթիւ աստղերը մեռած մարդկանց հոգիներն են, որ առկայծում են յաւիտենօրէն։ Անշուշտ Պետրոս Դուրեանի տողը դիցաբանական այդ հաւատի արտայայտութիւն չէ, այլ միայն հնագարեան ժամանակից մնացած բանաստեղծական գեղեցիկ ձեւ է, որ մինչեւ օրս էլ գործածական է մեր ժողովրդական խօսքի մէջ։

Բանաստեղծութեան հետեւեալ հինգ տողերի մէջ Պետրոս Դուրեան փիլիսոփայական խորհրդածութիւն է անում աստղերի շուրջը։ Նրա բանաստեղծական արտայայտութեամբ աստղերը անքիծ եւ թշուառ ոգիների ողբագին անէծքն են, որ գնում են երկնքի ճակատը այ-

բելու, իբրեւ գերագոյն բողոքի նշան։ Բայց այդ գերից աւելի, նրանք մի զարմանալի հակասութեամբ, աւելացնում են Աստծու զէնքերն ու զարդերը, Աստծու, որ ինքը մահուան աղբիւրն է։

"Աստղերն ի՞նչ են որ եթէ ոչ անքիծ
Եւ թշուառ ոգոց անէ՛ծք ողբագին,
Որք թրոին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծոյն՝ շանթերու արմատ՝
Ցաւելուն զէնքերն ու զարդերն հրրատ։,,

Այս բանաստեղծական պատկերի առաջին երեք տողերի մէջ Պետրոս Դուրեան անուղղակի կերպով խօսում է իր մասին եւ իր էութիւնը բնորոշում է "անքիծ եւ թշուառ ոգի„ խօսքերով։ Իր այս անքծութեան ու թշուառութեան դէմ դնում է Աստծու ահաւորութիւնը, որովհետեւ կեանքեր տապալող շանթերը այնտեղից են արմատաւորում։

Սակայն այս հեռաւոր փիլիսոփայական խորհրդածութիւնները իրեն՝ բանաստեղծին թւում են յանդուգն ու խիզախ, ինքը մի ընչին հիւլէ, որ ձգտում է ելնել աստղերի անսահման սանդուխքը, հասկանալ հսկայի գործերը, սուզուել երկնքի խորքը։ Իր հոգեկան յուզումների մէջ Դուրեան անդրադառնում է այս գաղափարին եւ անմիջապէս փոխում է իր տոնը։

"Այլ, ո՜հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարէ՛ զիս,
Աստուա՛ծ, խոկն հսկայ փրշրէ հիւլէիս,
Որ ժայռի ծրգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի...,,

Այս տողերից յետոյ մեղմացած եւ բարեկամական տրամադրութեամբ դիմում է նա Աստծուն, որ թէեւ խլել է բանաստեղծի ճակատի վարդը, աչքերի քոցը, հոգու թռիչքը, բայց որ միաժամանակ խոստացել է, թէ պիտի ժպտայ նրան մահուան վայրկեանին։

Եւ հանդարտօրէն տրտում, թախծապատ, սիրալիր տողերով բանաստեղծը ողջունում է դողդոջ էակի Աստծուն.

"Ողջո՛ն քեզ, Աստուա՛ծ, դողդոջ էակին,
Շողին, փրթիթին, ալւոյն ու վանկին.
Դու որ ճակտիս վարդն ու քոցն աչերուս
Ոչ եցիր թրթռումն շրթանց՝ թռիչն հոգոյս,
Ամպ տուիր աչացս, հեւք տուիր սրտիս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս։,,

Այսպէս. միաժամանակ բանաստեղծին պահպանում է այս տրամադրութիւնը, այն բարոյական փոխանակութիւնը, որ նա պիտի ստանայ իր ֆիզիքական կեանքի քայքայումից յետոյ։ Այս բարոյական փոխանակութիւնը նա արտայայտել է հետեւեալ միստիքական տողերի մէջ, որ անշուշտ բանաստեղծական եւ սիմբոլիք նշանակութիւն ունի եւ որոնց մէջ բանաստեղծը չէ ուզում դնել տարակոյսի շեշտ.

Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
Կեանք մ'անհուն շողի, քոյրի, աղօթքի։

Այս յետագայ բարոյական եւ բանաստեղծական կեանքի գնով՝ բանաստեղծը հաշտուում է կարծէք մահուան սարսափելի իրողութեան հետ։

Բայց անմիջապէս յետոյ, նրա մէջ էլ, ինչպէս Համլէտի մէջ իր նշանաւոր մենախօսութեան ժամին, ծագում է մի զարհուրելի տարակոյս։ Ի՞նչ...

"Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համբ անշըշունչ...,,

Անհաւասիկ անհանգուրժելին բանաստեղծի համար, մարդկութեան համար։ Ֆիզիքական մահը աշխարհիս անսասանելի օրէնքներից է։ Բանաստեղծը վերջի վերջոյ կամենում է հաշտուել նրա հետ։ Բայց նրա հետ միասին բարոյական մա՞հը...

Պետրոս Դուրեան դառնում է այսաեղ անհաշտ ու կատաղի։ Եթէ այդպէս է, եթէ նրանից ոչ մի շունչ չպիտի մնայ այս եղերական մշուշի մէջ, ապա՝

"Այժմէն թող որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պըլլուիմ անուանդ, մոնչեմ անդադար,
Թող անէծք մ'ըլլամ ու կողբդ խրիմ
Թող յորջորջեմ քեզ. Աստուած ոխերիմ։,,

Իր հոգեկան յուզման գերագոյն բարձրութեան վրայ է նա, ուժեղ, ահաւոր, տարերային ու շղթայազերծ։ Նրա ներսը փոթորիկ է, անասելի վայրիվերում, եւ ամբողջ գոյութիւնը

փրփրում է դժոխքի նման։ Իր ներքին վիճակը գերագոյն զայրոյթից անմիջապէս յետոյ նա բնորոշում է չորս տողի մէջ, որոնք սկսւում են ուժեղ արտայայտութիւններով եւ վերջանում են արդէն բեկուած տրամադրութեամբ.

"Ո՛հ, կը դողդոջեմ՝ դըժգոյն եմ՝ դըժգոյն,
Փըրփրըի ներսըս դժոխքի մը հանգոյն...
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...,,

Տրամադրութեան այս բեկումից յետոյ Պետրոս Դուրեան աղիողորմ կոչեր է արձակում, գանգատագին պատմում է իր սեւ ճակատագիրը, որ դամբանի մրուրով է գծուած, եւ սրտագին ոգով երկնքի աստղերից կեանքի կայծ ու կրակի մի կաթիլ է աղերսում.

"Ո՛հ, կայծ տըւէք ինձ, կայծ տըւէք ապրիմ...
Ի՜նչ, երազէ վերջ գրկել ցուրտ շիրիմ...
Այս ճակատագիրն ի՜նչ սեւ է Աստուած,
Արդեօք դամբանի մրուրով է գծուած...
Ո՛հ, տըւէք հոգոյս կրակի մի կաթիլ,
Սիրել կ'ուզեմ դեռ, ապրիլ ու ապրիլ,
Երկնքի աստղեր, հոգուս մէջ ընկէք,
Կայծ տըւէք, կեանք՝ ձեր սիրահարին հէք։,,

Բայց երկնքի աստղերը ցաւագինօրէն խուլ են դէպի երկրի վրայ տառապող բանաստեղծի սրտամորմոք աղերսանքները։ Եւ բանաստեղծը

մահուան յուսահատութեան մէջ թուլացած եւ ուժասպառ տրամադրութեամբ գրում է.

"Գարունն ոչ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ոչ երկնի շողերն ժրպիտ մ՚ինձ չեն տար.
Գիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վրեր.
Կըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար նա դըրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն էլ կ՚ուզէ երկու բան.
Նախ կեանքը, վերջը լացող մ՚իր վրան:"

Այս ընկճուած եւ ցրիւ տողերից յետոյ՝ Պետրոս Դուրեան վերյիշում է իր ողջ կեանքը, կենդրոնացնում է իր տպաւորութիւնները եւ տասը հետեւողական տողերի մէջ, միանգամայն կապակից հոգեբանութեամբ, ներկայացնում է այն, ինչ որ ունեցաւ իր Նորատի հոգին եւ ինչ որ արտասուալի կերպով զուր, զո՛ւր եղաւ: Այս ափսոսանքի պարբերութիւնը առանձին վերցրած մի գեղեցիկ բանաստեղծութիւն է, գրուած անասելի դառնութեամբ եւ հաղորդիչ անկեղծութեամբ, որ պատմում է կեանքի զարմանալի նանրութիւնը, սիրոյ ցաւագին անցաւորութիւնը եւ որ պատճառում է խորին տրտմութիւն:

"Ի զո՛ւր գրեցին աստղերն ինձի սէր
Եւ ի զո՛ւր ուսոյց բըլբուլն ինձ սիրել.
Ի զո՛ւր սիւգեր սէր ինձ ներշնչեցին
Եւ զիս Նորատի ցուցուց ջինջ ալին,

Ի զո՛ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերեւք հարին երբէք շունչ,
Որ չընխռովեն երազքըս վսեմ,
Թոյլ տըւին որ միշտ ըզնէ երազեմ,
Եւ ի զո՛ւր ծաղկունք փրթիթներ զարնան
Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան..."

Իր վերջին օրերին, իր գերեզմանի առջեւ այս բոլորը զարհուրելի կերպով զուր են երեւում նրան: Ոչինչ, ոչինչ չկայ բանաստեղծի շուրջը, որ մի փոքրիկ իմաստ տայ այդ անցածդարձածին, որ կեանքի վերջին քաղցրութիւնը հաղորդէ նրան եւ որ մահուան մթութեան մէջ մի յետին ցոլք առաջացնի:

Եւ բանաստեղծը մի դառնագին բացականչութեամբ ձեւակերպում է իր տրամադրութիւնը, ու այն գեղեցիկ տպաւորութիւնները, որ նա ունեցել է Նորատի հասակում՝ համարում է միմիայն ծաղր:

Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են:

Աստղերը, ալիքը, թաւուտքները, տերեւները, գարունները — բոլորը, բոլորը միմիայն ծաղրել են ողբերգական բանաստեղծին:

Նրա կեանքը ծաղր է եղել ողջ:

Եւ ոչ թէ միայն նրա կեանքը, այլ ամբողջ աշխարհը ծաղրի ստեղծագործութիւն է բանաստեղծի համար, Աստծու ծաղրը: Այս մռայլ փիլիսոփայութեամբ նա եզրափակում է

իր խօլական ու տարերային բանաստեղծութիւնը.

Աստուծոյ ծաղր է աշխարհն ալ արդէն...

Պետրոս Դուրեանի "Տրտունջքը" հոգեկան բարդ ու մրրկալից կեանքի գեղարուեստական արտայայտութիւն է: Զգացումների, մտածութիւնների, կրքերի այն կեանքը, որ նրա մէջ գործում է մահուան առջեւ՝ մի միապաղաղ ու հանդարտ կեանք չէ, այլ համագումարն է տարբեր վայրկեանների, տարբեր խոհերի եւ տարբեր տրամադրութեան: Մենք աշխատեցինք վերեւի տողերի մէջ այդ տարբեր կէտերը ցուցահանել եւ նրանց առանձնայատկութիւնները բնորոշել, որոնք որոշ տեսակէտով բանաստեղծական ամբողջութիւն են ներկայացնում: Բայց բոլոր այդ տարբեր վայրկեանները մեկուսացած չեն բանաստեղծի հոգում, այլ շղթայուած են նրա հիմնական տրամադրութեան հետ, որ ինքը որակել է Տրտունջ բառով: Հոգեբանական եւ տրամաբանական այս կապակցութիւնը զարմանալի արուեստով դուրս է եկած նրա բանաստեղծութեան մէջ, որ երեւոյթապէս կարող է հատուածական տպաւորութիւն թողնել, բայց որ իրապէս մի ամբողջական, հաւաքական, կենդրոնացած ստեղծագործութիւն է:

Հիւանդ, յուսահատ, ցրուած բանաստեղծը կարողացել է իր հոգեկան ապրումի ու նրա գեղարուեստական վերարտադրութեան մէջ

չափազանց կարեւոր յաջորդականութիւն եւ հոգեբանական ներքին կապ պահպանել:

Այս յաջորդականութեան մէջ նա իւրաքանչիւր վայրկեանի համար ստեղծել է համապատասխան ձեւ, երբեմն խիզախ եւ որոտալից, երբեմն մեղմ ու թախծալից, երբեմն պատմողական, երբեմն դրամատիք, երբեմն իմաստասիրական — բայց միշտ գեղարուեստական, անկեղծ եւ անմիջական:

"Տրտունջքի" բուռն ու ցասումնալից եւ հանդարտ ու ողբալից տողերը, որոնք փոփոխակի յաջորդում են միմեանց — վերջանում են այն մռայլ տրամադրութեամբ, որ իբր սինթէզ եւ եզրակացութիւն կարելի է դիտել եւ որի համաձայն՝ կեանքը ծաղրել է բանաստեղծին եւ աշխարհն էլ Աստծու ծաղրն է ինքնին:

Պետրոս Դուրեանի "Տրտունջը" ոչ միայն իր բանաստեղծութիւնների մէջ ամենէն ուժգին եւ ամենէն խորին էջն է, այլ եւ մեր բանաստեղծական գրականութեան շքեղ քերթուածներից մէկն է, որ յիսուն տարի յետոյ եւս յուզում է ընթերցողին իր զարմանալի ինքնուրոյնութեամբ եւ իր ողբերգական գեղեցկութեամբ:

8. Զղջումի երգը:

Իր Տրտունջի տրամադրութեան վրայ չի կարողանում մնալ հիւանդ բանաստեղծը: Լարուած եւ գանգատագին դրութիւնը տեղի է

տալիս Պետրոս Դուրեանի հոգում, ուր ստեղծ-
ւում է հետզհետէ համակերպումը։ Այս հո-
գեբանութիւնը մարդկային կեանքի ամենադառն
երեւոյթներից է, մարդկային կեանքի, որի դի-
մադրութիւնը արտաքին ոյժերի դէմ աւա՜ղ
յարատեւ չէ։ Բնութիւնը սահմանել է մի ան-
խորտակելի կանոն — մահի անխուսափելիու-
թիւնը — որի առջեւ փշրւում են ամենաուժեղ
անհատականութիւններն անգամ։

Պետրոս Դուրեան մարդկային հոգի է,
մարդուս ճակատագրական տկարութիւններով։

Մի գերագոյն վայրկեանի մէջ տեսնելով
իր առջեւ խուսափող կեանքը եւ իր երիտա-
սարդական երազների խորտակումը՝ նա խրոխ-
տացել էր բնութեան դէմ, անձնաւորելով այդ
բնութիւնը միստիքական աստուածութեան մէջ։

Բայց այս ըմբոստացումը անփոփոխելի
ճակատագրի դէմ՝ կանգ է առնում իր շարժ-
ման մէջ, թուլանում է, ընկնում է։ Ֆիզիքա-
կան ցաւերի ենթարկուած եւ անզօրացած բա-
նաստեղծը մեղմանում է հոգեկան բուռն գոր-
ծողութիւնից յետոյ, ինչպէս մեղմանում է ով-
կիանոսը մռնչացող մրրիկներից յետոյ։

Իր փոթորկալի տրամադրութեան մէջ նա
արտադրել էր տարերային "Տրտունջքը", իր
մեղմութեան եւ անկման ժամին նա արտա-
դրում է "Զղջումը"։

Այս փոքրիկ բանաստեղծութիւնը, որ նա
իր մակագրութեան համաձայն գրում է "օր մը
վերջը", շատ բնորոշ պարագաներ է պարզաբա-

նում։ Այդտեղ կարելի է տեսնել նրա կեանքը
մահից առաջ, պատմուած մի քանի թախծալից
տողերի մէջ։ Եթէ գիտութեան տեսակէտով
այդ փոքրիկ բանաստեղծութիւնը կենսագրա-
կան նշանակութիւն ունի, ապա արուեստի տե-
սակէտով՝ նա հոգեբանական նուրբ արժէք
ունի։ Մէկ քանի տողերի մէջ Պետրոս Դուրեան
կարողացել է արձանացնել մի հոգեկան ներքին
կեանք, որ յախուռն շարժումներից յետոյ հան-
դարտւում է, բայց այդ հանդարտութեան մէջ
շարունակում է խորապէս տառապել եւ ու-
ղեւորուել դէպի գերեզման։

Ինչ որ մանաւանդ նշանակալից է այդ
բանաստեղծութեան մէջ, այն է, որ Պետրոս
Դուրեան այնտեղ վերլուծում է զղջումի ձեւով
իր երեկուայ որոտալից հոգեբանութիւնը։ Այդ
բանաստեղծութիւնը ամենագեղեցիկ քննադա-
տական-բացատրական էջն է Տրտունջի հոգե-
բանութեան, որ տալիս է ինքը բանաստեղծը
այնքան նուրբ գեղարուեստական ձեւով։ Նրա
արտայայտութեան համաձայն՝ Տրտունջքը գրել
է նա այն ժամանակ, երբ պաղ քրտինքի մէջ
"սեւ մրափ մը" կ'առնէր, երբ իր բանաստեղծի
ճակատի վրայ մահուան "դալկութիւն մը կը
պլպլար" եւ երբ իր ողբերգական հոգին "մա-
հու թռիչ մը" ունէր։

"Երէկ երբ պաղ քրտանց մէջ
Սեւ մրափ մը կ'առնէի,
Եւ թոշնած զոյգ մը վարդեր

Այտերուս վրայ կ'այրէին,
Անշուշտ Ճակտիս վրայ մահու
Դալկութիւն մը կը պլպլար,
Եւ մահու թոիչ մ'ունէի...,,

Ապա աւելի եւս բացատրելով տրտունջի տրամադրութիւնը՝ Պետրոս Դուրեան ներկայացնում է մի հոգեբանական զօրաւոր գործօն, որ այնքան ուժեղ զարկ է տուել Նրա խելայեղ բողոքին։ Այս հոգեբանական գործօնը եղել է Պետրոս Դուրեանի թանգագին մայրը, որի հետ Նա կապուած էր — ինչպէս տեսանք կենսագրութեան մէջ — իր մանկական տպաւորուող տարիներից եւ որի բարոյական շունչի մէջ մեծացել է բանաստեղծը։ Մայրը, չնայելով իր սեռին եւ իր քնքշութեան, չնայելով այնքան ճախորդութիւններին եւ դժբախտութիւններին, լացող էակ չէ եղել, որդու պէս "յատակն ուռնենալով իր փրփուրները"։ Եւ սակայն իր բանաստեղծ զաւակի հիւանդութեան առջեւ, անհուն ցաւի տակ ճնշւում, խորտակւում եւ լաց է լինում։ Այս արտասուքը տեսնում է բանաստեղծը.

"Բացի աչերս խոնջած,
Մօրս արտասրրն տեսի...,,

Զգում է Նրա խորին ցաւը.

"Մայրըս անհուն ցաւ մ'ունէր,
Այն սեւ ցաւը ես էի...,,

Եւ Պետրոս Դուրեան չի կարողանում տանել այս "անհուն ցաւը", զլուխը փոթորկում է եւ սրտի հեռաւոր խորքերից դուրս է ժայթքում այն սեւ հեղեղը.

"Ա՛հ, զլուխս փոթորկեց,
Այն սեւ հեղեղն տրւի դուրս...,,

Եւ որովհետեւ անողոքելի աղէտի համար Նա պատասխանատու էր համարել "ոխերիմ Աստծուն", եւ ծառացել էր Նրա դէմ ըմբոստութեան կոչերով — այժմ, իր մեղմութեան ժամին ներումն է աղերսում Նրանից, որովհետեւ մօր, տանջուած մօր արտասրն էր տեսել.

"Ո՛հ ներէ ինձ, Աստուա՛ծ իմ,
Մօրս արտասրը տեսի...,,

Ահաւասիկ Պետրոս Դուրեանի զղջումի հոգեբանութիւնը։

Ինչ որ հետաքրքրական է սակայն գրականութեան համար, եւ ինչ որ խորապէս նշանակալից է Նրա անհատականութեան մէջ — այն սեւ հեղեղն է, որ բանաստեղծը դուրս է տուել մի զօրաւոր վայրկեանում, այսինքն այն ժամին, երբ ինչպէս ինքը բանաստեղծն է արտայայտում՝ զլուխը փոթորկուած էր։

Որովհետեւ արուեստը, գրականութիւնը, գեղեցիկ յղացումները, ինչպէս եւ մեծ գործերը այն ժամանակ են ստեղծւում, երբ մարդկային էութեան մէջ մրրիկներ են առաջանում եւ երբ փոթորկւում է միտքը...

VIII.

ԴՈՒՐԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏ

Ոչ մի կասկած չկայ, որ ամեն մի բանաստեղծ, որքան էլ անհատական կամ քնարական անունը կրի, իր ժամանակակից կեանքի արձագանգն է։ Ոչ մի կասկած չկայ, որ նրա տրամադրութիւնը, որքան էլ անձնական լինի, սոցիալական կամ հաւաքական մեծ տրամադրութեան մի մասն է։

Եւ այս՝ ամենից առաջ այն պատճառով, որ մարդս սոցիալական էակ է, եւ նրա զգացումներն էլ այդ հիմնական աղբիւրից են առաջանում։

Անկախ այս հանգամանքից՝ բանաստեղծ լինելու համար անհրաժեշտ է բանաստեղծական ներքին տրամադրութիւն եւ այդ տրամադրութիւնն արտայայտելու գեղարուեստական կարողութիւն։

Արտայայտելու միջոցները զանազանակերպ են — լեզու, ոճ, պատկերներ, երաժշտութիւն — որոնք միացած են միեւնոյն հոգեբանական ամբողջութեան մէջ, քանի որ նրան գործադրողը միեւնոյն բանաստեղծական անձնաւորութիւնն է։

Այս ուսումնասիրութեան ընթացքում նկատեցինք, որ Պետրոս Դուրեան ունի ոչ միայն ներքին խորունկ տրամադրութիւն, այլ եւ այդ տրամադրութիւնը արտայայտելու ուժեղ ընդունակութիւն։

Եւ այս կրկնակի յատկութիւնների շնորհիւ նա բանաստեղծ է, տաղանդաւոր բանաստեղծ։

Ահաւասիկ կարեւորը։

Իբրեւ բանաստեղծ՝ Պետրոս Դուրեան գործ է դնում մի շարք արտայայտութեան միջոցներ, որոնց մասին կուզէինք մի քանի խօսք ասել եւ դրանով ամփոփել նրա բանաստեղծական գործը։

1. Լեզուն եւ ոճը։

Բանաստեղծութեան համար առաջնակարգ կարեւորութիւն ունեցող խնդիր է լեզուի խնդիրը։ Իր տեղում տեսանք, որ Պետրոս Դուրեան 60—70 ական թուականներին համարձակ կերպով մօտեցաւ այդ խնդրին, գրելով աշխարհաբար այն ժամանակ, երբ նրա ժամանակակից միւս գրագէտները մեծ չափով թաղուած էին գրաբարի մէջ։ Պետրոս Դուրեանի բանաստեղծական գործի համար այս պարագան վճռական նշանակութիւն ունեցաւ։ Եթէ նա չունենար նոր արուեստագէտի ճաշակ ու հոտա-

ռութիւն եւ գրական մարզանքներ անէր գրաբարեան մթնոլորդում — ապահովաբար նրա բանաստեղծութիւնը չէր ունենայ այն ոյժը եւ անմիջականութիւնը, ինչ որ ունի այժմ։ Պետրոս Դուրեան զգաց, որ նոր ժամանակի բանաստեղծութիւնը արժէք եւ իմաստ կ'ունենայ միայն նոր լեզուի շրջանակի մէջ։

Այս գիտակցութիւնը նրա արուեստի հիմնական տարրերից է։

Սակայն այն լեզուն, որով նա սկսեց գրել 60—70 ական թուականներին զարգացած եւ մշակուած լեզու չէր։ Բանաստեղծական գործի ամբողջ արժանիքն այնտեղ էր, որ նա ձեռք առաւ այդ նոր, կենդանի, բայց անմշակ լեզուն։ Բանաստեղծները կամ գրագէտներն առհասարակ լեզու չեն ստեղծում — նրա ստեղծողը ժողովուրդն է — բայց բանաստեղծները մշակում են ժողովրդի ստեղծած լեզուն, ձեւաւորում են, որոշ գոյն են տալիս գեղարուեստական բարձր նիւթերով։

Բանաստեղծն այս դերը կատարում է գրեթէ ամեն ժամանակ, լեզուի զարգացման բոլոր շրջաններում։ Բայց նրա դերը առանձնապէս կարեւոր է այն ժամանակ, երբ լեզուի պատմութեան ընթացքում նոր շրջան է սկսւում։

Պետրոս Դուրեան այսպիսի մի նոր շրջանի արտայայտութիւն է։ Իր բանաստեղծական գործով նա խոշոր զարկ տուեց արեւմտահայ աշխարհաբարին, եւ նրանով՝ նոր հայերէնին ընդհանրապէս։

Ապրելով փոխանցման շրջանում՝ նրա բանաստեղծական երկը կրում է սակայն հին լեզուի նշանակալից ազդեցութիւնը։ Նրա բանաստեղծութիւնների մէջ յաճախ զգացւում է գրաբարի կապանքն ու կաշկանդումը։ Նա ունի անհարթ տողեր, ունի արտայայտութիւններ, որոնց վրայ նկատելի է ճնշում, ծանրութիւն, բռնութիւն։ Մեր աշխատութեան մէջ բերուած հատուածները ընդհանրապէս ազատ են այդ յատկութիւններից։ Բայց միւս բանաստեղծութիւնների մէջ այդ յատկութիւնները զգալի չափով ներկայ են։

Ընայելով այս բնական ու անխուսափելի վրիպումներին, Պետրոս Դուրեան կարողացել է ազատ եւ համարձակ շարժել հայերէն լեզուն, կերտել նոր արտայայտութիւններ, ստեղծել նոր ձեւեր, հին բառերը գործածել նոր գունաւորումով եւ միանգամայն նոր տրամադրութեամբ։

Դիւրին բան չէ անշուշտ բանաստեղծական այնքան խորին զգացումներ արտայայտել մի լեզուով, աւելի շուտ մի բարբառով, որ դեռ գրական մշակութեան բովից չէր անցել, որ խառն էր ռամկական, յաճախ ազաւաղեալ տարրերով։ Բանաստեղծը պիտի կարողանար այդ խառնակ լեզուն զտել, հանել նրա միջից աքանչելի նիւթերը, ընտրել աղնիւ մասերը — եւ կենդանի, գեղեցիկ ամբողջութիւն կառուցէր։

Պետրոս Դուրեան ունեցել է կարեւոր վրիպումներ այս դժուարին աշխատանքի մէջ։

Նրա գործածած ձեւերից եւ արտայայտութիւններից շատերը այսօր մեզ թւում են անյաջող, թոյլ, նոյն իսկ տգեղ — բայց շատ շատերն էլ մինչեւ այժմ պահպանել են բացառիկ ոյժ, զարմանալի կենսունակութիւն, խորութիւն, գեղեցկութիւն։

Պետրոս Դուրեան իր բանաստեղծական գործի այդ արտակարգ արժանաւորութիւններովն է մեծ եւ նրանով է ապրում մինչեւ այսօր։ Շենք ուզում կրկին անգամ հատուածներ մէջ բերել բանաստեղծի գործերից՝ ցոյց տալու համար այս մտքի ստուգութիւնը։ Բաւական է նորէն բաց անել մեր առաջ բերած էջերը "Տրտունջք", "Թրքուհին", "Սիրել", "Դրժել", "Սեւ Սեւ", "Հեծեծմունք", "Լճակ", "Հծծիւնք" եւ միւս բանաստեղծութիւններից՝ նկատելու համար, որ Պետրոս Դուրեան իր անկատար, տկար, կաղէկաղ ընթացող տողերի հետ միասին՝ ունի իրաք այնպիսի պայծառ եւ ալնիւ էջեր, որոնք կարող են բանաստեղծական կատարելութիւն դիտուել։

Այսպէս կարող են դիտուել մանաւանդ ոճի կողմից, որ այնքան ինքնուրոյն է Նրա բանաստեղծութիւնների մէջ։

Եթէ լեզուն փոխանցման ժամանակի մէջ գտնուելով ունի զանազան անկանոնութիւններ — ոճը, որ բանաստեղծի ներքին կեանքի արտայայտութիւնն է, ուժեղ է, պատկերալից, երաժշտական, լուրջ, խորունկ եւ իմաստալից։

Եւ այսպէս է մանաւանդ, եթէ նկատի ունենանք, որ այդ ոճը տակաւին շատ երիտասարդ հեղինակի գործ է։

Պետրոս Դուրեանի լեզուի եւ ոճի գլխաւոր թերութիւնները առաջանում են նախ այն հանգամանքից, որ նա գրում է նոր գրական լեզուով, եւ յետոյ նրանից, որ տակաւին սկսնակ գրող է։ Ժամանակի ընթացքում, մէկ կողմից աշխարհաբարի զարգացման հետ միասին, միւս կողմից գրութեան վարժութիւն ձեռք բերելով — Պետրոս Դուրեանի լեզուն եւ ոճը ապահովաբար շատ պիտի կատարելագործուէին։ Եւ այս կարելի է ասել ոչ միայն լեզուի եւ ոճի վերաբերմամբ, այլ եւ ամբողջ արուեստի մասին ընդհանրապէս։

Որովհետեւ եթէ բանաստեղծական խորքը առաւել կամ նուազ բնածին կարողութիւն է եւ կամ սկզբնական տարիների միջավայրի արգասիք — արուեստը կամ աւելի ճիշտ՝ արուեստի տեքնիկը մեծ չափով կապուած է մշակութեան, վարժութեան եւ ժամանակի հետ։

3. Պատկերներ եւ երաժշտականութիւն։

Պատկերը եւ երաժշտականութիւնը բանաստեղծական արուեստի գլխաւոր տարրերից են։ Բանաստեղծները ազդում են մարդկանց հոգիների վրայ առաւելապէս տեսողական եւ լսողական զգայարանների միջոցով։

Մի որ եւ է զգացում հաղորդելու համար՝ շատ յաճախ երկու տողով գծուած պատկերը տալիս է անհամեմատ աւելի բան, քան կարող է տալ մանրամասն պատմութիւնը։

Բայց պատկերներն ունին պայմաններ, որ տաղանդաւոր բանաստեղծը պէտք է հասկանայ, զգայ եւ ճիշտ տեղին իրագործէ։

Ի՞նչպէս պէտք է լինի պատկերը, որպէս զի կարողանայ ազդել մարդկանց վրայ, ուրիշ խօսքով՝ ի՞նչպիսի պատկերն է բանաստեղծական։

Գեղարուեստի տեսութեան բարդ խնդիրներից է այս խնդիրը, եւ անկարելի է նրան առարկայական, գիտական ճշգրտութեամբ պատասխան տալ։

Բայց վերջապէս պէտք է լինի մի չափ, մի տեսակէտ, որով մենք կարողանանք զգացումների եւ հոգեկան երեւոյթների խառնարանի մէջ առանց մեծ սայթաքումների առաջ գնալ։

Մեր հայեացքով՝ պատկերը ամենից առաջ պէտք է լինի պարզ։

Բայց ի՞նչ ենք հասկանում պարզ խօսքով եւ ո՞րն է այդ գաղափարի ստոյգ սահմանումը։

Պարզ ասելով պէտք է հասկանալ այն նիւթը, որ տալիս է մեզ ոչ թէ քիչ բան, որ գծում է ոչ թէ մերկ պատկերներ, այլ որ տալիս է կարեւորը, հարկաւորը։ Պարզ չէ նշանակում բնաւ պակաս, անկատար, զուրկ անհրաժեշտ զարդարանքից, զուրկ այսպէս ասենք՝ մնից եւ արիւնից։ Պարզ նշանակում է՝ աղատ

աւելորդից, աղատ այն բոլոր տարրերից, որոնք բեռնաւորում են նիւթը եւ որոնք ոչինչ չեն տալիս նրան։ Այսպիսի դէպքում՝ այդ տարրերը միայն ինաստակար կը լինին պատկերի համար, ինչպէս ինաստակար են նրանք լեզուի մէջ, ինչպէս ինաստակար են օրգանական կեանքում։

Կարո՞ղ էք լաւ լեզու համարել այն լեզուն, որի մէջ բառեր կան գործածուած առանց որ եւ է միտք արտայայտելու։ Կամ հնարաւո՞ր է բնականոն մարմին համարել այն մարմինը, որի մէջ տարրեր կան առանց որ եւ է պաշտօնի։

Այսպէս։ Մեղանում պարզ յատկութեան մասին շատ անճիշտ ըմբռնում կայ։ Յաճախ այդ բառով մենք հասկանում ենք որոշ աղքատութիւն, մինչեւ իսկ որոշ պակասաւորութիւն, ինչ որ բացարձակ թիւրիմացութիւն է։

Պարզ արուեստը միայն պարզ հոգիներ չէ արտայայտում։ Ամենատեսակ բարդ հոգի եւ ամենատեսակ խորունկ գոյութիւն կարելի է եւ պէտք է պարզ ձեւով արտայայտել։

Ահա արուեստի գաղտնիքը։

Մարդկային հոգեկան կեանքի հիմնական օրէնքներից է այս, որ արուեստի համար ուղեցոյց պիտի լինի եւ որ է մեծագոյն արուեստագէտների մօտ։

Շէքսպիր ամենաբարդ հոգեբանութիւնը ստեղծել է զարմանալի պարզ արուեստով, ինչպէս եւ Տոլստոյ տուել է այնքան խորունկ բնաւորութիւններ լուսաւոր, պարզ միջոցով։

Հնագոյն ժամանակների էպիքական բանաստեղծութիւնը, օրինակի համար Հոմերոս, օրուայ պայծառութեամբ է ներկայացուած։ Ինչպէս եւ Նոր ժամանակների քնարերգութիւնը, օրինակի համար Շելլի, Պուշկին, Հայնէ ամենանուրբ եւ ամենախոր զգացումները հաղորդել են յաճախ ամենապարզ ձեւով։

Մեր գրականութեան մէջ Աւետիք Իսահակեան եւ Յովհաննէս Թումանեան շատ նուրբ եւ շատ խորին հոգի են արտայայտել պարզ արտաքինի տակ։

Այսպէս է ճշմարիտ բանաստեղծութիւնը։

Պետրոս Դուրեան այդ ճշմարիտ բանաստեղծների տեսակից է։

Իր արուեստի մէջ Պետրոս Դուրեան նկարչական տիպի բանաստեղծ չէ ընդհանրապէս։ Բայց հակառակ այն պարագային, որ նկարչական գիծը նրա մէջ տիրապետող չէ — Դուրեան ունի շատ բնորոշ եւ նրբօրէն գեղարուեստական պատկերներ։ Երբեմն մի քանի խօսքով մի ամբողջ պատկեր է գծում, արտայայտիչ, բովանդակալից, հաղորդական։

Իր համբոյրի ժամը նա դնում է հետեւեալ պատկերի մէջ.

"Համբոյր մ'առի ներանէ,
. . . . . .
Երբ կարմիր շողք մարէին,
Հորիզոնին վերեւի։"

կամ՝

"Եէ զիս իր քով նստեցուց
Գորգի վրայ դալարեայ,
Հուսկ ճաճանչ մը պըլպըլար
Ներա դիմացը վրայ։"

Եւ կամ հետեւեալ երկտողը, որ այնքան գեղեցիկ ու յուզումնական պատկերով արտայայտում է այն ժամը, երբ հորիզոնը մարում է եւ երբ սկսւում է աստղազարդ, պայծառ գիշերը.

"Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փթթեցան..."

"Մնաս բարեա՛" բանաստեղծութեան մէջ երկու տողով նկարում է առաւօտեան այն վաղ ժամը, երբ դեռ մթնաւուն է աշխարհը եւ երբ շող ու շաղ է ծաւալում դաշտերի վրայ.

"Առտու մը դեռ մըթնշաղ՝
Կը ծաւալէր շող ու շաղ։"

"Լճակ" բանաստեղծութեան մէջ նկարում է մեղմ, երազական լիճը, որ կարծես թէ զմայլում է երկնի կապոյտով եւ այն լուսափթիթ ամպերով, որ նման են լճի փրփուրին.

"Եւ կամ միթէ կզմայլին
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նըմանին փըրփուրիդ։"

"Սեւ Սեւ" բանաստեղծութեան մէջ նկարում է այն դաժան վայրկեանը, երբ դերեզմանափորները թիերով հող են թափում դագաղի վրայ, արագ, յանկարծական, անսիրտ կոշտութեամբ.

"Եւ լսեցի յայնժամ թի թի
Սեւ սեւ հողեր կոշտ թնդեցին..."

Պետրոս Դուրեանի պատկերները ռոմանտիք դպրոցին յատուկ ճչացող եւ թանձր գոյներով չեն ողողուած, ուռուցիկ չեն, ծաւալուն չեն, այլ հաւաքուած են, ամփոփ են եւ ունին մեղմ ու խորացած գոյն։ Իր պատկերների մէջ նա աւելի երգող է, հոգեբան, իմաստասէր, քան քանդակագործ կամ նկարիչ։ Բայց եւ այնպէս, այն մի քանի օրինակները, որ մենք առաջ բերեցինք վերեւի տողերի մէջ՝ յայտնում են որոշապէս, որ Պետրոս Դուրեան նաեւ արուեստի այդ ուղղութեամբ ունի նուրբ եւ ընտրուած ձեւեր։

—

Եթէ Պետրոս Դուրեան արտաքին, շօշափելի պատկերներով ճոխացած չէ, ապա նա հարուստ է ներքին ձայներով, երգով, երաժշտական տրամադրութեամբ եւ հոգեբանութեամբ։ Նրա ստեղծած գեղեցիկ պատկերները կարճատեւ են, տալիս են մեղ վաղ անցնող շնորհի բոլոր ողբերգական հրապոյրը։ Բայց այդ

շնորհները եւ գեղեցկութիւնները չեն կորչում, այլ դառնում են ուրիշ տեսակ պատկերներ, աւելի աննիւթական, աւելի անշօշափելի, երբեմն երեւակայական ու ստեղծագործական, բայց միշտ խօսող մարդուս հետ, հաղորդիչ ու յուզումնական։

Այն ընդհանուր դիտողութիւնները, որ մենք ներկայացրինք պատկերի սահմանման նկատմամբ, հոգեբանօրէն վերաբերում են նաեւ երաժշտութեան։ Ինչպէս պատկերը պիտի ազատ լինի աւելորդից եւ խճողումից, այնպէս էլ երաժշտութիւնը պիտի ազատ լինի խառնակումից։ Պարզութիւնը պատկերի մէջ միեւնոյնն է էապէս, ինչ որ չափը երաժշտութեան մէջ։ Եթէ պատկերը աւելորդ գծերով եւ գոյներով ծանրաբեռնուած լինելու պարագային դառնում է քաօս, երաժշտութիւնն էլ աւելորդ ձայներով կամ վանկերով ծանրաբեռնուած լինելու դէպքում դառնում է ժխոր։

Այսպէս, հոգեբանական եւ գեղարուեստական հիմքը երկու արուեստի մէջ էլ համանման է։

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնները թէ պատկերի եւ թէ ձայների տեսակէտով բղխում են միեւնոյն ներքին աշխարհից, եւ հետեւաբար ընդհանուր հոգեբանութիւնը միեւնոյնն է։

Իր նամակներից մէկի մէջ Պետրոս Դուրեան գրել էր, որ իր կեանքը երգ եղաւ։ Նրա

բանաստեղծութիւնները այդ կեանքի գեղարուեստական արտացոլումն են, եւ նոյնպէս երգ են։

Այս երգի մէջ, ինչպէս եւ նրա բանաստեղծական ընդհանուր գործի մէջ կան անհարթութիւններ, վրիպումներ, աղաւաղումներ։ Գրաբարից մնացած դժուարահնչիւն եւ օտարոտի խօսքերը, բաղաձայն գրերի կուտակումը յաճախ աղարտում են այդ երգի պարզութիւնը։ Ցանգերը շատ դէպքերում բացակայում են կամ զարմանալի կերպով աղքատ են, ոտանաւորի տողերը յաճախ լաւ չեն բաժանուած, հատածները (ցէզուրաները) կաղում են շատ դէպքում։

Բայց այս բոլոր թերութիւնները առաջանում են մեծ մասամբ այն ընդհանուր պատճառից, որ ակնարկեցինք լեզուի մասին խօսելիս։ Այսինքն, նոր մշակուող գրական լեզուի անխուսափելի արձագանգն են նրանք եւ սկսնակ գրողի բնական անվարժութիւնները արուեստի մէջ։

Եւ սակայն չնայելով այդ տեքնիկական թերութիւններին, որոնք մեծ մասամբ արտաքին նշանակութիւն ունին, Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնը ներքնապէս երաժշտական է եւ զարմանալի կերպով ներդաշնակ։

Նրա բանաստեղծութեան այս յատկութիւնը կարելի է տեսնել անխտիր շատ էջերի վրայ։ Այսպէս օրինակի համար։

«Բոյլ մը նայուածք, փունջ մը ժպիտ,
Քուրայ մը խօսք դիւթեց իմ՝ սիրտ։»

Կամ՝

«Որքան ունիս դու ալի,
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի քիւր։»

Եւ կամ այս մրմնջացող տողերը՝

«Երբ աստղալոյց գիշեր է զով
Շրջազգայիս Պաղլաբ-Պաշի,
Գիտեմ թէ սիրտս որչափ ժաշի
Շրջազգեստիդ լոկ շրշիւնով։»

Կամ այս երաժշտական երկտողը, որ միաժամանակ հրաշալի պատկեր է՝

«Առտու մը դեռ մըթնշաղ.
Կը ծաւալէր շող ու շաղ...»

Կամ վերջապէս՝

«Աչերդ սիրոյ ատրուշան
Մատներդ էին գիրգ շուշան...»

Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւնների մէջ այս գեղեցիկ եւ ներդաշնակ էջերը երաժշտական ընդհանուր մթնոլորտ են ստեղծում։

Նրանք հոսում են բանաստեղծի ներքին էութիւնից, միանգամայն առանց ճիգի, առանց որոնման, կատարելապէս ինքնաբուխ կերպով։

Այս յատկութիւնը բնորոշ է նրա բանաստեղծութեան համար ոչ միայն հնչական, ձայնական տեսակէտով, այլ եւ աւելի ընդհանուր տեսակէտով։ Իբրեւ նկարող, պատմող, երգող, ողբերգող, մտածող, հոգեկան ուժգին դրամաներ ներկայացնող՝ Պետրոս Դուրեան միշտ անմիջական է եւ միշտ ինքնաբուխ։

Այս յատկութիւնները միացած նրա գեղարուեստական եւ հոգեբանական ներքին էութեան՝ Պետրոս Դուրեանին դարձնում են տաղանդաւոր բանաստեղծ, ճշմարիտ բանաստեղծ։

—

Մեր աշխատութեան նախորդ էջերում հոգեբանական այդ ներքին էութիւնը եւ նրա գեղարուեստական արտացոլումը մեր ըմբռնած ձեւով վերլուծել ենք արդէն։ Այս վերջին երկու խնդիրների քննութիւնը մենք անհրաժեշտ նկատեցինք՝ Պետրոս Դուրեանի բանաստեղծական ընդհանուր դէմքը ամբողջացնելու եւ նրա գործը լրացնելու համար։

Անշուշտ, ինչպէս ամեն գրագէտի գործ, այնպէս էլ Պետրոս Դուրեանի գործը կարելի է դիտել զանազան տեսակէտներով եւ զանազան ուղղութեամբ։ Մենք ընտրեցինք այն ճանապարհը, որ մեզ թւում էր աւելի իրական եւ

որ մեր հայեացքով գրագէտին կարող է լուսաբանել ոչ միայն իբրեւ անհատական հոգի, այլ եւ որոշ ժամանակի եւ որոշ միջավայրի սոցիալական արտայայտութիւն։

Գրականութիւնը, ինչպէս եւ պատմութիւնն ու ընկերաբանութիւնը, անկարելի է զատել այդ մթնոլորդից։

Պետրոս Դուրեան ծնուելով մի փոխանցման շրջանում, ապրելով մի պատմական ժամանակում — արտայայտեց ոչ միայն իր ներքին մարդը, ոչ միայն իր ներքին ողբերգութիւնը, այլ եւ իր ժամանակը եւ իր շրջանի հաւաքական հոգեբանութիւնը։

Այս յիսուն տարուայ ընթացքում նա ապրեց մեր գրականութեան մէջ եւ ազդեցութիւն ունեցաւ բազմատեսակ գրողների վրայ այդ կրկնակի ուղղութեամբ։

Այժմեան սերունդը բարձր գնահատելով հանդերձ Պետրոս Դուրեանի գրական-բանաստեղծական գործը, գիտակցում է անշուշտ, որ ինքը տարբեր ժամանակի ծնունդ է։

Յիսուն տարի յետոյ ահագին յեղաշրջումներ են տեղի ունեցել թէ եւրոպական կեանքի ու գրականութեան եւ թէ մեր կեանքի ու գրականութեան մէջ։

Պետրոս Դուրեանի գործը խոշոր չափով դարձել է արդէն պատմական գործ։ Այժմեան գրական սերունդը կարդալով եւ սիրելով նրա ողբերգական բանաստեղծութիւնը, ոչ մի վայր-

կեան չպիտի մոռանայ, որ ինքը նոր, յեղաշրջուած ժամանակի ու սոցիալական միջավայրի արտադրութիւն է։

Այդ սերունդը չպիտի մոռանայ, որ եթէ Ֆրանսիական Յեղափոխութիւնը իր ժամանակին աղբիւր դարձաւ գրական գեղարուեստական շարժման, Ռուսաստանի Յեղափոխութիւնն էլ իր կարգին աղբիւր եւ սկզբնաւորութիւն պիտի դառնայ նոր կեանքի ու նոր գրականութեան։

Եւ գիտակցելով այդ՝ պէտք է աշխատի նոր մարդկութեան, նոր իդէալների եւ նոր հոգեբանութեան արտայայտիչ լինել...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՐ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ

ԷՋ

1. Բանաստեղծը 1
2. Կեանքը 10
3. Ազդեցութիւնները 42
4. Ժամանակի գրականութիւնը 66
5. Նամակները 83
6. Թատերական գործը 96
7. Բանաստեղծական գործը 121
8. Դուրեան Արուեստագէտ 170

5ԵՕՇ

«Ազգային գրադարան»
NL0380123

67.053